ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ — ԱԳՐՈՆՈՄԻԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՎԱԶԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

(ՅԵՐԿՐՈՐԴ՝ ԼՐԱՑՎԱԾ ՅԵՎ ԲԱՐԵՓՈԽՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ)

ԳՅՈՒՂՀՐԱՏ 1937 ՅԵՐԵՎԱՆ

634.8 | 662
Կ-73 | [illegible]
[illegible]
1937. 1ր. 80կ.

634.8
Ա-73

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ
ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ՎԱԶԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

(ՅԵՐԿՐՈՐԴ՝ ԼՐԱՑՎԱԾ ՅԵՎ ԲԱՐԵՓՈԽՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ)

A 18600

ԳՅՈՒՂՀՐԱՏ 1937 ՅԵՐԵՎԱՆ

I. ԳԱՂԱՓԱՐ ՎԱԶԻ ԲԱԶՄԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Վազը կարելի յե բազմացնել սեռական և անսեռ (վեգետատիվ) յեղանակով։ Առաջին դեպքում բազմացումը կատարում են սերմերով (կորիզներով), յերկրորդ դեպքում՝ կտրոնների (մատերի), անդալիսի և պատվաստի միջոցով՝ բազմացման այս յեղանակները գործնական այգեգործության համար չունեն միևնույն արժեքն ու նշանակությունը։ Բազմացման այս կամ այն յեղանակի կիրառումը կախված ե կամ վազի մշակության պայմաններից, կամ թե այն նպատակից, վորը տվյալ դեպքում հետապնդում ե տնտեսությունը։

1. ՍԵՌԱԿԱՆ ԲԱԶՄԱՑՈՒՄ

Բազմացման այս յեղանակը գործնական այգեգործության մեջ չի կիրառվում, վորովհետև սերմից չենք ստանում խաղողի այն փոփոխակը, վոր ցանկանում ենք բազմացնել։ Այսպես, յեթե մենք խարջին բազմացնենք սերմերով, ապա չգիտենք թե ինչպիսի նոր փոփոխակ կստանանք և այդ փոփոխակն ինչ հատկություններ կունենա ու ինչ վորակի խաղող կտա։ Ընդհանրապես նկատված ե, վոր սերմերից առաջացած վազերը համեմատաբար ուշ են պտղաբերում և վատ վորակի բերք են տալիս։ Նրանց խաղողի գիլաները կոպիտ են, մանր, հյութով աղքատ և ունեն անդուրեկան համ։ Սակայն սերմերից ստացված վազերի թվում պատահում են և այնպիսի վազեր, վորոնք ունենում են մի շարք կարևոր և մշակության համար արժեքավոր հատկություններ (ֆիլոքսերային դիմացկունությունը, բերքի վորակը

և այլն)։ Այս դեպքում առանձնացնում են այդ վազերը և բազմացնում վեգետատիվ յեղանակով։ Այսպիսով ստանում են թանգարժեք նոր փոփոխակ։ Ուրեմն, վազը սերմերով բազմացնելիս մենք ստանում ենք նոր փոփոխակներ. հենց այս պատճառով ել սերմերով բազմացումը կիրառում են այն դեպքում, յերբ ցանկանում են խաղողի նոր փոփոխակներ ստանալ։ Սերմերից նոր փոփոխակներ ստանալու համար սովորաբար կիրառում են արհեստական, խաչաձ փոշոտում, կամ, ինչպես ասում են, հիբրիդիզացիա, այսինքն՝ մեկ փոփոխակի ծաղիկները փոշոտում են մի այլ փոփոխակի ծաղկափոշով, ստացված սերմերը ցանում են և ապա նոր փոփոխակներ (հիբրիդներ) ստանում։ Ստացված վազերը կոչվում են հիբրիդներ։ Սեռական բազմացման միջոցով (հիբրիդիզացիայի մեթոդով) ստացված են խաղողի հազարավոր նոր փոփոխակներ (հիբրիդներ), վորոնք մշակվում են գլխավորապես Ֆիլոքսերայով վարակված շրջաններում, կամ վորպես պատվաստակալներ, կամ վորպես անմիջական արտադրողներ*)։ Սեռական բազմացման յեղանակը կիրառվում ե գլխավորապես գիտահետազոտական և փորձնական նպատակներով դրված տնկարաններում ու այգիներում։

2. ԱՆՍԵՌ ԿԱՄ ՎԵԳԵՏԱՏԻՎ ԲԱԶՄԱՑՈՒՄ

Սեռական բազմացման հետ համեմատած՝ վեգետատիվ բազմացման յեղանակը գործնական այգեգործության համար ունի խոշոր առավելություններ։ Նախ, վոր վեգետատիվ բազմացման միջոցով մենք ստանում ենք այն խաղողի փոփոխակը, վոր ցանկանում ենք բազմացնել։ Այսպես,

---

*) Անմիջական արտադրող անվանում են վազի այն տեսակը (հիբրիդը), վորը Ֆիլոքսերայով վարակված տեղում, առանց նրա վրա պատվաստ անելու, կարող ե տալ թարմ գործածության կամ վերամշակման համար պիտանի խաղող։ Դրանք ստացվել և ստացվում են ամերիկյան տեսակների և յեվրոպական փոփոխակների հիբրիդիզացիայի միջոցով։

յեթե խարջին բազմացնենք կտրոնների կամ անդալիսի, կամ թե պատվաստի միջոցով, հիմնականում նորից խարջի յենք ստանում, այլ վոչ թե ուրիշ փոփոխակ։ Բացի դրա-նից, վեգետատիվ բազմացման միջոցով անկված այգիները շուտ են սկսում պտղաբերել։ Այդ առավելությունների հիման վրա յե, վոր գործնականում վազը բազմացնում են միայն վեգետատիվ յեղանակով։ Սույն գրքույկի հիմնական նպատակն ե ընթերցողներին ծանոթացնել վազը կտրոնների միջոցով բազմացնելու ձևերի հետ, իսկ այժմ մի փոքր կանգ առնենք անդալիսի և պատվաստի վրա։

ա. Բազմացումն անդալիսի միջոցով

Անդալիս անելը վազերի բազմացման այն ձևն ե, յերբ ցանկացած վազի մեկ, կամ մի քանի կանոնավոր զար-գացած մատերը, առանց վազից անջատելու, պառկեցնում են հողի մեջ և մի-յերկու աչք հողից դուրս թողնելով՝ մատերի վրա ուժեղ արմատներ և լավ շվեր առաջացնում։ Անդալիս արած մատերը հեշտ և հաջողությամբ արմատա-կալում են և լավ զարգանում այն պարզ պատճառով, վոր նրանք սնունդ են ստանում վոչ միայն իրենց որգաննե-րից, այլև մայր վազից։ Վազն անդալիսի միջոցով բազ-մացնում են հետևյալ նպատակներով.

1. այգու շարքերի մեջ յեղած բաց տեղերը լրացնելու համար.

2. այգին խտացնելու համր.

3։ վազերը յերիտասարդացնելու, ինչպես և ցրտա-հարված, անպետքացած վազերը փոխարինելու համար.

4. մեկ փոփոխակը մյուս փոփոխակով փոխարինելու համար.

5. դժվարությամբ արմատակալող փոփոխականերն ու տեսակները, ինչպես, որինակ, ամերիկյան վիտիս բեր-լանդիերի տեսակը, բազմացնելու համար.

6. արմատակալած մատեր ստանալու և նրանց մի նոր տեղ անկելու համար.

Անդալիս անելը վազերը բազմացնելու մի օժանդակ ձև է հանդիսանում, քանի որ համարյա ոչ մի տեղ անդալիսի միջոցով նոր այգիներ չեն գցում։ Անդալիս անում են թե աշնանը և թե գարնանը։ Կան անդալիս անելու տարբեր ձևեր. նայած նրան, թե ինչ նպատակի համար են անդալիս անում, ըստ այնմ էլ կիրառում են այս կամ այն ձևը։ Հիշենք անդալիսի ամենատարածված ձևերը։

Հասարակ կամ պարզ անդալիս.—Մայր վազի՝ բնից սկսած մինչև ցանկացած տեղը փորում են 35—60 սմ խորությամբ և 30—40 սմ լայնությամբ առու։ Վազի բնի մոտ գտնված ամենալավ և յերկար մատերից մեկն զգուշությամբ կռացնում են և պառկեցնում առվի մեջ, ծայրն ուղղելով դեպի վեր, առուն հողով ծածկում։ Հողից դուրս 2 աչք թողնելով՝ մատի մնացած բարակ մասը կտրում են։ Հողից դուրս թողած մատի ծայրը կապում են առվի մոտ տնկած ցցից (տես. նկ. 1)։ Վազի վեգետացիայի սկզբին մատի աչքերը, սկսած մատը վազին միացած տեղից մինչև հողի մեջ մտնելը, հեռացնում են, որպեսզի այդ աչքերն իզուր շվեր չտան և չթուլացնեն անդալիս արած մատը։ Մեկ կամ յերկու տարուց հետո անդալիս արած մատը մայր վազից անջատում են, որից հետո նա աճում է ինքնուրույն կերպով։



Նկ. 1. Հասարակ անդալիս

Չինական անդալիս.—Այս ձևը կիրառում են գլխավորապես հազվագյուտ կամ դժվարությամբ արմատակալող փոփոխակները բազմացնելու նպատակով։ Չինական

անդալիսն անում են հետևյալ ձևով. ցանկացած վազից ընտրում են մի յերկար ու առողջ մատ։ Վազի բնի մոտ հողը 20—35 սմ խորությամբ, 30—35 սմ լայնությամբ և վորոշ յերկարությամբ (1—2 մետր և ավելի, նայած ընտրած մատի յերկարության) լավ փորում են։ Այդ փորած տեղում բաց են անում մոտ 15 սմ. խորությամբ մի առու։ Ընտրած մատը ծռում են դեպի ներքև, հետո զգուշությամբ պառկեցնելով առվի հատակի վրա՝ ամրացնում են մի քանի տեղից (3—4) փայտե կարթերով, այնպես, վոր մատը հողի յերեսը դուրս չգա։ Այնուհետև առուն հողով լցնում են այնչափ, վոր մատը մոտ 3—5 սմ ծածկված լինի հողի շերտով։ Մատի՝ առվից դուրս գտնըված մասի բոլոր աչքերը հյութաշարժման ժամանակ հեռացնում են։ Վորոշ ժամանակից հետո հողում գտնված աչքերից շվեր են դուրս գալիս և յերբ դրանք հասնում են 15—20 սմ յերկարության, առուն ամբողջապես լցնում պարարտ հողով։ Շվերը հաճախ պտուղ են տալիս հենց նույն տարում (Նկ. 2)։ Նույն տարվա աշնանը, կամ հաջորդ գարնանն անդալիս արած մատն զգուշությամբ հանում են և ստանում այնքան արմատակալած կտրոն, վորքան շիվ է զարգացել մատի վրա։ Այդ արմատակալածներն իրարից անջատում են և ցանկացած տեղը տնկում։

Նկ. 2. Չինական անդալիս

Տաշտաթաղ անդալիս (ամբողջ վազով անդալիս).— Այս ձևը տարբերվում է անդալիսի մյուս ձևերից նրանով, վոր մի մատն անդալիս անելու փոխարեն թաղում են ամբողջ վազը։ Տաշտաթաղ անդալիս անում են, յերբ ցանկանում են կամ վազը նորոգել, կամ այգու բաց տեղերը լրացնել, կամ թե հարևան վազը ցանկացած վազով փոխարինել։

Ամբողջ վազն անդալիս անելու համար վազի բնի շուրջը փորում են 40—50 սմ խորությամբ մի փոս, ապա ցանկացած կողմի վրա փոսը շարունակում են առվի ձևով 40—50 սմ խորությամբ, 30—40 սմ լայնությամբ և այն յերկարությամբ, վոր առուն հասնի մինչև այն տեղը, վորտեղ ցանկանում են նոր վազեր ստանալ։ Այնուհետև փոսը վազի տակ այն աստիճան լայնացնում ու խորացնում են, մինչև վոր հնարավոր է լինում ամբողջ վազը պառկեցնել առվի մեջ, առանց արմատներին աչքի ընկնող վնաս հասցնելու։ Վազի վրա թողնում են ամենաառողջ, ուժեղ և յերկար մատերից 2—3-ը, իսկ մյուսները հեռացնում։ Թողած մատերը նույն առվի հատակով տա-



Նկ. 3. Տաշտաթաղ անդալիս (հին վազ)

նում են ցանկացած տեղերը և ապա այդ տեղից ծայրերն ուղղելով դեպի վեր, հանում են հողից դուրս։ Դրանից հետո առուն հողով լցնում ու վոտքերով ամրացնում են (նկ. 3), հողից դուրս հանած մատերը 2—3 աչքի վրա ետում են և ցցերից կապում։

Մեզ մոտ անդալիսը շատ քիչ չափով են կիրառում, մինչդեռ մեր այգիների բաց տեղերը լրացնելու, ինչպես և անպետքացած վազերը նորոգելու համար դա պետք համարել ամենալավ և գործնական միջոցը։ Մեր այգեգործական շրջանների համար գործնական նշանակու-

թյուն ունի թե հասարակ (պարզ) և թե ամբողջ վազով անդալիսը (տաշտաթաղ անդալիս)։ Որպես կանոն, անդալիսը կատարում են վազի հանգստի շրջանում։

բ. Բազմացումը պատվաստի միջոցով

Վազի բազմացումը պատվաստի միջոցով կայանում է նրանում, որ մեկ վազի կամ նրա մի մասի վրա որոշ ձևով միացնում են մի այլ վազի մի փոքր մաս (աչք, կոճղ, շիվ), որոնք միանալով միմյանց հետ՝ աճում են որպես մի բույս, տալով այն խաղողը, որը և ցանկանում ենք բազմացնել։ Այն վազը, կամ վազի այն մասը (կոճղ, բուն և այլն), որի վրա պատվաստում են, կոչվում է պատվաստակալ, իսկ այն մասը, որ միացնում են կամ, ինչպես ասում են՝ պատվաստում են, կոչվում է պատվաստացու։ Օրինակ, եթե մսխալու վրա պատվաստենք կախեթ փոփոխակ, մսխալին կկոչվի պատվաստակալ, կախեթը՝ պատվաստացու, իսկ ստացված վազը՝ պատվաստ, կամ, եթե Ամերիկյան որևէ տեսակի վրա պատվաստենք ռկածիթելի*) փոփոխակ, ապա ամերիկյան տեսակը կլինի պատվաստակալ, իսկ ռկածիթելին՝ պատվաստացու, ստացված վազերը՝ պատվաստներ։

Հին ժամանակներում պատվաստումը այգեգործության մեջ շատ քիչ չափով էր կիրառվում և վազի վրա պատվաստ անելու կարիք համարյա չէր զգացվում։ Սակայն այգեգործության մեջ դրությունը միանգամայն փոխվեց, երբ Ֆրանսիայում 1868 թվին հայտաբերվեց ֆիլոքսերա կոչվող մի փոքրիկ միջատ, որը սոսկալի հարված հասցրեց Ֆրանսիայի այգեգործությանը, կարճ ժամանակամիջոցում (20 տարվա ընթացքում) ոչնչացնելով մոտ երկու միլիոն հեկտար խաղողի այգի։ Կարճ

*) Ռկածիթելին Վրաստանի փոփոխակ է, որ մեծ չափով տարածված է Կախեթիայում։

ժամանակից հետո ֆիլոքսերան յերևաց նաև Եվրոպական ուրիշ յերկրներում, այսպես, որինակ՝

Ավստրիայում	հայտաբերվեց	1872	թվին
Գերմանիայում	»	1874	»
Զվիցերիայում	»	1875	»
Հունգարիայում	»	1875	»
Իսպանիայում	»	1877	»
Իտալիայում	»	1879	»
Պորտուգալիայում	»	1877	»
Սերբիայում	»	1882	»
Ռումինիայում	»	1884	»
Բուլղարիայում	»	1884	»
Ռուսաստանում	»	1880	» իսկ

Խորհրդային Հայաստանում առաջին անգամ ֆիլոքսերան հայտաբերվեց Ալլահվերդու, Իջևանի և Շամշադնի շրջաններում 1925 թվին։

Խաղողի մանրամասն ուսումնասիրություններից պարզվեց, վոր ֆիլոքսերայի նկատմամբ խաղողի տարբեր տեսակներն ունեն տարբեր դիմացկունություն, և վոր դիմացկուն տեսակներն ամերիկյաններն են, իսկ ամենաթույլ դիմացկունը յեվրոպականն է, կամ, ինչպես ասում են, վիտիս վինիֆերա տեսակն է (այդ տեսակին են պատկանում նաև մեր տեղական խաղողի փոփոխակները)։ Սակայն ֆիլոքսերային դիմացկուն ամերիկյան տեսակները տալիս են շատ վատ վորակի բերք, մինչդեռ յեվրոպական տեսակը, վոր, ինչպես ասացինք, ֆիլոքսերային շատ թույլ է դիմանում, տալիս է ամենալավ վորակավոր խաղող։ Այստեղից պարզ յերևում է, վոր յեթե մենք յեվրոպական տեսակի վազը (պատվաստացու) պատվաստենք ֆիլոքսերային դիմացող վազի վրա (ամերիկյան տեսակները կամ նրանց հիբրիդներն ոգտագործելով վորպես պատվաստակալ), ապա կստանանք մի վազ, վորը թե վորակավոր խաղող կտա և թե կդիմանա ֆիլոքսերային։ Հիրավի, այգեգործական այն շրջաններում, վորտեղ ֆի-

լոքսերա կա, այգիները բազմացնում են չմարյա միայնա պատվաստի միջոցով, ինչպես, օրինակ, խորհրդային Վրաստանում, Ուկրայինայում, խորհրդային Հայաստանի հյուսիսային շրջաններում, արևմտյան մի շարք երկրներում և այլն։ Ուրեմն՝ գործնական այգեգործության մեջ պատվաստ անելու գլխավոր նպատակն է՝ անվնաս պահել այգիները ֆիլոքսերային վտանգից։ Բացի դրանից, պատվաստ երբեմն անում են նաև հետևյալ նպատակներով.

1. այգիներում եղած անբերրի կամ սակավաբեր վազերը ցանկացածներով փոխարինելու համար.

2. մի փոփոխակը մի ուրիշ՝ լավ փոփոխակով փոխարինելու համար.

3. սերմերից առաջացած վազերի (հիբրիդների) պտղաբերությունն արագացնելու համար, օգտագործելով նրանք վորպես պատվաստացուներ։

Պատվաստը հաջողությամբ կպչելու համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները.

1. թե պատվաստացուն և թե պատվաստակալը պիտի լինեն միանգամայն առողջ, կենսունակ և պարունակեն բավարար քանակությամբ սննդարար նյութեր.

2. պատվաստացուն ու պատվաստակալը պիտի ունենան ազգակցական կապ. կամ, ինչպես ասում են, աֆինիտետ.

3. միջավայրը, վորտեղ պիտի պատվաստները կպչեն, ունենա բարենպաստ ջերմություն (25—30°), խոնավություն և օդ.

4. պատվաստողը պատվաստը հաջող կատարելու համար պետք է պատվաստի գործիքներն ու մեքենաները սուր ու մաքուր պահի։

Կան պատվաստ անելու զանազան ձևեր։ Դրանցից այգեգործության մեջ տարածված են անգլիական պատ-

վաստը (Նկ. 8— այս ձևն ամենատարածվածն է), լրաձեղ պատվաստը (Նկ. 4), հասարակ ճեղով պատվաստ (Նկ. 5). յերբեմն գործադրում են նաև կամաչ պատվաստ, աչքապատվաստ, մայորքի պատվաստ, կարով պատվաստ և այլն (տես Նկ. 6, 7)։ Պատվաստն անում են կամ սեղանի վրա (սենյակներում), կամ թե տեղն ու տեղը (տնկարանում կամ հիմնական տեղում)։ Սեղանի վրա պատվաստ անելը տարածված է այն շրջաններում, վորտեղ ցանկանում են մեծ քանակությամբ պատվաստներ ստանալ ամերիկյան պատվաստակալների վրա։ Սեղանի վրա պատվաստ անելն ունի այն առավելությունը, վոր այս դեպքում ավելի հեշտ է ստեղծել պատվաստի համար բարենպաստ պայմաններ (ջերմություն, խոնավություն, ոդ և այլն)։ Բացի այդ, պատվաստ կատարողի արտադրողականությունը բարձր է լինում, քան տեղն ու տեղը պատվաստ կատարելու դեպքում։

Նկ. 4. Լրաձեղ պատվաստ



Նկ. 5. Հասարակ ճեղով պատվաստ

Սեղանի վրա պատվաստը կատարում են գլխավորապես անգլիական ձևի, թե սովորական կտրոնների և թե արմատակալած կտրոնների վրա։ Պատվաստ կատարում են թե ձեռքով՝ պատվաստի հատուկ դանակներով և թե պատվաստի հատուկ մեքենաների միջոցով։



Նկ. 6. Կարով պատվաստ

Տեղն ու տեղը պատվաստն ունի շատ սահմանափակ կիրառում։ Տեղն ու տեղը պատվաստը կատարում են կամ արմատակալած կտրոնների վրա՝ տնկարանում, կամ այգում՝ հասակավոր վազերի վրա։

Խորհրդային Հայաստանի Արարատյան դաշտավայրի այգեգործական շրջաններում, որտեղ ֆիլոքսերա չի հայտաբերված, այգիները տնկում են կտրոնների միջոցով, առանց պատվաստ անելու։ Սակայն հյուսիսային մեր շրջաններում (Ալլահվերդի, Շամշադին, Իջևան), որ-



Նկ. 7. Մայորքի պատվաստ

տեղ ֆիլոքսերա կա և վորտեղ յեղած այգիները ֆիլոքսերայով վարակված են, նոր այգիներ տնկում են բացառապես պատվաստի միջոցով, օգտագործելով ամերիկյան տեսակները կամ նրանց հիբրիդները վորպես պատվաստակալներ, իսկ տեղականները՝ վորպես պատվաստացուներ։

Պատվաստի ձևերից ամենատարածվածը, ինչպես արդեն ասացինք, հանդիսանում է անգլիական պատվաստը (նկ. 8), վորպիսի պատվաստ, ֆիլոքսերայով վարակված շրջաններում կատարում են համարյա բացառապես սենյակներում՝ սեղանի վրա։ Անգլիական ձևի՝ սեղանի վրա պատվաստ կատարում են Խորհրդային Վրաստանում, Խորհ. Ուկրայինայում, ինչպես և Խորհրդային Հայաստանի հյուսիսային՝ ֆիլոքսերայով վարակված շրջաններում (Ալլահվերդի, Շամշադին, Իջևան)։

Քանի վոր անգլիական պատվաստը (սեղանի վրա) այգեգործության մեջ գործնական խոշոր նշանակություն ունի, ուստի անհրաժեշտ ենք համարում պատվաստի այդ ձևի վրա այստեղ մի փոքր կանգ առնել։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՏՎԱՍՏ

1. Պատվաստակալի ընտրությունն ու պատրաստումը.— Պատվաստ սկսելուց մի քանի որ առաջ պահած տեղից (խրամատներից) հանում են պատվաստակալի խրձերը, հողից մաքրում և փոխադրում վորևէ ծածկի տակ։ Արձակում են խրձերի կապերը և կտրոնները մեկ առ-մեկ կանոնավոր ստուգում։ Ստուգման ժամանակ խոտանում են չորացած և բորբոսնած կտրոնները, ինչպես և այն կտրոնները, վորոնք կամ շատ բարակ են (տրամագիծը միջհանգույցի մեջտեղում 5 mm. պակաս) կամ, ընդհակառակը, շատ հաստ են (միջհանգույցի մեջտեղի տրամագիծը 12 mm ավելի, կտրոնների հաստությունը չափում են հատուկ մի գործիքով, վոր կտրոնաչափ է կոչվում։ Սուր սեկատորով հեռացնում են

կտրոնների վրա յեղած բճամատերը և թելիկները։ Ընդհանրապես պատվաստակալի կտրոններն ունենում են 1 մետր 10 սմ-ից մինչև 1 մետր 20 սմ յերկարություն, պատվաստից առաջ այդ կտրոնները կտրում են առանձին մասերի (պատվաստականեր) տալով յուրաքանչյուրին 25—30 սմ, յերբեմն ավելի յերկարություն։ Այդ պատվաստակալները պատրաստում են սովորական կտրոնների ձևով, այսինքն՝ հիմքում կտրում են հանգույցից անմիջապես ցածր, իսկ վերևի կտրվածքն անում են միջհանգույցի վորևե տեղից։ Հետագա աշխատանքները հաջողությամբ կատարելու համար, անհրաժեշտ է, վոր բոլոր պատվաստականները միևնույն յերկարությունն ունենան։ Նախքան պատվաստումը, պատվաստականները հիմքերով դնում են միքանի որով (2—3) ջրի մեջ։ Վորքան կտրոնները բավարար քանակությամբ ջուր ծծեն, այնքան նրանց կտրվածքները թարմ կլինեն։ Այնուհետև պատվաստականները լավ լվանում են, վորպեսզի ավազի կամ հողի մասնիկները պատվաստիչ գործիքները չփչացնեն։ Դրանից հետո սուր սեկատորով (կամ դանակով) պատվաստակալի բոլոր աչքերը հիմքից կտրում են, վորպեսզի այդ աչքերը հետագայում շվեր չտան և պատվաստի նորմալ զարգացումը չխանգարեն։

2 **Պատվաստացվի ընտրությունը յեվ պատրաստումը.**— Պատվաստացվի ընտրությունը կատարում են այն կանոններով և սկզբունքներով, ինչպես սովորական կտրոններինը. համենայն դեպս պատվաստացուն լավ հասունացած, ստնդամնյութերով հարուստ, առողջ և կենսունակ մասերից պետք է վերցնել։ Ընտրած պատվաստացու կտրոնները հիմքերով մի 2—3 որով դնում են ջրի մեջ, վորից հետո ջրից հանում են և լավ մաքրում, վորպեսզի հողի և ավազի մասնիկները պատվաստիչ գործիքները չփչացնեն։ Այնուհետև պատվաստացու կտրոնները սուր սեկատորով կտրում են առանձին մասերի, այնպես, վոր

յուրաքանչյուր մաս յուր վրա ունենա մի աչք և այդ աչքից վերև և ներքև վորոշ յերկարությամբ ընափայտ լինի. աչքից դեպի ներքև մասն ավելի յերկար են թողնում, քան աչքից վերևի մասը: Պատվաստացուներ պատրաստելիս պետք է աշխատել, վոր նրանք բոլորը միևնույն յերկարությունն ունենան.

Տարբեր փոփոխակների պատվաստացուներն առանձին պետք է պատրաստել և վոչ մի դեպքում փոփոխակներն իրար չխառնել: Անգլիական պատվաստի ժամանակ աշխատում են, վոր պատվաստակալն ու պատվաստացուն միևնույն հաստատությունն ունենան:

Վերը նշած ձևով պատրաստած պատվաստակալներն ու պատվաստացուները տեղափոխում են պատվաստի սենյակը, վորտեղ և պատվաստում են կատարում:

3 Անգլիական պատվաստի տեխնիկան.—Վերցնում են միևնույն տրամագծով պատվաստակալ և պատվաստացու, ապա սուր դանակով յերկուսն էլ շեղաձև կտրում այնպես, վոր այդ կտրվածքներն իրար հավասար մակերես ունենան: Պատվաստացվի շեղաձև կտրվածքը պետք է սկսվի աչքի տակից և վոչ թե հակառակ կողմից (Նկ. 8), քանի վոր, ինչպես փորձերը ցույց են տվել, աչքի տակից կտրելիս պատվաստն ավելի հաջող է կպչում քան աչքի հակառակ կողմից կտրելու դեպքում: Ընդհանրապես շեղաձև կտրվածքի յերկարությունը մոտ 1,5—2,5 անգամ ավելի մեծ պետք լինի քան կտրոնի (պատվաստակալի և թե պատվաստացվի) տրամագիծը (տես Նկ. 8). Դիտողությունները ցույց են տալիս, վոր շեղաձև կտրվածքի նըման յերկարությունը լավագույն յերկարությունն է հանդիսանում պատվաստը հաջողությամբ կպչելու համար, քանի վոր պատվաստակալի և պատվաստացվի կամբիալ շերտերը շոշափման համեմատաբար շատ կետեր ունեն: Շեղաձև կտրվածքը շատ յերկար լինելու դեպքում, կըտրվածքի ծայրի մասն այն աստիճան բարակ է ստաց-

վում, որ հեշտությամբ չորանում է, և պատվաստը չի կպչում։ Շեղաձև կտրվածքն առանցքի նկատմամբ պիտի 20—25° անկյուն ունենա։ Թե պատվաստակալի և թե պատվաստացվի կտրվածքների վրա պիտի դանակով առաջացնել ճեղքվածքներ, որի համար կտրվածքի վերևի 1/3-ից սկսած դանակով, ըստ կտրվածքի յերկարության,



Նկ. 8. Անգլիական պատվաստ

բաց են անում 4—6 միլիմետր խորությամբ ճեղքվածք, սակայն այնպես, որ առաջացած ճեղքվածքը չգնա կտրոնի առանցքին զուգահեռ, այլ մի քիչ թեք. դրա համար դանակը մի փոքր սեղմում են դեպի առաջ։ Դանակը ճեղքվածքից հանելուց առաջ ցածի կողմից մի քիչ շարժում են, որի շնորհիվ ճեղքվածքը մի փոքր լայնանում

A 18600
602

է։ Այնուհետև պատվաստացուն միացնում են պատվաստակալի հետ այնպես, որ մեկի լեզվակը մտած լինի մյուսի ճեղքվածքի մեջ (տես նկ. 8)։ Կտրվածքներն իրար պետք է լավ ծածկեն և բաց տեղեր չմնան։ Պատվաստը հաջող կատարելու դեպքում պատվաստացուն այն աստիճան ամուր է նստած լինում պատվաստակալի վրա, որ պատվաստը կապելու ընդհանրապես կարիք չի զգացվում։ Հիրավի, Անգլիական պատվաստը սենյակում, սեղանի վրա կատարելու դեպքում պատվաստները չեն կապում, յեթե ստրատիֆիկացիան*) անում են խոնավ կամերայում։

4. **Պատվաստների ստրատիֆիկացիա խոնավ կամերայում.**—սեղանի վրա պատրաստած պատվաստները դարսում են հատուկ ձևով պատրաստած արկղների մեջ (խոնավ կամերա)։ Այդ արկղները պատրաստում են 60 սմ յերկարությամբ և 60 սմ լայնությամբ. խորությունը, նայած պատվաստների յերկարությանը և մամռի կամ թեփի շերտի հաստատությանը, տատանվում է 50—60 սմ միջև. համենայն դեպս այդ խորությունը պատվաստի յերկարությունից մի 10—15 սմ ավելի պիտի լինի։ Այսպես, օրինակ, յեթե պատվաստի յերկարությունը հավասար է, դիցուք, 40 սմ ապա արկղի խորությունը պետք է լինի մոտ 50—55 սմ, յուրաքանչյուր արկղի մեջ տեղավորվում է, նայած պատվաստների հաստության, 700—1000 պատվաստ։ Արկղի հիմքը և ներքևի $^2/_3$ մասի վրա պատերն ունենում են փոքրիկ անցքեր՝ օդը ներս թափանցելու համար (նկ. 9)։ Այդ արկղի մի պատը շարժական են շինում, այնպես, որ հարկ յեղած դեպքում հեշտությամբ հնարավոր լինի տեղից հանել և նորից տեղը դնել։ Պատվաստներն արկղի մեջ դարսելու համար արկղը դնում են կողքի վրա այնպես, որ շարժական պատը նայի դեպի վեր, իսկ կափարիչի կողմը՝ դեպի դարսողը

---

*) Ստրատիֆիկացիա լատիներեն բառ է, որ նշանակում է strate—շերտ, facere—անել։

Շարժական պատն արկղի վրայից վերցնում են և արկղի ներքևի պատի վրա փռում մոտ 6—7 սմ հաստատությամբ մամուռ կամ թեփ և դրա վրա դարսում են պատվաստներն այնպես, որ պատվաստացուներն ուղղված լինեն դեպի դարսողը։ Պատվաստները դարսելու հետ միաժամանակ, արկղի պատերի կողքին և հետևը, պատվաստների հիմքի մոտ լցնում են մամուռ կամ թեփ՝ 6—7 սմ հաստությամբ։ Այս ձևով պատվաստները դարսելով բարձրացնում են այնքան, որ արկղը վերևի կողմից մոտ 6—7 սմ բարձրությամբ ազատ տարածություն ունենա, որը լցնում են մամուռով կամ թեփով։ Այնուհետև շարժական պատը դնելով իր տեղը՝ արկղը դնում են իր իսկական հատակով ներքև, այնպես, որ, կափարիչի կողմն ուղղված լինի դեպի վերև․ պատվաստներն արկղի մեջ դարսելիս պետք է ուշադրությամբ հետևել, որ բոլոր պատվաստների պատվաստի տեղերը միևնույն բարձրության վրա լինեն։ Պատվաստներն արկղի մեջ դարսելուց հետո, նրանց վրա փռում են մի քանի սմ հաստությամբ մամուռ կամ թեփ և ապա դրա վրա լցնում են ավելի խոշոր մամուռ այնքան, որ արկղն ամբողջությամբ լցվի։ Այնուհետև արկղը խորասուզում են ջրի



Նկ. 9. Պատվաստման արկղներ

մեջ, վորի ջերմությունը լինում է 30°—35°. Ջրի մեջ խորասուզում են այնպես, վոր ջուրը հասնի մինչև պատվաստի տեղը, բայց այդ տեղը չթրջվի։ Արկղը ջրի մեջ պահում են մոտ 5—6 րոպե, վորից հետո ջրից հանում և դնում են ավազանի վրա, վորպեսզի արկղից ավելորդ ջուրը հոսի ավազանի մեջ։

Արկղները տեղափոխում են ջերմատան տաք բաժանմունքը, վորտեղ ջերմությունը պիտի 25°—30° լինի, իսկ ոդի հարաբերական խոնավությունը՝ մոտ 90—95%. այդ պայմաններում պատվաստների վրա պատվաստ արած տեղում արագությամբ (յերբեմն 3—4 որից հետո) առաջ է գալիս կալլուսը (callus) և մոտ 10—12 որից հետո տեղի յե ունենում պատվաստումը, պատվաստակալների վրա առաջ են գալիս արմատներ, իսկ պատվաստացուների աչքերը բավականաչափ ուռչում են և նույնիսկ վորոշ դեպքերում անգամ բացվում։ Ջերմատանը ժամանակ-առժամանակ պետք է ստուգել արկղների դրությունը. բարձր ջերմաստիճանի շնորհիվ, արկղների մամուռը կամ թեփը կարող է չորանալ։ Այս դեպքում անհրաժեշտ է արկղները նորից խորասուզել տաք (30—35°) ջրի մեջ հենց այնպես, ինչպես այդ կատարվեց առաջին անգամ։ Այնուհետև մշտական հսկողություն պետք է սահմանել, վոր ջերմատան ջերմությունը և ոդի հարաբերական խոնավությունը ցանկացած աստիճանից ցածր կամ բարձր չլինի, ոդափոխությունը (վենտիլյացիա) կանոնավոր կատարվի և պատվաստների վրա բորբոսանկեր և վնասակար այլ միկրոորգանիզմներ չառաջանան և պատվաստները չփչանան։ Պատվաստները վնասակար միկրոորգանիզմներից, ինչպես և բորբոսանկերից զերծ պահելու համար, արկղների մամուռը կամ թեփը*) գործածելուց առաջ յենթարկում են ստերիլիզացիայի՝ չոր ոդում տա-

*) Ամենալավ թեփը սոճու թեփն է համարվում։

քացնելու միջոցով։ Բացի այդ, մամուռն խառնում են փայտի ածուխ՝ 3:1 հարաբերությամբ (3 մաս մամուռ և 1 մաս ածուխ) և ապա այդ խառնուրդի ձևով մամուռն օգտագործում են պատվաստներն արկղի մեջ դարսելու համար։

Պատվաստները մոտ 10—12 օր ջերմատան տաք բաժանմունքում պահելուց հետո տեղափոխում են ջերմատան համեմատաբար սառը բաժանմունք, որտեղ ջերմությունը 18°—20° պիտի լինի։ Այս բաժանմունքում բաց են անում արկղների կափարիչները (յեթե արկղները կափարիչներով ծածկված են յեղել), հանում են պատվաստացուների վրա լցրած մամուռը, ուժեղացնում են այդ բաժանմունքի օդափոխությունն ու լույսը, և աստիճանաբար ընտելացնում պատվաստներն արտաքին պայմաններին։ Ջերմատան սառը բաժանմունքում պատվաստները պահում են մոտ 5—6 օր, որից հետո դուրս են հանում և տնկում նախորոք պատրաստված տնկարանում։

Ջերմատուն չլինելու դեպքում պատվաստների ստրատիֆիկացիան կարելի յե կատարել որևէ տաքացվող սենյակում (25—30°), որտեղ արկղերը պատվաստներով պահում են և խնամում այնպես, ինչպես ջերմատներում։

5. Պատվաստների ստրատիֆիկացիա ավազի մեջ.— *Այս դեպքում խոնավ կամերայի փոխարեն պատվաստները ստրատիֆիկացիա յեն անում ավազի մեջ։ Դրա համար պատրաստի պատվաստներից խրձեր են կապում, յուրաքանչյուրի մեջ մոտ 50 հատ։ Որևէ սենյակի կամ սովորական հասարակ ծածկի (չարդախ) պատի ուղղությամբ, գետնի վրա մոտ 10—20 սմ բարձրությամբ ավազ են փռում։*

Այդ ավազի վրա կողք-կողքի պառկեցնում են պատվաստների խրձերը, որոնց վրա նորից ավազ, են լցնում այնպես, որ խրձերի արանքն ավազը թափանցի

և խրձերի վրա մոտ 10 սմ հաստությամբ ավազի շերտ գոյանա. այդ ավազի վրա նորից պատվաստների խրձեր են դարսում, որոնց վրա նույնպես ավազ լցնում, և այդպես շարունակում մի-մի շարք պատվաստի խրձեր և մի-մի շարք ավազի շերտ (10 սմ հաստությամբ), մինչև որ այդ կույտն ունենա մոտ 2 մետր բարձրություն, ընդորում ավազի վերջին (վերևի) շերտը մոտ 20—25 սմ հաստություն կազմի։ Ավազը խրձերի վրա լավ մնալու և վայր չթափվելու համար, գետնի վրա, կույտի մոտ մի քանի ցցեր են կանգնեցնում, որոնց վրա ավազի կույտը բարձրացնելու հետ միասին հենում են տախտակներ։

Ժամանակ-առժամանակ ստուգում են խրձերի դրությունը, հարկ եղած դեպքում ավազը վրայից մի փոքր խոնավացնում (ցնցուղով ջրում), կանոնավորում են սենյակի, ծածկի ջերմությունը, օդափոխությունը և այլն։ Ավազի մեջ ստրատիֆիկացիա անելու դեպքում պատվաստների պատվաստի տեղը պետք է անպայման ռաֆիայով կամ այլ կապով կապել, որպեսզի պատվաստացուն տեղաշարժ չլինի և պատվաստը չփչանա։ Խոնավ կամերայի դեպքում, ինչպես արդեն ասել ենք, կապելն ավելորդ մի աշխատանք է դառնում։

Բարենպաստ պայմաններում և լավ խնամքի դեպքում պատվաստները 15—20 օրվա ընթացքում կպչում են, որից հետո կարելի է տնկարան տեղափոխել, նախօրոք ընտելացնելով նրանց արտաքին պայմաններին։

Ստրատիֆիկացիայի այս ձևը չի տալիս այն արդյունքը, ինչ արդյունք որ ստացվում է խոնավ կամերայում ստրատիֆիկացիա անելիս, ուստի և գործնականում նախապատվություն է տրվում վերջին ձևին։

Պատվաստների ստրատիֆիկացիա Խորհրդային Վրաստանում (Կախեթիա), Խորհրդային Ուկրաինայում (Օդեսսա) կատարում են խոնավ կամերայում։

Խորհրդային Հայաստանի՝ ֆիլոքսերայով վարակված շրջաններում 1937 թվի աշնանը 21 հեկտար և 1938 թ. գարնան 30 հեկտար խաղողի այգի տնկելու պլանն ապահովելու համար, 1937 թվի գարնանը պետք է կատարել 400 հազար պատվաստ։ Որպես պատվաստակալ ընդունված է № 3309 և № 101-14*)։ Պատվաստի գործը մեզ մոտ կենտրոնացած է Ալլահվերդու շրջանի Հճկաձորի կոլխոզում։

*) № 3309 և № 101-14 Ամերիկյան հիբրիդներ են. այդ հիբրիդները ստացել են Ռիփարիա և Ռուփեստրիս տեսակներից հիբրիդիզացիայի միջոցով. Riparia x Rupestris № 101—14. Millardet et grasset՝ Riparia x Rupestris № 3309 Couderc.

II. ՎԱԶԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Վազի բազմացումը կտրոնների միջոցով հայտնի յե շատ հին ժամանակներից և այգեգործության մեջ ամենից հեշտ ու տարածված ձևն ե համարվում։ Ֆիլոքսերայից ազատ շրջաններում նոր այգիները գցում են բացառապես կտրոնների միջոցով։ Այդ նպատակով կտրոնները տնկում են կամ հիմնական տեղում (այդպես են անում մասամբ և մեզ մոտ), կամ նախորոք տնկում են տնկարանում՝ արմատակալելու համար և ապա 1—2 տարուց հետո տեղափոխում հիմնական տեղը։ Տնկելու վերջին ձևն ավելի յե տարածված քան առաջինը։

Կտրոնների միջոցով վազի բազմացումը կիրառում են նաև ֆիլոքսերայով վարակված շրջաններում։ Այս դեպքում կտրոններն ոգտագործում են հետևյալ նպատակներով.

1. ամերիկյան պատվաստակալներ բազմացնելու համար.
2. անմիջական արտադրողներ բազմացնելու համար.
3. պատվաստներ ստանալու համար.

Կտրոնների միջոցով բազմացման ձևը հիմնականում կայանում ե նրանում, վոր ցանկացած վազերից կտրում են միամյա, լավ փայտացած ու առողջ մատերը (կտրոնները) տնկում հողի մեջ և նրանց վրա արմատներ ու շվեր առաջացնելով՝ մի 3—4 տարուց հետո ցանկացած խաղողն ստանում։

1. ԿՏՐՈՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Կտրոնները կարելի յե պատրաստել թե փայտացած միամյա մատերից (վազի հանգստի շրջանում) և թե աճող շվերից (ամառվա ընթացքում)։ Առաջին դեպքում կտրոնը կոչվում ե փայտացած, յերկրորդ դեպքում՝ կանաչ։ Այգեգործության մեջ գործ են ածում գլխավորապես փայտացած կտրոններ, քանի վոր սովորական պայմաններում նրանք հեշտությամբ արմատակալում են և հաջողու-

թյամբ զարգանում։ Կանաչ կտրոններով բազմացումը պահանջում է հատուկ խնամք և մեծ աշխատանք (ջերմատուն, ջերմոցներ և այլն), իսկ ուղղակի բացօթյա (տնկարանում կամ այգում) տնկելիս նրանց մեծ մասը չորանում է։ Այդ պատճառով կանաչ կտրոններով բազմացումը կիրառում են շատ հազվադյուտ դեպքերում, օրինակ՝ յերբ սուր կարիք է զգացվում կարճ ժամանակամիջոցում մեծ քանակությամբ ամերիկյան պատվաստակալներ ստանալ պատվաստ անելու համար կամ վորևե հազվադյուտ փոփոխակ (հիբրիդ) արագ տեմպով բազմացնել։ Կանաչ կտրոններով, բազմացման ձևը կիրառում են նաև գիտահետազոտական վորոշ աշխատանքներ կատարելու ժամանակ։ Այս դեպքում կանաչ կտրոնները բազմացնում են միայն հատուկ ջերմատներում կամ ջերմոցներում, քանի վոր, ինչպես վերն ասացինք, նրանք ուղղակի բացօթյա պայմաններում տնկելիս հեշտությամբ չորանում են և արմատներ չեն արձակում։ Մենք կանգ կառնենք միայն փայտացած կտրոններով բազմացման յեղանակի վրա։ Փայտացած կտրոնների տեսակներից հայտնի յեն՝ պարզ կամ հասարակ կտրոն, կրնկակտրոն, գավազանակտրոն և միաչքանի կտրոն։

Պարզ կամ հասարակ կտրոնը, վոր իր վրա չունի յերկամյա բնափայտից և վոչ մի կտոր (նկ. 10 ա)։ Հասարակ կամ պարզ կտրոն պատրաստելու համար վազից կտրում են ցանկացած մասը (ապահովելով վազի բերքը), հիմքում աչքի տակ հարթ և հորիզոնական ուղղությամբ կտրում, և տալով կտրոնին պահանջվող յերկարությունը՝ 70—80 սմ և ավելի, նայած տնկելու խորությանը), մասի բարակ ծայրը հեռացնում են։ Յերկար մասերից կարելի յե պատրաստել մի քանի կտրոն։

Կրնկակտրոնն իր վրա պահած ունի նախորդ տարվա մասից ունեցած մի փոքրիկ կտոր (յերկամյա բնափայտ) (նկ. 10 գ)։ Կրնկակտրոն պատրաստելու համար միամյա մասը վազից կտրում են այնպես, վոր նրա հիմքում մնա

նախորդ տարվա մատից մի փոքր մաս, այնուհետև ապահովելով կտրոնի ցանկացած յերկարությունը՝ մատի ծայրի բարակ մասը կտրում և հեռացնում են։

Գավազանակտրոն կոչվում է այն կտրոնը, վորն իր ներքևի մասում ունի յերկամյա մատից ունեցած մի կտոր՝ գավազանի կոթի ձևով (Նկ. 10 բ)։ Գավազանակտրոն պատրաստելու համար մատը պետի կտրել վազից յերկամյա մատի մի մասի հետ միասին, և տալով կտրոնին ցանկացած յերկարություն՝ մատի ծայրի բարակ մասը հեռացնում են։

Ա Բ Գ

Նկ. 10. Կտրոնների տեսակները
ա. պարզ կամ հասարակ կտրոն, բ. գավազանակտրոն, գ. կռնկակտրոն, դ. միաչքանի կտրոն

Միաչքանի կտրոնը մատի ամենափոքրիկ կտրոնն է, մի աչքի վրան պահած։ Մի մատից կարելի յե ստանալ մի քանի միաչքանի կտրոն (տես. Նկ. 10 դ և 11)։ Մատի բարակ ծայրը հեռացնում են և մնացած մասից ստանում այնքան միաչքանի կտրոն, վորքան աչք կա մատի մնացած մասի վրա։

Կտրոնների տեսակ-

ներից այգեգործության մեջ ներկայումս ամենատարածվածը հասարակ կամ պարզ կտրոնն է, որը թե հեշտությամբ է արմատակալում և թե հարմար է շամփուրներով (շշերով տնկելու համար)։ Բացի դրանից, նույն այգուց հնարավոր է համեմատաբար մեծ քանակությամբ հասարակ կտրոններ ստանալ և դրանց պատրաստելը քիչ աշխատանք է պահանջում, քան կրնկակտրոն և գավազանակտրոն կիրառելու դեպքում։ Ինչ վերաբերում է գավազանակտրոնների և կրնկակտրոնների կիրառման, ապա պետք է ասել, որ դրանք ընդհանրապես այգեգործության մեջ տարածված չեն, որովհետև ունեն մի շարք պակասություններ, այն է.

1. Նրանց վրա յեղած հին բնափայտը (յերկամյա փայտի կտորը) հողում հեշտությամբ քայքայվելով՝ յերբեմն վարակում է կտրոնը.

2. Շամփուրներով տնկելու աշխատանքները դժվարանում են.

3. Նույն այգուց այդ կտրոնները քիչ են ստացվում և դրանց պատրաստելը շատ աշխատանք է պահանջում։

Նկ. 11. Մի աչքանի կտրոն

Նկ. 12. Արմատակալած միաչքանի կտրոն (Գյուղինստիտուտ)

Գավազանակտրոնի և կրնկակտրոնի միակ առավելությունն այն է, որ հաջող են արմատակալում, և որի շնորհիվ նրանք հին ժամանակներում տարածված են յե-

գել։ Սակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ լավ փայտացած հասարակ կամ պարզ կտրոնը նույնպես հաջողությամբ է արմատակալում (մանավանդ յեվրոպական փոփոխակները) և այդ տեսակետից գավազանակտրոնի և կրնկակտրոնի կիրառումն առանձին առավելություն չունի։

Մխաչքանի կտրոններն այգեգործության մեջ ընդհանրապես տարածված չեն, որովհետև նրանք բացոթյա մշակության սովորական պայմաններում հեշտությամբ չորանում են և նրանց չնչին տոկոսն է զարգանում միայն։ Մխաչքանի կտրոնները գործ են ածում ջերմոցներում կամ ջերմատներում՝ հազվագյուտ փոփոխակները, նոր ստացած հիբրիդները կարճ ժամանակամիջոցում մեծ քանակությամբ բազմացնելու համար, ինչպես և գիտահետազոտական որոշ աշխատանքներ, գլխավորապես սելեկցիոն աշխատանքներ, կատարելու նպատակով։ Այսպիսով, կտրոնների տեսակներից այգեգործության մեջ գործնական նշանակություն ունի համարյա թե միայն հասարակ կամ պարզ կտրոնը, ուստի և հետագայում մենք կխոսենք կտրոնի միայն այդ տեսակի մասին։

2. ԿՏՐՈՆՆԵՐԻ ԱՐՄԱՏԱԿԱԼՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ինչպես ասացինք, հողում տնկած պարզ կամ հասարակ կտրոնները համապատասխան պայմաններում հեշտությամբ արմատակալում են և շվեր արձակում։ Արմատներն առաջանում են տնկած կտրոնների ստորերկրյա մասերի վրա, իսկ շվերը՝ հողից դուրս կամ հողի յերեսին մոտ գտնված աչքերից։ Արմատների առաջացման գործում կտրոնի բոլոր մասերը չունեն միևնույն նշանակությունը. արմատները դյուրությամբ են առաջանում և ուժեղ զարգանում հանգույցների վրա ու վերջիններիս մոտ մասերում, որտեղ մեծ քանակությամբ սննդարար նյութեր են կուտակված. միջհանգույցների կենտրոնական մա-

սերում արմատներ համարյա չեն առաջանում, կամ նրանք շատ թույլ են զարգանում (տես նկ. 13)։ Կտրոն-ների արմատակալման համար անհրաժեշտ է՝ ջերմություն, խոնավություն և օդ։ Սառը և չոր պայմաններում (հողում) կտրոնները չեն արմատակալում։ Եթե հողը չոր է, ապա



Նկ. 13. Միամյա արմատակալած հասարակ կտրոն (Գյուղինստիտուտ)

տնկած կտրոնները հաճախակի պետք ջրել, վորպեսզի կտրոնները բավարար քանակությամբ ջուր ստանան և արմատներ արձակեն։ Կտրոնները հաջող են արմատակա-լում փուխր հողերում, վորտեղ բավարար քանակությամբ օդ կա և, բացի դրանից, փուխր հողերում մատաղ արմատ-

ները լավ են զարգանում։ Բացի ջերմությունից, խոնավությունից և օդից, կտրոնների արմատակալման համար անհրաժեշտ են նաև վորոշ քանակությամբ սննդարար նյութեր։ Կտրոնների վրա թե արմատներն ու թե շվերն առաջանում են և սկզբնական շրջանում զարգանում ի հաշիվ կտրոնների մեջ յեղած սննդարար նյութերի։ Հետևապես, այն կտրոններն են հաջող արմատակալում, վորոնք պարունակում են բավարար քանակությամբ սննդանյութեր։ Բացի դրանից, կտրոնները պիտի լավ փայտացած, առողջ ու թարմ լինեն, հակառակ դեպքում՝ նրանք կամ չեն արմատակալում, կամ թե շատ թույլ և անհաջող արմատներ են արձակում։ Արմատակալման համար խոշոր նշանակություն ունի նույնպես կտրոնացու մասի հասակը։ Լավ և հաջողությամբ արմատակալում են միամյա մասերից պատրաստված կտրոնները. յերկու-յերեք տարեկան մասերը դժվար են արմատակալում, իսկ հինգ տարեկանները համարյա չեն արմատակալում։ Արմատակալման հաջողությունը կախված է նաև կտրոնների աչքերի բացման ժամանակից։ Ընդհանրապես նկատված է, վոր կտրոնների աչքերն ավելի վաղ են բացվում, քան նրանց արմատներն են առաջանում։ Սակայն յեթե աչքերի բացվելու և արմատների առաջանալու միջև ընկած ժամանակամիջոցը շատ յերկար է տևում, ապա այս դեպքում կտրոններից շատերը չեն արմատակալում (չեն կպչում) այն պարզ պատճառով, վոր զարգացող շվերը մեծ քանակությամբ ջուր են գոլորշիացնում, վորով կտրոնների մեջ յեղած ջրի քանակն զգալի չափով պակասում է։ Կարճ ժամանակից հետո կտրոնները, շվերի հետ միասին, ջրի պակասության հետևանքով, ամբողջապես չորանում են։ Ուրեմն կտրոնները հաջողությամբ կպչելու համար անհրաժեշտ է, վոր նրանց արմատները շուտ առաջանան և աչքերի բացվելու ու արմատների առաջանալու միջև

ընկած ժամանակամիջոցը կարելի չափ կարճ լինի։ Այդ նպատակով՝ տնկելուց առաջ կտրոնները որոշ ձևով նախապատրաստում են (տես կտրոնների նախապատրաստումը տնկելուց առաջ)

3. ԿՏՐՈՆՆԵՐԻ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամենակարճ կտրոնները միաչքանի կտրոններն են, որոնք բացօթյա, սովորական պայմաններում, ինչպես ասացինք, դժվարությամբ են արմատակալում, և որոնց չնչին տոկոսն է միայն զարգանում, հետևաբար՝ կտրոնները հաջողությամբ կպչելու և հետագայում կանոնավոր զարգանալու համար պիտի ունենան որոշ երկարություն։ Այդ պատճառով էլ տնկելու համար սովորաբար գործ են ածում բազմաչքանի կտրոններ, որոնց տալիք երկարությունը կախված է կտրոնները տնկելու խորությունից։ Հետևաբար, որքան կտրոնները խորն են տնկվելու, այնքան նրանք մեծ երկարություն պիտի ունենան և, ընդհակառակը, որքան նրանք սաղր են տնկվելու, այնքան նրանց երկարությունը համեմատաբար փոքր պիտի լինի։ Ուրեմն, անհրաժեշտ է նախ պարզել կտրոնները տնկելու խորությունը և ապա դրա հիման վրա վորոշել, թե ի՛նչ երկարությամբ կտրոններ պատրաստել։ Ընդհանրապես հարավային չոր ու տաք կլիմայական ու հողային պայմաններում կտրոնները խոր են տնկում. հյուսիսային ցուրտ ու խոնավ պայմաններում համեմատաբար սաղր են տնկում։ Այս տեսակետից հարավային չոր ու տաք շրջաններում գործ են ածում ավելի երկար կտրոններ (70—80 սմ և նույնիսկ ավելի), քան հյուսիսային ցուրտ ու խոնավ շրջաններում, որտեղ կտրոններին տալիս են 30—35 սմ երկարություն։ Հարավային տաք ու չոր շրջաններում կտրոնները հիմնական տեղում (այգում) ավելի խոր են տնկում քան տնկարանում։ Հետևաբար այդ շրջաններում հիմնական տեղը տնկելու

համար կորդնները պիտի ունենան 15—25 սմ ավելի յերկարություն, քան տնկարանում տնկելու դեպքում։ Ինչ խորությամբ էլ տնկելու լինենք, միևնույնն է, կորդնը շվեր արձակելու համար հողից դուրս մի 2—3 աչք պիտի ունենա*), հետևաբար նրա յերկարությունը 10—20 սանտիմետրով տնկելու խորությունից մեծ պիտի լինի։ Յեթե դրա վրա ավելացնենք և այն, որ տնկելուց առաջ կորդնների յերկարությունը թարմացման հետևանքով 5—10 սմ պակասելու յե, ապա կորդնների ընտրության ժամանակ նրանց տալիք յերկարությունը տնկելու խորությունից 15—25 սանտիմետրով ավելի պիտի լինի։ Այսպես, որինակ, 50 սմ խորությամբ տնկելու համար պի-



Նկ. 14. Հատուկ թոխի միջոցով կորդնի սաղր տնկելը



Նկ. 15. Կորդնի տնկելը սաղր սանդղի (փոսի) մեջ

տի ընտրել 65—75 սմ յերկարությամբ կորդններ, 30 սմ խորության համար՝ 45—55 սանտիմետրանոց կորդններ։ Հյուսիսային ցուրտ ու խոնավ շրջաններում յերբեմն կորդնները տնկում են թեք կամ հորիզոնական դիրքով (նկ. 14 և 15), այս դեպքում պարզ է, որ կորդններին տալիք յերկարությունը համեմատաբար մեծ պիտի լինի, քան սովորական ձևով տնկելու դեպքում։ Մեր այգեգործական տնտեսությունները հիմնական տեղում տնկելու համար վերցնում են 65—80 սմ յերկարությամբ

*) Կորդնի հողից դուրս գտնված մասը յերբեմն հողով ծածկում են կամ, ինչպես ասում են, բուկ են տալիս։

կտրոններ, իսկ տնկարանում տնկելու համար՝ 40—50 սանտիմետրանոց։ Կտրոնների տալիք յերկարությունը կախված է նաև փոփոխակի աճեցողությունից։ Յեթե տվյալ փոփոխակն ընդհանրապես թույլ աճեցողություն ունի և նրա մատերն այնքան կարճ են (ինչպես, օրինակ՝ ասկյարունը, Ղամարլուի կարաճմատ փոփոխակները), վոր չեն ապահովում կտրոնների պահանջվող յերկարությունը, ապա, պարզ է, վոր այդ փոփոխակը սովորական կտրոններով բազմացնելու դեպքում մենք հարկադրված ենք օգտագործել, վորպես բացառություն, համեմատաբար կարճ կտրոններ։ Այս դեպքում կտրոնները պետք տնկել միայն տնկարանում և արմատակալելուց հետո հիմնական տեղը փոխադրել։

4. ԿՏՐՈՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ (ՎԵՐՑՆԵԼՈՒ) ԺԱՄԱՆԱԿԸ

Կտրոնները պատրաստում են վազի հանգստի շրջանում, ընդհանրապես այգիներն ետելու ժամանակ։ Այն շրջաններում, վորտեղ կլիմայական տաք, բարենպաստ պայմանների շնորհիվ այգիները չեն թաղում և ետը կատարում են աշնանը կամ ձմեռը, կտրոնները պատրաստում են հենց այդ ետի ժամանակ, այսինքն՝ աշնան և ձմռան ընթացքում։ Կտրոնների աշնան կամ ձմռան պատրաստումն ունի մի շարք առավելություններ. նախ՝ հեշտանում է աշխատանքի կազմակերպումը տնտեսության մեջ, յերկրորդ՝ թեթևանում են գարնանը կատարվելիք աշխատանքները և յերրորդ՝ հնարավորություն ենք ունենում կտրոնները, հարկ յեղած դեպքում, ժամանակին հեռավոր վայրեր տեղափոխելու։ Այս տեսակետից, այնտեղ, վորտեղ կլիմայական պայմանները նպաստավոր են, կտրոններ պատրաստելը պետք սկսել հենց աշնանից, այգիների տերևաթափը վերջանալուց հետո։ Սակայն այդ նույն վայրերում ձմռան սառնամանիքային օրերին

կտրոնների պատրաստումը պետք դադարեցնել։ Ընդհանրապես տերևաթափից առաջ կտրոններ չպետք պատրաստել, որովհետև վազի մատերն այդ շրջանում դեռ լրիվ փայտացած չեն և բավարար չափով սննդարար նյութեր չեն կուտակել, հետևաբար, դրանցից պատրաստված կտրոնները որակով ցածր են (տես «Մատերի ընտրությունը» գլուխը)։ Այն շրջաններում, որտեղ ձմռան խիստ սառնամանիքների հետևանքով այգիները թաղում են, կամ էտը կատարում են գարնանը, կտրոնների գարնան պատրաստումը պետք սկսել, յերբ օրերը բավականաչափ տաքանան և յերբ այգիների հողն այնքան չորանա, որ հնարավորություն տա աշխատանք կատարելու։ Համենայն դեպս, որպես կանոն, վազերի բողբոջների բացման ժամանակ, առավել ևս դրանից հետո, կտրոններ չպետք պատրաստել, հետևաբար կտրոնների պատրաստման գործն այնպես պետք կազմակերպել, որ մինչև բողբոջների բացվելը (աչքերի փնդելը), այդ կարևոր աշխատանքն ամբողջովին ավարտված լինի։

Խորհրդ. Հայաստանի այգեգործական շրջաններում կտրոնները պատրաստում են միայն գարնանը՝ էտի ժամանակ։

5. ԿՏՐՈՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Կտրոնների ընտրության վրա հատուկ ուշադրություն պետք դարձնել։ Խաղողի ամեն մի փոփոխակ և փոփոխակի ամեն մի վազ չի կարելի օգտագործել բազմացման համար. յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է թե փոփոխակների և թե վազերի խիստ ընտրություն կատարել և մշակության արժանի վազերից միայն կտրոն ընտրել տնկելու համար։ Տնկվելիք այգիների կանոնավոր աճեցողությունը, ինչպես և նրանց ապագա բերքատվությունն զգալի չափով կախված է նրանից, թե ինչ կտրոններ են վերցնում բազմացնելու համար։ Ագրոտեխնիկական ձեռնարկումների լրիվ կոմպլեքսի ժամանակին

և բարձր վորակով կիրառելու հետ միասին, ընտիր կտրոնները հիմնականում ապահովում են նորատունկ այգիների ապագա բարձր բերքատվությունը թե վորակի և թե քանակի տեսակետից։ Կտրոններ ընտրելու համար անհրաժեշտ է նախորոք պարզել, թե խաղողի վոր փոփոխակներից պիտի կտրոններ հավաքել, այլ կերպ ասած՝ փոփոխակների ընտրություն կատարել։ Փոփոխակներն ընտրելուց հետո պիտի վազերի ընտրություն կատարել և այդ վազերից միայն կտրոնացու մատեր ընտրել։

ա․ Փոփոխակների ընտրությունը

Խաղողի փոփոխակների կանոնավոր ընտրությունը բացառիկ նշանակություն ունի այգիների բերքատվության բարձրացման գործում։ Անհատական մանր տնտեսության պայմաններում ամեն մի սեփականատեր-այգեգործ աշխատում է իր տնտեսության մեջ ունենալ մեծ քանակությամբ փոփոխակներ․ նա շատ հաճախ այդ հարցին մոտենում է իբրև սիրող և յերբեմն մշակում այնպիսի փոփոխակներ, վորոնք իրենց մի շարք հատկությունների հետևանքով արդյունաբերական նշանակությունից զուրկ են։ Սոցիալիստական այգեգործական խոշոր տնտեսություններում չի կարելի թույլ տալ փոփոխակների այդպիսի բազմազանություն, այլ անհրաժեշտ է ընտրել յուրաքանչյուր այգեգործական շրջանի և նույնիսկ յուրաքանչյուր խորհ․ կամ կոլտնտեսության համար սահմանափակ թվով փոփոխակներ, վորոնք տվյալ պայմաններում կարողանան ամենալավ արդյունքը տալ։ Այս կամ այն շրջանի համար փոփոխակներ ընտրելիս, կամ, ինչպես ասում են, շրջանային սորտիմենտ կազմելիս, պիտի հաշվի առնել հետևյալ պայմանները․

1․ տվյալ շրջանի բնական պայմանները, այսինքն՝ շրջանի կլիման, հողը, վոռոգման պայմանները և այլն։

2․ փոփոխակների աճեցողության և բերքատվության

պայմանները, նրանց դիմացկունությունը հիվանդություններին, վնասատուներին և բնական պատահարներին, բերքի վորակն ու քանակը, հասունացման շրջանը և այլն.

3. Նրանց, տնտեսական նշանակությունը.

4. Փոփոխակների բազմացման հնարավորությունները, այսինքն՝ վորքան են նրանք տարածված մշակության մեջ և վորքան կտրոններ կարելի յե նրանցից ունենալ բազմացման նպատակով.

5. Շրջանի այգեգործության ուղղությունը. միևնույն փոփոխակները չեն մշակվելու այգեգործության տարբեր ուղղությունների դեպքում. նայած, թե խաղողի հյութ ենք պատրաստելու, թե՞ գինի, կոնցենտրատ, թե՞ չամիչ, խաղողը վերամշակության ենք յենթարկելու, թե՞ թարմ դրությամբ ենք սպառելու, ըստ այնմ պետք մշակել տարբեր փոփոխակներ: Նույնը գինեգործության դեպքում—սեղանի՞ գինի յենք պատրաստելու, թե՞ թունդ կամ լիքյորային գինի, ըստ այնմ տարբեր փոփոխակներ ենք մշակելու:

Այս պայմաններից յելնելով՝ ՀԽՍՀ-ի Հողժողկոմատն առաջիկա տարիների համար առաջադրել ե շրջանային հետևյալ սորտիմենտն ըստ այգեգործության ուղղության*)

---

*) Ինչ վերաբերում ե Ալլահվերդու, Իջևանի, Շամշադինի, Գորիսի, Ղափանի, Ախտայի և Թալինի շրջանների այգեգործության ուղղությանն, ինչպես և այդ շրջանների սորտիմենտին, ապա այդ հարցերը ներկայումս ՀԽՍՀ-ի Հողժողկոմատի կողմից մշակվում են և շատ մոտ ապագայում այդ շրջանների համար ել կառաջադրվի համապատասխան այգեգործության ուղղություն և յուրաքանչյուր ուղղությանը՝ համապատասխան շրջանային սորտիմենտ:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՍՈՐՏԻՄԵՆՏՆ ԸՍՏ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ

ՇՐՋԱՆ-ՆԵՐ	Այգեգործության ուղղությունը	փոփոխակներ
I Ղամարլու	Սեղանային և պահունի խաղող	1. Ցեղանդարի, 2. Խալիլի, 3. Ասկյարի, 4. Քիշմիշ, 5. Խարջի, 6. Իծապտուկ, 7. Մսխալի, 8 Հաչաբաշ, 9. Ալախկի
	Գինի և կոնյակ	1. Մսխալի, 2. Խարջի, 3. Ճիլար, 4. Կախեթ, 5. Սպիտակ Մուսկատ, 6. Սև Մուսկատ, 7. Սեմիլյոն, 8. Սափերավի, 9. Կաբերնե.
	Խաղողի հյութ	1. Մսխալի, 2. Խարջի, 3. Ճիլար, 4. Կախեթ.
II Վեդու	Սեղանային և պահունի խաղող	1. Ցեղանդարի, 2. Խալիլի, 3. Քիշմիշ, 4. Իծապտուկ, 5. Մսխալի, 6. Հաչաբաշ, 7. Ալախկի
	Գինի և Կոնյակ	1. Խարջի, 2. Ճիլար, 3. Մսխալի, 4. Կախեթ, 5. Կաբերնե, 6. Սափերավի, 7. Սպիտակ մուսկատ, 8. Սև մուսկատ, 9. Սեմիլյոն, 10. Սերսիալ, 11. Բանանց
	Զամիչ	1. Հաչաբաշ, 2. Մսխալի, 3. Ալեքսանդրյան մուսկատ 4. Իծապտուկ
III Վաղարշապատի	Սեղանային և պահունի խաղող	1. Ցեղանդարի, 2. Խալիլի, 3. Ասկյարի, 4. Քիշմիշի, 5. Իծապտուկ, 6. Սպ. շասլա, 7. Մսխալի, 8. Ալախկի, 9. Թավրիզենի, 10. Ալեքսանդրյան Մուսկատ, 11. Հաչաբաշ
	Կոնցենտրատ	1. Խարջի, 2. Ճիլար
	Գինի և Կոնյակ	1. Ճիլար, 2. Սպ. Մուսկատ, 3. Սև Մուսկատ, 4. Խարջի, 5. Սեմիլյոն, 6. Պեդրո-խիմենես, 7. Վերդելո, 8. Ռքածիթելի, 9. Սերսիալ, 10. Մսխալի

Շրջան-ներ	Այգեգործության ուղղությունը	Փոփոխակներ
IV Հոկտեմբերյան	Սեղոնային և պահունի խաղող	1. Ցեղանդարի, 2. Խալիլի, 3. Ասկյարի, 4. Գառանդմակ, 5. Քիշմիշի, 6 Մսխալի, 7. Իծապտուկի, 8. Ալ. շասլա, 9. Հաչաբաշ, 10. Ալախկի, 11. Թավրիզենի, 12. Ալեքսանդրյան Մուսկաա
	Խաղողի հյութ	1. Մսխալի, 2. Ճիլար,[3. Գառանդմակ, 4. Բանանց, 5. Խարջի
	Գինի և Կոնյակ	1. Խարջի, 2. Ճիլար, 3. Ալ. Մուսկատ, 4. Սև Մուսկատ, 5. Սեմիլիոն, 6. Մսխալի, 7. Պեդրոխիմենես, 8. Սերսիալ, 9. Վերդելո, 10. Կաբերնե, 11. Սափերավի, 12. Գառանդմակ,
	Զամիչ	1. Մսխալի, 2. Հաչաբաշ, 3. Իծապտուկ, 4. Ալեքսանդրյան Մուսկատ։
V Ցերևան քաղաք	Սեղոնային և պահունի խաղող	1. Մսխալի, 2. Խարջի, 3. Քիշմիշի, 4. Հաչաբաշ, 5. Ասկյարի, 6. Ցեղանդարի, 7. Խալիլի, 8. Ալախկի, 9. Իծապտուկ
VI Մեղրու	Զամիչ	1. Ալադուրա
VII Միկոյանի	Սեղոնային և պահունի խաղող	1. Քիշմիշի, 2. Ցեղանդարի, 3. Խալիլի 4. Հաչաբաշ, 5. Մսխալի
	Գինի և կոնյեկտրատ	1. Մալաճի, 2. Ալիգարա, 3. Ճիլար, 4. Մսխալի, 5. Կախեթ
VIII Ազիզբեկովի	Սեղոնային և պահունի խաղող	1. Քիշմիշ, 2. Ցեղանդարի, 3. Խալիլի, 4. Հաչաբաշ, 5. Մսխալի
	Գինի և Կոնյեկտրատ	1. Մսխալի, 2. Ալիգարա, 3. Ճիլար, 4. Մալաճի, 5. Կախեթ
IX Կոտայքի	Սեղոնային և պահունի խաղող	1. Խարջի, 2. Մսխալի, 3. Հաչաբաշ, 4. Քիշմիշ, 5. Ցեղանդարի, 6. Խալիլի, 7. Ալախկի, 8. Իծապտուկ

Շրջաններ	Այգեգործության ուղղությունը	Փոփոխակներ
X Աշտարակի	Սեղանային և պահածոյի խաղող	1. Ցեղանդարի, 2. Խալիլի, 3. Քիշմիշի, 4. Իծապտուկ, 5. Մսխալի, 6. Հալաղի, 7. Ալախկի, 8. Հաչաբաշ
	Կոնցենտրատ	1. Խարջի, 2. Ճիլար
	Գինի և Կոնյակ	1. Խարջի, 2. Սպիտակ մուսկատ, 3. Ճիլար, 4. Որդուցի ճիլար, 5. Մսխալի

Ինչպես տեսնում ենք, յուրաքանչյուր շրջանին տված է այգեգործության կոնկրետ ուղղություն և յուրաքանչյուր ուղղությանը համակցված են փոքր թվով փոփոխակներ։ Հետևապես փոփոխակներն ընտրելիս՝ մենք պետք է ելնենք տվյալ շրջանի այգեգործության ուղղությունից և շրջանային սորտիմենտից։ Այս տեսակետից ամեն մի խորհ. և կոլ. տնտեսություն, ստանալով վերադաս օրգանների (հողբաժին, համապատասխան տրեստ, ՄՏԿ և այլն) կողմից առաջադրված այգեգործության ուղղությունն ու զարգացման պլանը և համարեցնելով այն յուր պայմաններին, հաշվի է առնում կարողները ձեռք բերելու հնարավորությունները և ապա դրա հիման վրա շրջանային սորտիմենտից փոփոխակների ընտրություն կատարում։ Ինչ թվով փոփոխակներ պետք է ընտրի այգեգործական յուրաքանչյուր տնտեսություն։ Դա կախված է թե այգեգործության ուղղությունից և թե փոփոխակները բազմացնելու հնարավորություններից։ Եթե այգեգործության ուղղությունը պահանջում է խաղողը վերամշակման ենթարկելու այս կամ այն պրոդուկտը (գինի, հյութ, կոնցենտրատ, չամիչ և այլն) ստանալու նպատակով, ապա համեմատաբար քիչ քանակությամբ (3—4) փոփոխակներ պետք է մշակել, իսկ եթե խաղողն սպառվելու է թարմ դրությամբ, ապա խաղող գործածելու ժամանակամի-

Ջոցը յերկարացնելու համար նպատակահարմար ե փոփոխակների քանակը հասցնել 5—6-ի և նույնիսկ ավելի: Բայց հաշվի առնելով փոփոխակները բազմացնելու հնարավորությունները՝ տնտեսությունը հաճախ ստիպված ե լինում ավելի մեծ թվով փոփոխակներ ընտրելու, քան ինքը՝ տնտեսությունը ցանկանում ե բազմացնել: Այսպես, օրինակ, տնտեսության համար վաղահաս փոփոխակներից նպատակահարմար ե, դիցուք, բազմացնել միայն յեզանդարին, բայց վորովհետև այդ փոփոխակը մեր այգիներում շատ քիչ քանակությամբ ե տարածված և նրանից պահանջվող քանակությամբ կտրոններ չեն ստացվում, ապա վաղահաս խաղողի քանակն ապահովելու նպատակով, տնտեսությունն ստիպված ե յեզանդարու հետ միասին ընտրել նաև խալիլին (թե սպիտակը, թե սևը), վորը նույնպես վաղահաս փոփոխակ ե:

Համենայն դեպս, այգեգործության յուրաքանչյուր տնտեսություն պիտի աշխատի հնարավորության սահմաններում քիչ թվով փոփոխակներ բազմացնել և, վորպես կանոն, տվյալ շրջանային սորտիմենտից դուրս փոփոխակ չընտրել: Փոփոխակների ընտրության հետ միասին անհրաժեշտ ե կազմել նաև կտրոնների մթերման համար առանձին պլան*) և նախապատրաստական աշխատանքներ տանել տնկարանները և տնկվելիք այգիները պահանջվող քանակությամբ կտրոններով ապահովելու նպատակով: Ընտրած փոփոխակների ապահովումը պահանջում ե, վոր Հողժողկոմատի այգեգործական վարչության ղեկավարությամբ և գիտա-հետազոտական հիմնարկությունների օժանդակությամբ այգեգործական տնտեսությունները վազի վեգետացիոն շրջանում կատարեն այդ փոփոխակների պիտակավորում (յարլիկավորում): Դրա համար յինելով

*) Կտրոնների մթերման պլանը հաստատվում ե համապատասխան վերադաս օրգանների (հողբաժին, ՄՏԿ, համապատասխան տրեստ և այլն) կողմից:

խաղողի կտրոններ (մատեր) մթերելու հանրապետական ընդհանուր պլանից՝ պետք է ըստ առանձին փոփոխակների վազերի ընտրություն և պիտակավորում կատարել։

Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1936 թ. նոյեմբերի 6-ի «Հայկական ԽՍՀ-ում մրգաբուծությունը և խաղողաբուծությունը զարգացնելու 1936 թ. աշնան և 1937 թ. պլանի մասին» վորոշման համաձայն, 1937 թ. աշնան և 1938 թ. գարնան ընթացքում տնկվելիք այգիները տնկիներով ապահովելու համար, 1937 թվականի գարնանը պետքե մթերեն յոթ միլիոն յոթ հարյուր հինգ հազար (7.705.000) կտրոն։ Ըստ առանձին փոփոխակների կտրոնների մթերման նշած պլանը բաշխվում է հետեվյալ ձևով.

Մուսկատ	280.000	Հաչաբաշ	380.000
Սեմիլոն	70.000	Յեզանդարի	24.000
Սերսիալ	15.000	Խալիլի	22.000
Պինո	10.000	Բիշմիշի	148.000
Տոկայ	5.000	Ալախկի	35.000
Վերդելիոս	5.000	Իծապտուկ	52.000
Խարջի	2.600.000	Գառանդմակ	816.000
Մսխալի	1.100.000	Ալիգարա	15.000
Ճիլար	785.000	Ջանազան	43.000
Կախեթ	1.300.000		
Ընդամենը			7.705.000

բ. Վազերի ընտրությունն ու պիտակավորումը

Վորքան էլ փոփոխակները ճիշտ ընտրած լինենք, այնուամենայնիվ ընտրած փոփոխակի ամեն մի վազ չի կարող պիտանի համարվել բազմացման համար այն պարզ պատճառով, վոր յուրաքանչյուր փոփոխակի սահմանում պահվում են առանձին վազեր, վորոնք իրենց մի շարք վատ հատկությունների հետևանքով միանգամայն անպետք են բազմացման համար։ Անշուշտ նույն փոփոխա-

կի բոլոր վազերը, մշակության միևնույն պայմաններում անգամ, չունեն արդյունաբերական միևնույն նշանակությունն ու արժեքը և հաճախ իրարից տարբերվում են մի շարք, մշակության համար կարևոր հատկություններով։ Հիրավի մեր այգիներում յեղած բոլոր խարջիները միևնույն խարջին չեն․ անշուշտ նույն այգում վորակավոր և բարձր բերքատվությամբ խարջիների հետ միասին պատահում են նաև անբերրի, կամ սակավաբեր և վատորակ խարջիներ, վորոնց վողկույզները շատ փոքր են և պտուղները (գիլաները) յերբեմն այնքան մանր, վոր մեր պրակտիկ այգեգործներն այդպիսի խարջիները «ծտի խաղող» են անվանում։ Նմանապես նույն այգում մենք կարող ենք գտնել կանոնավոր աճող և այս կամ այն հիվանդությանը համեմատաբար դիմացկուն ու լավ հատկություններով խարջիների հետ միասին նաև թույլ, նվազ աճող, հիվանդություններին չդիմացող և մի շարք վատ հատկություններ ունեցող խարջիներ։ Նույնը կարելի յե ասել նաև բոլոր փոփոխակների մասին։ Ուրեմն ամեն մի փոփոխակի բոլոր վազերը միատեսակ չեն։ Կան մշակության համար միանգամայն պիտանի և բազմացման համար արժանի վազեր, սակայն դրանց կողքին կան և այնպիսի վազեր, վորոնք վոչ միայն արժանի չեն բազմացնելու համար, այլև ավելի շուտ յենթակա յեն վոչնչացման։ Այստեղից պարզ է, վոր միևնույնը չէ՝ թե ինչ վազերից ենք կտրոններ ընտրում բազմացնելու համար։ Սակավաբեր և վատ հատկություններ ունեցող վազերը բազմացնելիս մենք նորից վատ և սակավաբեր վազեր ենք ստանում, հետևապես կտրոններ վերցնելիս՝ մենք լուրջ ուշադրություն պիտի դարձնենք վազերի ընտրության վրա և նրանցից արժեքավորները միայն ընտրենք հետագայում բազմացնելու համար։ Պիտի լավ հիշել այն, վոր նոր այգիների բերքատվությունը մեծապես կախված է նրանից, թե ինչ ժա-

ռանգական հատկություններ ունեցող կորոններ ենք օգտագործել այգիներ անկելու համար։

Բազմացման նպատակով վազեր ընտրելիս՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նրանց հետևյալ հատկությունների վրա.

1. ընտրած վազերը միանգամայն առողջ պետք է լինեն և մըլդյուով (չոռ), օիդիումով (սև), անտրակնոզով և այլ հիվանդություններով վարակված չլինեն, քանի որ հիվանդ վազերի կորոնները լավ չեն կպչում, թույլ են աճում և հեշտությամբ այս կամ այն հիվանդությունով նորից են վարակվում.

2. վազերը պետք է կանոնավոր աճած լինեն և բավարար քանակով լավ փայտացած մատեր ունենան. թույլ և նիհար վազերի կորոնները դժվարությամբ են կպչում և անհաջող զարգանում.

3. այն վազերը, վորոնք տառապում են ծաղկավիժումով (ծաղիկները թափվում են). բազմացման համար նույնպես անպետք են, վորովհետև այդ հիվանդագին յերևույթը հաճախ կրում է ժառանգական բնույթ, այնպես, որ այդ վազերը կորոններով բազմացնելու դեպքում մենք ստանում ենք նույնպես ծաղկավիժումով տառապող և սակավ բերք տվող վազեր։ Չպետք վերցնել կորոններ նաև այն վազերից, վորոնք տառապում են պտղավիժումով (պտուղները թափվում են).

4. Նշանակություն ունի նաև վազի հասակը։ Յերիտասարդ վազերի պտղաբերությունը, ինչպես և նրանց մի շարք հատկությունները դեռ լրիվ արտահայտված չեն, հետևապես նրանց ընտրությունը, բազմացնելու նպատակով, բավականին դժվար է, և այս դեպքում հաճախ մենք սխալ յեզրակացության կարող ենք հանգել։ Տվյալ փոփոխակի կորոնների սուր կարիքի դեպքում միայն կարելի յե յերիտասարդ վազերից կորոններ վերցնել։ Կորոններ չպետք

վերցնել նաև շատ հին և ծերության շրջանը թևակոխող վազերից,

5. բազմացման արժանի չեն միայն լավ բերքատու վազերը. անհրաժեշտ է ընտրել այնպիսի վազեր, որոնք թե որակով և թե քանակով բարձր բերք են տալիս.

6. վերջապես մեր ցանկացած փոփոխակներից միայն վազերի ընտրություն պիտի կատարել և պատվաստման ժամանակ մեկ փոփոխակի վազերը մյուս փոփոխակի հետ չպիտի խառնել։

Ահա թե ինչ հատկությունների վրա է, որ պիտի ուշադրություն դարձնել վազերն ընտրելու ժամանակ։

Երբ պիտի կատարել վազերի ընտրությունը։ Գարնան եալ ժամանակ հնարավոր չէ վազի ընտրություն կատարել, նախ՝ գարնանը դժվար է փոփոխակները ճանաչել և, բացի դրանից, մենք չենք կարող ճշգրիտ գաղափար կազմել վազերի մի շարք կարևոր հատկությունների մասին, ինչպես, օրինակ՝ բերքատվությունը, հիվանդությունների դիմանալը և այլն. հետևապես վազերի ընտրությունը պիտի կատարել վեգետացիոն (աճեցողության) շրջանում, երբ լրիվ կերպով արտահայտվում են վազի բոլոր հատկությունները, և երբ մենք հնարավորություն ունենք ճիշտ կերպով ճանաչելու թե փոփոխակները և թե նրանց բոլոր հատկությունները։ Ընդհանրապես վազերի ընտրության աշխատանքները սկսում են ամառվա յերկրորդ կիսին խաղողի ֆիզիոլոգիական հասունացման պահին և վերջացնում այգեկութի ժամանակ։ Վազերի ընտրության համար կա յերկու ձև.

1. **Ընտրություն բացասական հատկանիշներով.** ընտրում են սակավաբեր և վատ հատկություն ունեցող վազերը, որոնք իրենց վատ հատկությունների հետևանքով բազմացման համար ցանկալի չեն և դրանց վրա հատուկ նշաններ անում (պիտակներ—յարլիկներ կախում)։ Նշան արած վազերից կտրոններ չեն վերցնում, այլ կտրոններ ընտրում են պիտակ չկապած վազերից։

2. Ընտրությունը դրական հատկանիշներով. այս դեպքում ընտրում են լավ հատկություններ ունեցող վազեր, վորոնք ցանկալի յեն բազմացման համար, և դրանց վրա միայն նշաններ անում: Կտրոններ վերցնում են միայն նշան արած վազերից: Այս ձևն ավելի վստահելի յե, քան առաջինը, սակայն համեմատաբար շատ բանվորական ձեռք ե պահանջում և ընտրությունը համեմատաբար յերկար ե տևում, քան առաջինի դեպքում:

Վո՞ր ձևը պետք կիրառել Խորհրդային Հայաստանի այգեգործական տնտեսություններում: Անշուշտ, յեթե մեր այգիները տնկված լինեյին առանձին փոփոխակներով, այլ վոչ թե խառը (խոսքս հին այգիների մասին ե), ապա մենք կկիրառեյինք առաջին ձևը, այսինքն՝ ընտրությունը բացասական հատկանիշներով: Բայց վորովհետև խառը տնկած այգիներում փոփոխակներն իրարից տարբերելու համար մենք պետք նաև նրանց համարակալենք, ապա պարզ ե, վոր ընտրության առաջին ձևն այս դեպքում կիրառելի չե: Նման դեպքերում պետք կիրառել միայն յերկրորդ ձևը, այսինքն՝ ընտրությունը դրական հատկանիշներով: Սակայն կան և այգիներ, վորտեղ հիմնականում գերակշռում ե փոփոխակներից վորևե մեկը, ինչպես օրինակ՝ Ղամարլուի շրջանի մի շարք այգիներում տարածված ե համարյա թե միայն կախեթ փոփոխակը, Յերևանի և Վաղարշապատի այգիներում՝ խարջին, Վեդու շրջանի վորոշ այգիներում՝ մսխալին, Հոկտեմբերյանի շրջանում՝ գառանդմակը, Մեղրում՝ ալադուրան, և այլն: Այդ այգիներում ընտրությունը կարելի յե կատարել առաջին ձևով, սակայն այս դեպքում նշանակում են թե հիմնական փոփոխակի վատ վազերը և թե առանձին համարներով պիտակավորում են այդ այգիներում յեղած կողմնակի փոփոխակները, հետևապես, առանց նշանի մնում են միայն հիմնական փոփոխակի ընտիր վազերը, վորոնցից և մենք կտրոններ ենք վերցնում: Նույն այդ ձևը մասամբ հնարավոր ե կիրառել

նաև մեր յերիտասարդ այգիներում (I, III խորհ. տնտեսություններ), վորտեղ փոփոխակները տնկված են առանձին կվարտալներով։

Վագերը նշանակելու համար գործ են ածում փայտյա կամ թիթեղյա պիտակներ 5—7 սմ յերկարությամբ և 3—4 սմ լայնությամբ։ Պիտակները յերկաթյա լարերի (լավ է գործածել ցինկապատ լար, վոր անհամեմատ ավելի յերկար է դիմանում) օգնությամբ կապում են վագերի բներին կամ բազմամյա թևերին։ Մեզ մոտ գործածում են գլխավորապես թիթեղյա համարագրված *) պիտակներ։ Դրական հատկանիշներով ընտրություն կատարելու դեպքում անհրաժեշտ է յուրաքանչյուր փոփոխակին հատկացնել վորոշ համարով պիտակներ և այդ պիտակներով միայն տվյալ փոփոխակը նշանակել։ Մեր փոփոխակների համարագրությունը տալիս է Հողժողկոմատի այգեգործական վարչությունը, վոր ղեկավարում է պիտակավորման աշխատանքները մեզ մոտ։ Վագերի ընտրության գործը պետք հանձնել փորձված մարդկանց, վորոնք թե փոփոխակները լավ ճանաչել կարողանան և թե ընտրությունը ճիշտ կատարել։

գ. Մասերի ընտրությունը յեվ կտրոններ պատրաստելը

Կտրոնների վորակը մեծապես կախված է նրանից, թե ինչ մասերից են նրանք վերցված։ Ամեն մի մաս չի կարող պիտանի համարվել լավ կտրոն պատրաստելու համար, վորովհետև, անգամ կանոնավոր ընտրած վագի բոլոր մասերը միատեսակ չեն և կտրոններ վերցնելու համար չունեն միևնույն նշանակությունն ու արժեքը։ Անշուշտ ժառանգական լավ հատկություններ ունեցող նույն վագի վրա առողջ, նորմալ զարգացած մասերի հետ յերբեմն պատահում են նաև թույլ, անկանոն զարգացած, այս կամ

*) Թիթեղը կարելի յե ձեռք բերել Յերևանի Կոնսերվի գործարանի թիթեղագործական բաժնի թափթփուկներից։

այն հիվանդություններով վարակված և մի շարք վատ հատկություններ ունեցող մատեր։ Այս տեսակետից լավ և հաջող կտրոններ ստանալու համար բավական չի միայն վազերի ընտրություն կատարել, այլ անհրաժեշտ է նաև այդ վազերից լավ վորակով մատեր ընտրել և դրանցից միայն կտրոններ պատրաստել։ Մատերի ընտրության ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նրանց հետևյալ հատկությունների վրա.

1. մատերն առողջ ու կանոնավոր զարգացած լինեն, հետևապես վերքեր և հիվանդությունների հետքեր չպիտի ունենան, կարկտահարված կամ ցրտահարված չպիտի լինեն, նորմալ զարգացած աչքեր պիտի ունենան, վորոնք սևացած չպիտի լինեն (ցրտահարությունից կամ այլ պատճառից).

2. մատերը լավ հասունացած և լրիվ փայտացած պիտի լինեն. հետեվապես, նայած փոփոխակին՝ կարմրավուն, գորշավուն, դեղնավուն կամ մոխրագույն կեղև պիտի ունենան։ Բնափայտը պիտի խիտ լինի և վոչ փխրուն. ունենա համեմատաբար փոքր խողովակներ և ավելի հաստ լինի, քան միջուկը (ծուծը)։ Վորչափ վերջինս սահմանափակ է իսկ բնափայտը լավ զարգացած, այնքան մատն ավելի լավ է հասունացած.

3. մատերը միջին հաստության պիտի լինեն, պիտի աչքը սովորեցնել յուրաքանչյուր փոփոխակի միջին հաստությանը, վորոհետև, որինակ՝ հաչաբաշի մատն ընդհանրապես ավելի հաստ է քան խարջունը կամ ճիլարինը, իսկ վերջիններինս ավելի հաստ է, քան Ղամարլուի կախեթինը կամ կարճամատինը.

4. մատերը միջին յերկարության միջհանգույցներ պիտի ունենան, այսինքն՝ հանգույցները (կոպերը) իրարից վոչ շատ մոտ և վոչ ել շատ հեռու պիտի դասավորված լինեն։ Այստեղ ևս աչքը պիտ սովորեցնել յուրաքանչյուր

փոփոխակի միջհանգույցի միջին յերկարությանը, օրինակ՝ մսխալին, քիշմիշն ավելի յերկար միջհանգույցներ ունեն, քան ճիլարը, խարջին, մանավանդ կարճամատը, ասկյարին.

2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում բերած ցուցանիշները ցույց են տալիս, վոր մատերը լավ են սնվել և սննդանյութերով հարուստ են։ Հիրավի միայն սննդանյութերով հարուստ կտրոնը կարող է լավ արմատակալել և հաջող զարգանալ։ Բարակ մատերը մնացել են բարակ, վորովհետև անհրաժեշտ քանակությամբ սնունդ չեն ունեցել և չեն կարողացել աճել, իսկ հաստ մատերն ուժեղ և արագ աճեցողության հետևանքով, բոլոր սննդարար նյութերը ծախսել են իրենց աճման վրա և կուտակում չեն կատարել կամ քիչ են կատարել, հետևապես, թե բարակ և թե հաստ մատից վերցրած կտրոնները դժվարությամբ են արմատակալում ու անհաջող զարգանում և նրանց չնչին տոկոսն է կպչում։

5. մատերը վորոշ յերկարություն պիտի ունենան։ Յեթե մատերն այնքան կարճ են, վոր չեն ապահովում կտրոնների պահանջվող յերկարությունը (տես «Կտրոնների յերկարությունը» գլուխը), ապա պարզ է, վոր այդ մատերից կտրոններ չպիտի վերցնել։ Յերկար, բայց նորմալ զարգացած մատից հնարավոր է վերցնել յերկու և նույնիսկ ավելի կտրոն (տալով կտրոններին պահանջվող յերկարություն).

6. մատերը պետք է նստած լինեն յերկամյա բնափայտի (յերկու տարեկան մատի) վրա։ Բնամատից (հոսամատ) և բճամատից (տերևի ծոցից դուրս յեկած մատ—բճաշիվ) կտրոններ չպիտի վերցնել, վորովհետև նրանք, քիչ քանակությամբ սննդարար նույթեր պարունակելու հետևանքով, դժվարությամբ են արմատակալում.

7. մատերի ընտրությունը պիտի կատարել միայն պիտակավորված այգիների ընտիր վազերից։

Անհրաժեշտ է, վոր այգեգործական ամեն մի խորհրդ-

և կոլ. տնտեսություն հաշվի առնի մատերի վերև թված հատկությունները և ըստ այնմ էլ կտրոններ վերցնի:

Մատերի ընտրությունը սովորաբար կատարում են կտրոններ վերցնելու ժամանակ: Այդպես են անում և մեզ մոտ՝ Խորհրդային Հայաստանում. գարնանը, ետի ժամանակ թե մատերն են ընտրում և թե կտրոններ վերցնում: Անհրաժեշտ է վորակյալ ետվորներից հատուկ բրիգադներ (մատ բռնողներ) կազմակերպել, վորոնք նախքան այգիների համատարած ետը, մատերի ընտրություն կատարեն և այդ մատերից կտրոններ պատրաստեն:

Նկ. 16. Կտրոնների խուրձ

Բրիգադի յուրաքանչյուր անդամ լավ պիտի գիտակցի մատերի ընտրության կարեվորությունը յեվ ընտիր մատերից միայն կտրոններ վերցնի. սակայն այնպես, վոր մայր վազի բերքատվությունն ապահովված լինի:

Ընտրած մատերը համապատասխան տեղերից (նայած քանի աչք է մնալու վազի վրա) կտրում են և տալով կտրոններին պահանջվող յերկարություն, նրանց ծայրի բարակ մասերը հեռացնում են: Կտրոնների վրա յեղած բոլոր թելիկներն ու բճամատերը նույնպես հեռացնում են: Այնուհետև կտրոնը հիմքում հանգույցի տակ հորիզոնական ուղղությամբ հարթ կտրում են: Պատրաստված կտրոնները հավաքում են մի

տեղ և նրանցից խրձեր կազմում ու 1—2 տեղից լարով կամ Թոկով (կարելի յե և խաղողի մատով, ուռենու շվով) ամուր կապում։ Խրձերն այնպես պիտի կապել, վոր կտրոնների հիմքերը մեկ մակարդակի վրա լինեն (նկ. 16.)։

Ամեն մի խրձի վրա փայտյե պիտակ*) են կախում, վորի վրա գրում են փոփոխակի անունը, կտրոնների պատրաստման վայրը, ամսաթիվը, կտրոնների քանակը և, դիմազրկությունը վերացնելու համար, խրձեր կապողի ազգանունը։ Այսպես, որինակ՝ պիտի գրել. «Խարջի, I. Խորհ. տընտես.—Դալմա, 10/IV—1937 թ. Ջաղոյան Գրիգոր»։ Յեթե խրձերն ստանդարտ մեծության են (միևնույն քանակությամբ կտրոններից են կազմված), ապա պիտակների վրա կտրոնների քանակը կարելի յե չգրել։ Թե կտրոններ վերցնելու և թե խրձեր կապելու ժամանակ վոչ մի դեպքում մեկ փոփոխակի կտրոնները մյուս փոփոխակի հետ չպիտի խառնել։ Մեզ մոտ՝ Խորհդային Հայաստանում ընդհանրապես 200 կտրոնից մի խուրձ են կապում։ Կտրոնները (խրձերը) բացոթյա, մանավանդ տաք ու չոր յեղանակներին, մեծ քանակությամբ ջուր են գոլորշիացնում և հեշտությամբ չորանում են։ Այս պատճառով, պատրաստված խրձերը հենց նույն որը պիտի տեղափոխել նշանակված տեղը, վորտեղ նրանց վորոշ ձևով պահում են մինչև տնկելը։

6. ԿՏՐՈՆՆԵՐԻ ՊԱՀԵԼՆ ՈՒ ՓՈԽԱԴՐԵԼԸ

Աշնան թե գարնան պատրաստած, ինչպես և ուրիշ տեղից ստացած կտրոնները մինչև տնկելը պիտի կանոնավոր պահել։ Կտրոնները պահելու վրա լուրջ ուշադրություն պիտի դարձնել, վորովհետև նրանց կպչելու հաջողությունը կախված ե նաև կտրոնները պահելու պայմաններից։ Յերբեմն կտրոնները պահելու վրա հարկ յեղած ուշա-

*) Կարելի յե և թիթեղե համարագրված պիտակ կապել, այս դեպքում գրելը հնարավոր չե։

դրություն չեն դարձնում և, վատ պայմաններում պահելու հետևանքով, լավ ընտրված կորմները տնկման բարենպաստ պայմաններում անգամ անհաջող են կպչում, նրանց չնչին տոկոսն է միայն զարգանում: Մինչդեռ տնկման նույն պայմաններում, նույն որակի, բայց լավ վիճակում պահպանված կորմներն ուժեղ արմատներ ու շվեր են արձակում և շատ հաջողությամբ են զարգանում: Կորմներն այնպես պիտի պահել, որ նրանք թարմ ու միանգամայն առողջ լինեն, չցրտահարվեն, չորությունից կամ չափից ավելի խոնավությունից չփտավեն, չբորբոսնեն, նրանց բողբոջները (աչքերը) սևացած, փտած չլինեն, կամ ժամանակից շուտ չբացվեն: Դրա համար կորմների պահելու տեղը (միջավայրը) պիտի ունենա.

1. համեմատաբար ցածր ջերմություն (ամենից լավն է +2°-ից մինչև 6°C). բարձր ջերմության (10°-ից բարձր) դեպքում բողբոջները կարող են ժամանակից շուտ բացվել և շվեր արձակել, որոնք կարճ ժամանակից հետո փչանում են. այս դեպքում կորմները հաջողությամբ չեն արմատակալում (տես եջ 28 և 60): Չափազանց վնասակար է բարձր ջերմությունը, մանավանդ, յեթե միջավայրը շատ խոնավ է լինում: Նման պայմաններում բողբոջները փտում են և նույնիսկ կորմները կարող են կորցնել կպչելու ունակությունը: Մյուս կողմից՝ շատ ցածր ջերմությունը նմանապես վնասակար է, որովհետև սառնամանիքներից կորմները հեշտությամբ ցրտահարվում են*).

2. չափավոր խոնավություն (մոտ 10%). շատ խոնավ պայմաններում կորմները հեշտությամբ կարող են բորբոսնել և նեխել, բողբոջները նույնպես կարող են նեխել. չոր պայմաններում՝ կորմները մեծ քանակությամբ ջուր

*) Անհրաժեշտ է հիշել, որ կորմների ցրտադիմացկունությունն անհամեմատ ավելի թույլ է, քան վազերի վրա թողած մատերինը:

են գոլորշիացնում և անգամ այնքան չորանում, վոր կորցնում են իրենց կենսունակությունը.

3. բավարար քանակով օդ։ Օդի պակասության դեպքում կորմները նեխում, փտում և տնկելու համար անպետք են դառնում։

Այս յերեք հիմնական պայմանների կիրառումը միանգամայն ապահովում է կորմների կանոնավոր պահպանությունը։ Այս տեսակետից, վորտեղ և ինչ ձևով ել կորմներ պահելու լինենք, միևնույն է, այդ պայմանների վրա հատուկ ուշադրություն պիտի դարձնել. առաջինը հիշել՝ վորքան կորմներն առողջ են և կանոնավոր հասունացած, այնքան նրանք թե տեղում լավ են պահվում և թե փոխադրելուց չեն տուժում. յերկրորդ՝ պիտի աշխատել վոր կորմների պահելու միջավայրը (հող, ավազ) վերը թված պայմաններն ունենա։

Կորմները պահում են ավազի կամ հողի մեջ.

1. բացօթյա պայմաններում՝ խրամատների մեջ (կորմները պահելու հասարակ և ամենատարածված ձևն է հանդիսանում).

2. ծածկի (չարդախի) տակ (под навесом).

3. նկուղներում կամ այդ նպատակով կառուցված հատուկ պահեստարաններում։

1. Կորմների խրձերը բացօթյա պայմաններում պահելու համար, վորևէ ազատ, բայց վոչ խոնավ, տեղում (այգում) փորում են 0,5—1 մետր, անգամ ավելի խորությամբ (վոր կախված է խրձերի յերկարությունից կամ թե նրանց հաստությունից, յեթե խրձերը հորիզոնական դրությամբ ենք դասավորելու). 1,5—2 մետր լայնությամբ և վորոշ յերկարությամբ խրամատներ (առուներ). յերկարությունը կախված է կորմների (խրձերի) քանակից։ Խրամատների մեջ խրձերը դասավորվում են իրար կից ուղղահայաց (կանգնած) կամ հորիզոնական (պառկած) կամ թեք դրությամբ. դասավորելու հետ միաժամանակ

խրձերի արանքները հողով լցնում են։ Դասավորելուց հետո խրամատը վերևից փուխր հողով (ավազախառն) բոլորովին ծածկում են, այնպես որ տեղավորված խրձերի վրա որոշ մեծությամբ հողաշերտ (ծածկոց) կազմվի, որի (հողաշերտի) հաստությունը, կորոնները գարնանը պահելու դեպքում, շատ փոքր է լինում (մոտ 10 սմ.). ընդհակառակը՝ աշնանը պահելու դեպքում խրձերի վրա հողի ավելի հաստ շերտ են կազմում (15—30 սմ, որը կախված է տվյալ շրջանի ձմրան ջերմության պայմաններից)։ Համենայն դեպս այդ ծածկոցը գետնի յերեսից բարձր պիտի լինի, որպեսզի խրամատների մեջ շատ խոնավություն չկուտակվի (տես Նկ. 17)։ Աշնանը խրձերն, ընդհանրա-



Նկ. 17. Խրձերի պահելը խրամատներում

պես ուղղահայաց են դասավորում, իսկ գարնանը՝ հորիզոնական, կամ թեք։

Յերբեմն գարնան տաք օրերին խրամատների հողը շատ է չորանում. այս դեպքում անհրաժեշտ է, ժամանակ առժամանակ, հողը խոնավացնել՝ շաղ տալով նրա վրա քիչ քանակությամբ ջուր։ Այս ձևով կորոնները պահում են մինչև տնկելը կամ մի այլ տեղ փոխադրելը (ուղարկելը)։

2. Կարելի յե նույնպիսի խրամատներ պատրաստել նաև մի որևէ ազատ ծածկի կամ չարդախի տակ, որտեղ կորոնների խրձերը դարսում են և ծածկում նույն ձևով, ինչպես և բացօթյա պայմաններում պահելու դեպքում։ Բացի

դրանից, ծածկի տակ կորմնները պահում են հետևյալ ձևով. ծածկի պատի ուղղությամբ, գետնի վրա մոտ 10 սմ բարձրությամբ ավազ են փռում, վորի վրա կողք-կողքի պառկեցնում են կորմնների խրձերը, դրանց վրա նորից ավազ են լցնում (մոտ 5 սմ բարձրության շերտով), ապա այդ ավազի վրա դարսում են դարձյալ խրձեր, վորոնց վրա նույն հաստության շերտով նորից ավազ լցնում և այդպես շարունակում մի-մի շարք կորմնի խրձեր և մի-մի շարք ավազի շերտեր, մինչև վոր ամբողջ կույտի բարձրությունը հասնի մոտ յերկու մետրի։ Վերջին շարքը պետք է ծածկված լինի մոտ 15—20 սմ ավազի շերտով։ Սովորաբար չորս շարքից (մոտ 2 մետր բարձրություն) ավելի չեն դասավորում, վորովհետև շատ շարքեր դասավորելու դեպքում ներքևի շարքն ոդի պակասության հետևանքով հեշտությամբ փչանում է։ Ավազը խրձերի վրա լավ պահելու և վայր չսողալու համար, գետնի վրա, կույտի մոտ մի քանի ցցեր են կանգնեցնում, վորոնց վրա ավազի կույտը բարձրացնելու հետ աստիճանաբար հենում են տախտակներ։ Ավազ չլինելու դեպքում կարելի յե փուխր հող վերցնել։

3. Անհամեմատ ավելի լավ է կորմնները պահել սառը և լավ հովհարվող նկուղներում, կամ այդ նպատակով կառուցված հատուկ պահեստարաններում, վորտեղ հեշտությամբ կարելի յե կանոնավորել և անհրաժեշտ բարձրության վրա պահել ջերմությունը և խոնավությունը, ինչպես և պահված կորմնների խրձերը հարկ յեղած դեպքում հովհարել։

Նկուղներում կամ հատուկ պահեստարաններում կորմնները պահում են ավազի մեջ (տես նկ. 18) նույն ձևով, ինչպես և ծածկի կամ չարդախի տակ։ Կորմնները պահելու այդ ձևը (նկուղներում կամ պահեստարաններում) չնայած ավելի լավ է, քան վերևում նկարագրվածները, բայց այնքան տարածված չէ, վորովհետև հատուկ պահեստներ, շենքեր, մեծ քանակությամբ ավազ, շատ աշխատանք ու ծախսեր է պահանջում։

Ընդհանրապես կտրոնները պահում են բացօթյա պայմաններում, խրամատների մեջ, մանավանդ այն շրջաններում, վորտեղ կտրոնները գարնանն են պատրաստում։ Խորհրդային Հայաստանի այգեգործական շրջաններում կտրոնները նույնպես պահում են բացօթյա պայմաններում, խրամատների մեջ, հորիզոնական կամ թեք դրությամբ։

Կտրոնների փոխադրելը (ուղարկելը)*)։ Կտրոնների փոխադրության ժամանակ նմանապես պիտի պահպանել



Նկ. 18. Խրձերի պահելն ավազի մեջ

այն բոլոր պայմանները (ջերմություն, խոնավություն և ող), վորոնք անհրաժեշտ են կտրոնները տեղում կանոնավոր պահելու համար։ Այս տեսակետից կտրոնները կարելի յե փոխադրել կամ աշնանը, յերբ սառնամանիքները

*) Խաղողի կտրոններ կամ տնկիներ փոխադրելիս (ներմուծելիս) պիտի առաջնորդվել Ֆիլոքսերայի կարանտինայի մասին 1935 թ. հունվարի 13-ի հրատարակված Միութենական Հողժողկոմատի № 345 վորոշմամբ։ Այդ վորոշման պատճեն կարելի յե ստանալ մեր Հողժողկոմատի կարանտինային տեսչության բաժնից։

դեռ չեն սկսվել, կամ վաղ գարնանը, յերբ ձմռան սաստիկ ցրտերն արդեն անցել են։

Կտրոնները մոտակա վայրեր (10—15 որ ճանապարհելու տևողությամբ) փոխադրելու համար, խրձերի ծայրերը խոնավ մամռով, ծղոտով կամ խոտով լավ ծածկում են. այնուհետև խրձերը փաթաթում են ճիլոփի մեջ, վորի ծայրերն իրար վրա բերելով՝ կարում են և վրայից թոկով ամուր կապում (Նկ. 19-ա)։ Խրձերի հակերի վրա թե դրսից և թե ներսից համապատասխան փոփոխակի պիտակ են կախում։ Հեռավոր վայրեր (20 որ և ավելի ճանապարհելու տևողությամբ) փոխադրելու դեպքում խրձերի բոլորքը



Նկ. 19-ա. Հակավորված կտրոններ (ճիլոփի մեջ)

ծղոտով կամ մամռով լավ ծածկում են, դրանց վրա խոտ փռում և նույն ձևով ճիլոփների մեջ զետեղում։ Յերբեմն փոխադրում են նաև արկղներով, վորոնց մեջ ավազ, մամուռ կամ տորֆ են լցնում և դրանց մեջ կտրոնները շարքերով դասավորում (Նկ. 19-բ)։ Կտրոնները փոխադրելու այդ ձևը (արկղներով) թեև լավ է, սակայն այնքան էլ դեռ տարածված չի և առայժմ գործնական նշանակություն չունի, քանի վոր շատ աշխատանք և մեծ քանակությամբ արկղներ է պահանջում։ Հարևան շրջաններ ուղարկելու դեպքում, յեթե կտրոնները (խրձերը) ճանապարհին 2—3 որից ավելի չեն մնալու, փոխադրում են

սովորաբար բաց դրությամբ, փռելով դարսած խրձերի վրա խոտ կամ բեկում (կարելի յե և բրեզենտ փռել)։

Կորոնները պահելու և փոխադրելու համար պահանջվող հաշվարկը (խրամատների, նկուղների և պահեստարանների, ճիլոփի, թոկի, լարի և այլն) հեշտացնելու նպատակով ստորև բերում ենք 1933 թվին Գյուղտնտեսական ինստիտուտի ուսումնական տնտեսության մեջ կատարված խաղողի մի քանի փոփոխակների (տեղական և օտար խրձերի, կորոնների) չափումների արդյունքները*)։

Տախտակում տրվում են կատարած չափումների միջին տվյալները։

№№ ըստ կարգի	Փոփոխակներ	Չափած խրձերի քանակը	Խրձերի յերկարությունը սմ	Խրձերի տրամագիծը հիմքում սմ	Խրձերի շրջագիծը հիմքում սմ	Խրձերի կշիռը կիլոգրամ.	1000 կորոնի կշիռը կիլոգրամ.	Կորոնների քանակը մեկ խրձի մեջ
1	Խարջի	10	70	25	78,5	6,5	32,5	200
2	Ճիլար	8	70	25	78,5	6.5	32,5	200
3	Հաչաբաշ	10	70	30	94	7,5	37,5	200
4	Մսխալի	10	70	28	87	7,3	36,5	200
5	Մուսկատ սպիտակ . .	4	70	72	226	26,8	26,8	1000
6	» վարդագույն	2	70	78	245	29,0	29,0	1000
7	Սերսիալ դե մադերա .	2	70	72	226	25,8	25,8	1000
8	Սեմիլիոն	2	70	74	232	26,7	26,7	1000
9	Պեդրո-խիմենես . . .	1	70	80	251	24,4	24,4	1000
10	Ֆուրմինտ	1	70	90	283	29,2	29,2	1000
11	Սափերավի	1	70	75	235	23,4	23,4	1000

*) Չափումները կատարել են Այգեգործական ամբիոնի հանձնարարությամբ նույն Ինստիտուտի ուսանողները՝ Վոսկանյան Փայլուհին, Մկրտչյան Շավարշը և Ասլանյան Գուրգենը։

Տեղական փոփոխակների կտրոնները վերցված են յեղել խորհրդ. առաջին տնտեսությունից (Դալմա) և չափումները կատարված են կտրոնները պատրաստելուց և 4 որ խրամատներում պահելուց հետո։ Ոտար փոփոխակներն



Նկ. 19-ը. Հակավորված կտրոններ (արկղի մեջ)

ստացվել են Ղրիմից (ճանապարհին մնացել են 26 որ) և չափումները կատարվել են կտրոնները դեզինֆեկցիա անելուց մի որ հետո։

7. ԿՏՐՈՆՆԵՐԻ ՊԻՏԱՆԻՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ՑԵՂԱՆԱԿԸ

Վերը նկարագրված ձևերով պահպանված կտրոնները, ինչպես և ուրիշ տեղից ստացվածները գործադրվելուց առաջ պետք է ուշադրությամբ զննվեն և փչացածները հեռացվեն։ Թյուրիմացության տեղիք չտալու համար, ուրիշ տեղից ստացած կտրոնների վորակը, նրանց պիտանիությունն ստուգում են հենց կտրոններն ստանալու որը և ստուգման արդյունքների մասին համապատասխան արձանագրություն կազմում։ Սակայն, յեթե փոխադրության ժամանակ սառնամանիքներն այնքան խիստ են յեղել, վոր կտրոնները փաթաթելու նյութերը (մամուռ, ծղոտ, խոտ և այլն) սառույց են բռնել, ապա նման դեպքում ստուգումը պիտի կատարել հակերը (խրձերը) նույն դրությամբ

(առանց բացելու) մի յերկու որով (մինչև վոր խըր-ձերի վրա յեղած սառույցը հալվի) տաք տեղում պահե-լուց հետո։ Կորոնների պիտանիությունը վորոշելու համար շատ ձևեր կան. նշենք դրանցից հետևյալները։

1. զանազան խրձերից կորոնների մի շարք նմուշներ են վերցնում, սուր դանակով կամ սեկատորով յուրա-քանչյուր կորոնի միջհանգույցի վրա թեթև կորվածքներ են առաջացնում (կամ ծայրերը կտրում—թարմացնում) և մի-յերկու աչք կտրում. յեթե կորվածքները թե կեղևին (կամ ծայրերին) և թե աչքերին կանաչ են և հյութալից, սև կամ գորշ բծեր չունեն, նշանակի կը-րոնները լավ են պահպանվել և միանգամայն կենսունակ են, իսկ յեթե կեղևի կորվածքները գորշ կամ սևավուն են, աչքերինը սև կամ թեև կանաչ, բայց սև բծերով, ապա նման կորոնները փչացած են և գործածության համար անպետք։ Պատահում է, վոր կեղևի կորվածքները կանաչ են լինում, իսկ աչքերինը՝ սև, դա նշանակում է, վոր կորոնների աչքերը լավ չեն պահվել և փչացել են. այս դեպքում կորոնները նույնպես փչացած պետի համա-րել, քանի վոր նրանք շվեր տալ չեն կարող և հեշտու-թյամբ փչանում են, անգամ յեթե արմատներ արձակած լինեն։ Այս հանգամանքը գործնականում յերբեմն անտե-սում են և կորոնների պիտանիությունը վորոշում են միայն կորոնի կեղևի վրա առաջացրած կորվածքների գույնով, իսկ նրա աչքերի վրա շատ քիչ ուշադրություն են դարձնում։ Այս ձևով կորոնների պիտանիությունը վորոշելու համար աչքը պետի սովորեցրած լինի ճանա-չելու թե առողջ և թե խոտանի կորոնը.

2. վերցրած նմուշները թարմացնում են, հիմքերով՝ տեղավորում են ջրով լի վորևե ամանի մեջ և տաք տեղում (սենյակ, ջերմոց, ջերմատուն, 20°—30° C) մի քանի որ պահում։ Յեթե 5—6 որից հետո կորոնների աչքերը (բող-բոջները) սկսում են ուռչել, կամ կորոնների վերին ծայրը

կտրելիս կտրվածքի վրա ջրի մանր կաթիլներ են առաջանում, ապա նշանակում է կտրոնները լավ են պահպանվել և կենսունակ են։ Այս ձևը, վոր առաջարկել է Ֆրանսիացի գիտնական Լ. Վիալան, ավելի վստահելի յե, քան առաջինը։

8. ԿՏՐՈՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՏՆԿԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Տնկելուց առաջ կտրոնների կանոնավոր նախապատրաստումը կարևոր նշանակություն ունի. Նախապատրաստման գլխավոր նպատակն է՝ արագացնել կտրոնների արմատակալման պրոցեսը և հետաձգել շվեր առաջանալը, ձգտելով իրար մոտեցնելու այդ յերկու տարբեր պրոցեսների սկսվելու մոմենտները։ Կտրոնների նախապատրաստման աշխատանքները ճշտությամբ և նպատակահարմար ձևով կատարելուց է կախված նրանց կպչելու հաջողությունը։ Այստեղ մենք կանգ կառնենք կտրոնները նախապատրաստելու մի քանի ձևի վրա միայն, տալով յուրաքանչյուր ձևի առավելություններն ու պակասությունները, յելնելով սոցիալիստական այգեգործական խոշոր տնտեսության պահանջներից։ Ինչ ձևով ել կտրոնները նախապատրաստելու լինենք, միևնույն է, պիտի մեկ առ մեկ թարմացնել և նրանցից խոտանները հեռացնել։

ա) Խրձերի ստուգումը.—Տնկելուց մի քանի (3—10) որ առաջ կտրոնները պահած տեղից (խրամատներից) հանում են և նրանց վիճակը պարզելու նպատակով, խրձերը մեկ առ մեկ ուշադրությամբ նայում։ Յեթե այդ հարևանցի ստուգումից պարզվեց, վոր կտրոններն այնքան ել լավ չեն պահվել, քիչ թե շատ չորացել են, բորբոսնել և այլն, ու նրանց վորակի մասին կասկած է առաջանում, ապա անհրաժեշտ է լինում կասկածելի խրձերի պիտանիությունը վորոշել մեզ արդեն հայտնի ձևերով (տես եջ 58)։ Ստուգման ժամանակ խոտանված

և տնկելու համար անպետք համարած բոլոր կտրոնները պետք է հեռացնել։

բ) Կտրոնների թարմացումը յեվ տեսակավորումը.— *Ստուգված ու պիտանի ճանաչված խրձերը տեղափոխում են վորևէ սովերոտ տեղ, նրանց կապերն արձակում են, և կտրոնները սուր սեկատորով մեկ առ մեկ թարմացնում (ծայրերը մի փոքր կտրում)։ Թարմացման ժամանակ կտրոնը հիմքում պիտի կտրել հենց հանգույցի տակ, և կտրվածքն ուղիղ ու հարթ պիտի անել։ Վերևի (բարակ) ծայրը թարմացնելիս, կտրվածքն աչքից մի 1—2 սմ բարձր, աչքին հակառակ և թեք պիտի լինի, վորպեսզի աչքից հեռու լինի և աչքն անվնաս մնա ու չփչանա։ Թարմացնելուց զատ, հեռացնում են կտրոնների վրա մնացած բոլոր բճամատերը և թելիկները։ Թարմացման հետ միաժամանակ անհրաժեշտ է առանձին ուշադրությամբ զննել ամեն մի կտրոն և փչացածները խոտանել, իսկ թույլ, կարճ, կամ վորակի տեսակետից կասկածելի կտրոններն առանձին դարսել և ոգտագործել, յեթե միայն տվյալ փոփոխակի կտրոնների խիստ կարիք է զգացվում. նման դեպքում այդ կտրոնները պիտի տնկել միայն տնկարանում, այն էլ սովորականից ավելի խիտ դասավորությամբ։ Հիմնական տեղում տնկելու համար պիտի ջոկել ամենալավ և միանգամայն վստահելի կտրոններ։ Ամեն մի փոփոխակ առանձին պիտի թարմացնել ու տեսակավորել առանց տարբեր փոփոխակների կտրոններն իրար խառնելու։*

դ) Կտրոնները ջրի մեջ դնելը.— *Թարմացրած կտրոնները 200-ական մեկտեղ կանոնավոր դարսում են և կտրոնների հիմքերը մեկ մակարդակի վրա պահելով, նորից խրձեր են կազմում, յուրաքանչյուր խրձի վրա նույն փոփոխակի պիտակը կապում։ Պատրաստված խրձերն ուղղահայաց դրությամբ, հիմքերով, խրձերի մոտ $^1/_3$ յերկարության չափով (15—20 սմ) խորասուզում են ջրի մեջ (առու, գետակ և այլն), վորի ջերմաստիճանը ցածր չպետք*

է լինի և կարելույն չափ բարձր լինի (20°—25° C)։ Այս հանգամանքի շնորհիվ, կորինները հեշտությամբ ջուր ծծելով՝ թարմանում են և ակտիվ աշխատանքի անցնում։ Խըրձերը հոսող ջրի մեջ ուղիղ կանգնելու և շուռ չգալու համար, յերբեմն խորհուրդ են տալիս խրձերը կապելու ժամանակ նրանց մեջ մոտ մեկ մետր յերկարությամբ փայտե ձողեր անցկացնել (յուրաքանչյուրի մեջ մեկ ձող) և դրանցով խրձերը ջրի հատակին ամրացնել։ Սակայն այս ձևը գործնական չէ։ Հոսող ջուր չլինելու դեպքում խրձերը կարելի յե դնել վորև ջրամբարի կամ ջրով լի ամանի (կիսատակառ, մեծ տաշտ և այլն) մեջ. Այս դեպքում 2—3 օրը մեկ անգամ անհրաժեշտ է ջուրը փոխել, քանի վոր կանգնած ջրի մեջ կորինները հեշտությամբ կարող են նեխել։ Կորինները ջուր դնելը կարևոր նշանակություն ունի, վորովհետև, նախ՝ նրանք ներծծելով վորոշ քանակությամբ ջուր, թարմանում են ու ակտիվ աշխատանքի անցնում և, յերկրորդ՝ ներծծված ջուրը լուծում է կորինների մեջ կուտակված սննդարար նյութերը, վորոնք անհրաժեշտ են արմատներ առաջացնելու համար։ Հիրավի, ջուր դրած կորինները հողում դյուրությամբ են արմատակալում և հաջողությամբ կպչում։ Բացի դրանից, ջուրը դնելն ունի և այն առավելությունը, վոր հնարավորություն է տալիս հեշտությամբ ճանաչելու խոտան և ռնկելու համար անպետք կորինները (տես եջ 58)։ Կորինները ջրի մեջ պահում են, նայած նրանց խոնավությանը, 2—10 օր։ Համենայն դեպս, պետք աշխատել կորինները 10—12 օրից ավելի չպահել ջրի մեջ, վորովհետև յերկար ժամանակ պահելու դեպքում կորինների սննդարար նյութերի մի մասը լվացվում է ջրի մեջ և ի զուր կորչում, և, մյուս կողմից՝ կորինները հենց ջրի մեջ յեղած ժամանակ կարող են արմատներ արձակել, վորոնք սակայն այնքան թույլ

և նուրբ են լինում, վոր տնկելու ժամանակ հեշտությամբ փչանում են և հետագա զարգացման համար անպետք դառնում։ Բացի դրանից, այդ կտրոնների աչքերը նույնպես կարող են բացվել և շվեր արձակել. այս դեպքում առաջացած շվերը վոչ միայն չեն նպաստում կտրոնների կպչելուն (տնկելուց հետո այդ շվերը շուտով չորանում են), այլև նրանք իրենց աճեցողության համար կտրոններից վորոշ քանակությամբ սննդարար նյութեր վերցնելով՝ թուլացնում են կտրոնները հողում արմատակալելու պրոցեսը. Նման շվերը կտրոնները տնկելու ժամանակ պիտի հեռացնել, վորպեսզի ի զուր ջուր չգոլորշիացնեն և կտրոնները չչորացնեն։ Վերջապես, կտրոնները ջրի մեջ յերկար պահելու հետևանքով կարող են նեխել։

դ) **Կտրոնների ստրատիֆիկացիան**.—Կտրոնների արմատակալման պրոցեսն արագացնելու լավագույն միջոցը ստրատիֆիկացիան է։ Ստրատիֆիկացիան կայանում է նրանում, վոր արհեստական ձևով ստեղծում ենք անհրաժեշտ նպաստավոր պայմաններ (ջերմություն, խոնավություն, օդ), վորոնց առկայությամբ կտրոնները նախապատրաստվում են արմատակալելու, անգամ արմատներ արձակելու (վոր կախված է ստրատիֆիկացիայի պայմաններից և նրա տևողությունից), վորից հետո միայն կտրոնները տնկում են տնկարանում կամ հիմնական տեղում։ Ստրատիֆիկացիայի շնորհիվ, բացառիկ նպաստավոր պայմաններ են ստեղծվում կտրոնները տեղում (տնկարանում, կամ այգում) հաջողությամբ կպչելու և կանոնավոր զարգանալու համար։ Ստրատիֆիկացիայի համար կարելի յե օգտագործել տնտեսության մեջ յեղած ջերմատները, ջերմոցները, կամ տաքացվող պահեստարանները, կամ թե ապա սենյակները. դրանց բացակայության դեպքում՝ նաև ծածկի (չարդախի) տակ, կամ բացօթյա պայմաններում պատրաստված խրամատները։ Ստրատիֆիկացիան կատարում են ընդհանրապես ավազի մեջ, ավազ չլինելու դեպ-

քում կարելի յե փուխր հող վերցնել։ Ստրատիֆիկացիա կատարելու համար կտրոնները նախապես թարմացնում են և խրձեր կապում։

Ջերմատներում կամ պահեստարաններում (սենյակներում) ստրատիֆիկացիա կատարելու համար կտրոնների խրձերն ավազի (հողի) մեջ դարսում են նույն ձևով, ինչպես կտրոնները պահեստարաններում կամ նկուղներում պահելու դեպքում (տես եջ 50) այն տարբերությամբ միայն, վոր ստրատիֆիկացիայի համար խրձերը վերևից ավազի փոքր շերտով (մոտ 10 սմ) պիտի ծածկել։ Պետք ե շարունակ հետևել, վոր ստրատիֆիկացիոն ջերմատան, պահեստարանի, ջերմոցի

1. ջերմությունը 12°-ից պակաս և 30°-ից (ըստ Ցելսիուսի) բարձր չլինի (օպտիմումը՝ 25—28°).

2. ավազը բավարար խոնավություն պարունակի, հարկ յեղած դեպքում, մոտավորապես 2—3 օրը մեկ անգամ, ավազը պիտի ջրել,

3. ջերմատան (պահեստարանի) օդը մաքուր պիտի լինի։

Այս պայմաններում 10—20 օրից (վոր կախված ե ջերմության ու խոնավության աստիճանից) հետո կտրոնների ներքևի կտրվածքների վրա առաջանում են հյութալի առաձգական նոր հյուսվածքներ, վորոնք հայտնի յեն կալլուս անունով. հանգույցների մոտ առաջանում են բլրականման ուռուցքներ, վորոնք վոչ այլ ինչ են, յեթե վոչ կտրոնի կեղևի տակից դուրս յեկող արմատներ. կտրոնների ծայրի աչքերը (հիմքի աչքերը ստրատիֆիկացիայի առաջ հեռացված են լինում) սկսում են բացվել։ Կալլուսի և բլրականման արմատների առաջանալը նշան ե, վոր կտրոնները բավականաչափ նախապատրաստվել են արմատակալելու և միանգամայն պատրաստ են տնկելու համար։ Հենց այդ ժամանակ խրձերն ավազից պիտի հանել և, խոտանները հեռացնելու նպատակով, կտրոնները մեկ առ մեկ

ստուգել և ապա նշանակված տեղը տնկել։ Սակայն, յեթե տնկարանի կամ այգու հողը դեռ սառն է (հողի վերևի շերտի ջերմությունը 10°-ից դեռ ցածր է) կամ յեղանակները նպաստավոր չեն տնկելու համար, և մենք ստիպված ենք կորոնների տնկելը հետաձգել, ապա ջերմատան, ջերմոցի, տաքացվող սենյակների ջերմությունը պիտի իջեցնել, վորպեսզի առաջացած բլրականման արմատները չերկարեն, հակառակ դեպքում՝ տնկելու ժամանակ նրանք հեշտությամբ կարող են կտրվել։ Յեթե այդ արմատներն արդեն բավական յերկարացել են, այս դեպքում պիտի սպասել, մինչև վոր նրանց հիմքերը ծածկվեն խցանային հյուսվածքով, վորպեսզի տնկելուց արմատները չփչանան։

Աչքերի բացվելը հետաձգելու համար ստրատիֆիկացիան ջերմոցներում կատարելու դեպքում, կարելի յե կիրառել գյուղատնտես Բուզինի առաջարկած ձևը, վոր նա մշակել է Ղրիմում՝ Մագարաչի այգեգործական փորձնական կայանում։ Այդ նպատակով պատրաստում են մի ջերմոց, վորը սովորականից տարբերվում է նրանով, վոր, նախ՝ խոր է (մոտ 3 մետր), յերկրորդ՝ գոմաղբ չեն լցնում և, յերրորդ՝ այդ խորությունը մեջտեղից հորիզոնական ուղղությամբ տախտակներով (կեղծ հատակ) բաժանում են 2 մասի, ներքևի մասը լցնում են ձյունով կամ սառցով, իսկ բաժանող կեղծ հատակի վրա ուղղահայաց դրությամբ և հակառակ դիրքով (հիմքերը վերև ուղղված) դարսում են կորոնների խրձերը, վորոնց վրա վերևից խոնավ մամուռ կամ թեփ են փռում և 10—15 սմ հողի շերտով մամուռը (կամ թեփը) ծածկում։ Դրանից հետո ամբողջ ջերմոցը ծածկում են ապակե շրջանակներով։ Այստեղ, ինչպես տեսնում ենք, կորոնների ծայրերն ուղղված լինելով դեպի ձյան շերտը՝ գտնըվում են համեմատաբար ցածր ջերմության պայմաններում, մինչդեռ նրանց հիմքերը շրջանակներին մոտ

լինելով, ստանում են բավական քանակությամբ ջերմություն: Նման պայմաններում կտրոններն արմատակալում են այն ժամանակ, երբ դեռ նրանց աչքերը չեն բացվել: Կտրոնները նախապատրաստելու այս ձևը թեև քիչ բարդ է, բայց դրական խոշոր արդյունք է տալիս:

Ջերմոցներում կամ տաքացվող սենյակներում ստրատիֆիկացիան, ճիշտ է, լավ, նպաստավոր պայմաններ է ստեղծում կտրոնների հաջող արմատակալումն ապահովելու համար, որի շնորհիվ տեղում տնկած այդ կտրոնները դյուրությամբ են կպչում և ուժեղ ու կանոնավոր զարգանում, սակայն նման ստրատիֆիկացիան, կապված լինելով խոշոր ծախսերի հետ (ջերմատուն, ջերմոցներ կառուցելը, վառելանյութեր և այլն)՝ մի կողմից, և, մյուս կողմից՝ նկատի ունենալով, որ ավելի հասարակ միջոցներով գործնականապես ստեղծվում է կտրոնների լավ արմատակալում, գործնականում այնքան տարածված չէ:

Կտրոնների արմատակալումն արագացնելու և աչքերի բացումը հետաձգելու տարածված, էժան և հեշտ միջոցը կտրոնները բացօթյա կամ ծածկի (չարդախի) տակ, խրամատներում գլխիվայր (հիմքերը վերև ուղղված) դիրքով պահելու ձևն է (ռուսերեն՝ кильчевание): Այս ձևով կտրոնները նախապատրաստելու համար ընտրում են քամիներից պաշտպանված և դեպի հարավ նայող մի հարմար տեղ (պատի հարավային կողմը և այլն), կամ թե օգտագործում են տնտեսության մեջ եղած որևէ ազատ ծածկ (չարդախ), որի հարավային կողմը բաց պիտի լինի, իսկ հյուսիսայինը՝ ծածկած, որպեսզի խրամատների հողը (ավազը) շատ ջերմություն ստանա: Ընտրած տեղում փորում են խրամատներ հենց նույն մեծության, ինչ մեծության հարկավոր է լինում կտրոնները սովորական ձևով (ուղղահայաց դրությամբ) պահելու համար (տես էջ 50): Այդ խրամատների մեջ

կոռնների խրձերը դարսում են ուղղահայաց դրությամբ, բայց հակառակ դիրքով. դարսելու հետ միաժամանակ խրձերի արանքները փուխր հողով լավ լցնում են. դասավորելուց հետո կոռնների հիմքերի վրա խոնավ մամուռ կամ թեփ են փռում, ապա վերևից խրձերը խոնավ ավազով կամ հողով (լավ և սևահող վերցնել) ծածկում են (մոտ 10—15 սմ)։ Մամուռ կամ թեփ չլինելու դեպքում, կարելի յե ուղղակի ավազով (հողով) միայն ծածկել։ Այդ ձևի ստրատիֆիկացիան կատարում են հենց կոռնները վերցնելու ժամանակ, աշնանը (ձմեռը) կամ գարնանը, նայած յերբ են այգիների ետը կատարում։ Յեթե ստրատիֆիկացիան կատարում են աշնանը կամ ձմեռը. ապա գարնանը, տնկելուց առաջ, անհրաժեշտ է կոռնները մի քանի որ ջուրը դնել, վորից հետո նոր տնկել։ Գարնանը ստրատիֆիկացիան կատարում են կոռնները նախապես ջուրը դնելուց հետո. այս դեպքում ջրից հանած կոռններն անհրաժեշտ է լինում ջրից քիչ չափով ցամաքեցնել (կոռնները խրամատներում չնեխելու նպատակով) և ապա խրամատներում դարսել։ Պետք է հետևել, վոր խրձերի ծածկոցը (հող, ավազ, մամուռ և այլն) չչորանա, հարկ յեղած դեպքում, ժամանակ-առժամանակ (2—3 օրը մեկ անգամ) ծածկոցը ցնցուղով պետք է ջրել։ Գարնան տաք յեղանակներին խրամատների ծածկոցը բավականաչափ տաքանում է, տաքանում են նաև խրձերը (գլխավորապես նրանց հիմքերը). ջերմության և խոնավության շնորհիվ, մի 3—4 շաբթից հետո կոռնների հիմքերի վրա առաջանում է կալլուս, ավելի բարենպաստ պայմաններում (վոր կախված է յեղանակներից) կոռններն անգամ արմատներ են արձակում։ Կոռնների աչքերի բացումն այս դեպքում, բնական է, հետաձգվում է, քանի վոր ծայրի աչքերը (հիմքի 2—3 աչքը ստրատիֆիկացիայի ժամանակ հեռացնում են), գտնվելով հողի խոր շերտերում (խրամատների հատակին)՝ քիչ ջերմություն են ստանում։

Կտրոնների արմատակալումն էլ ավելի արագացնելու համար, կարելի յե խրամատները վերևից ջերմոցների շրջանակներով ծածկել, այնպես, վոր շրջանակների և խրձերի ծածկոցի միջև վորոշ չափով (մոտ 10—15 սմ բարձրության ազատ տարածություն լինի։ Ստրատիֆիկացիայից հետո կտրոնները մեկ առ մեկ ստուգում են, նրանցից խոտանները և թույլերը հեռացնում և ապա ընտիր կտրոնները նշանակված տեղը տնկում։

Կտրոնների նախապատրաստման այս ձևը (խրամատներում գլխիվայր դիրքով պահելը) տարածված է Բեսարաբիայում և ԽՍՀՄ-ի մի շարք այգեգործական շրջաններում (Օդեսա, Ղրիմ, Հյուսիսային Կովկաս և այլն)։

ե) Աչքերի (բողբոջների) հեռացնելը.— Կտրոնները թարմացնելիս, կամ տնկելուց անմիջապես առաջ, յերբեմն կտրոնի բոլոր աչքերը, բացի վերին 2 աչքից, սուր դանակով կամ սեկատորով հեռացնում են։ Այս դեպքում հեռացված աչքերի տեղերից (կտրվածքներից) ջուրը հեշտությամբ ներս է ծծվում կտրոնների մեջ և քիչ թե շատ չափով արագացնում վերջինների արմատակալման պրոցեսը։ Մինչդեռ, յեթե այդ աչքերը չենք հեռացնում և թողնում ենք կտրոնների վրա, ապա, նախ՝ ջուրը համեմատաբար դանդաղությամբ է ծծվում կտրոնների մեջ, և, յերկրորդ՝ այդ աչքերը յերբեմն բացվում են հողի մեջ և շվեր արձակում, վորոնք իրենց զարգացման համար կտրոններից վորոշ քանակությամբ սննդարար նյութեր են վերցնում. Թե առաջին և թե յերկրորդ դեպքում կտրոնների արմատակալման պրոցեսը վորոշ չափով հետաձգվում է։ Սակայն, աչքերը հեռացնելու շնորհիվ, վորքան ջուրը հեշտությամբ և թափանցում կտրոնների մեջ, նույնչափ հեշտությամբ կարող են մուտք գործել կտրոնների մեջ նաև վնասատու զանազան միկրոօրգանիզմներ (թե բուսական և թե կենդանական) և վնասել տնկած կտրոնները։ Անկախ սրանից, աչքերի հեռացնելը խոշոր նշանակություն ունի պատ-

վասատի դեպքում. ամերիկյան պատվաստակալից հեռացնելով բոլոր աչքերը, նրանց վրա այլևս շվեր չեն առաջանում, հետևապես նրանք չեն խանգարելու պատվաստի հյուսվածքի նորմալ զարգացումը։ Եվրոպական (vitis vinifera) փոփոխակները բազմացնելու համար, վորոնք ընդհանրապես դյուրությամբ են արմատակալում, մանավանդ ջրարբի հողերում, կորունների աչքերը հեռացնելը դրական առանձին նշանակություն չունենալով և մեծ աշխատանք պահանջելով հանդերձ, յերբեմն կարող է բացասական հետևանքներ ունենալ (կորունները կարող են նեխել և փչանալ), հետևաբար, այս դեպքում աչքերի հեռացնելը միանգամայն ավելորդ աշխատանք պիտի համարել։ Ճիշտ են մոտենում այդ հարցին մեր այգեգործական խորհ. և կոլտնտեսությունները, յերբ տնկելուց առաջ կորունները նախապատրաստելիս աչքերը չեն հեռացնում. մեր պայմաններում, վորտեղ այգիները վոռոգվում են, և վորտեղ տարածված են բացառապես vitis vinifera տեսակին պատկանող փոփոխակները (խարջի, ճիլար, մսխալի, մուսկատ և այլն), աչքերի հեռացնելը, կորունների արմատակալմանը նպաստելու համար, գործնական վոչ մի առանձին նշանակություն չունի։ Այդ են վկայում Գյուղատնտեսական ինստիտուտի ուսումնական տնտեսությունում այգեգործական ամբիոնի՝ 1933 թվին այդ ուղղությամբ կատարած փորձերի նախնական տվյալները։

դ) **Կեղևատում**.—Կորունների արմատակալման պրոցեսը հեշտացնելու և արագացնելու նպատակով, այգեգործական վորոշ յերկրներում (գլխավորապես Ֆրանսիայի հարավում) կիրառում են կեղևատում, վորը կայանում է նրանում, վոր կորունի հիմքի 1—3 միջհանգույցների կեղևի վրա ակոսավոր թեթև կտրվածքներ են առաջանում։ Կեղևատումը կատարում են սուր դանակով կամ յերկաթից պատրաստված, սղոցանման հատուկ գործիքների միջոցով, վորոնցից ամենատարածվածը Լեյդեյի սղոցարդն է

(հասարակ մի գործիք է, վոր հնարավոր է պատրաստել ամեն մի տնտեսությունում)։ Այդ սղոցարդն ամրացնում են սեղանի կամ վորևե արկղի վրա, նրա ատամնավոր մասի վրա հենում են կտրոնի հիմքը (2—3 միջհանգույց) և թեթև սեղմելով, կտրոնն արագությամբ պտտեցնում են, այնպես, վոր կտրոնի հիմքի վրա թեթև կորվածքներ առաջանան և հիմքի աչքերը հեռացվեն։ Կեղևատումը կատարում են կտրոնները մի քանի որ ջրի մեջ պահելուց հետո, հենց տնկելու ժամանակ։ Կեղևատման շնորհիվ, ինչպես տեսնում ենք, կտրոնների հիմքերի վրա առաջանում են կորվածքներ, վորպիսի կորվածքների միջոցով ջուրը կարողանում է հեշտությամբ թափանցել կտրոնների մեջ, հետևապես արագացնում վերջիններիս արմատակալման պրոցեսը։ Սակայն, ինչպես կտրոնների աչքերը հեռացնելու շնորհիվ յերբեմն վարակվում են այս կամ այն հիվանդությունով և փտավում, ապա նրանք նույնպես կարող են փտավել նաև կեղևատման շնորհիվ։ Այս տեսակետից այն, ինչ վոր քիչ առաջ մենք ասացինք աչքերը հեռացնելու դրական և թե բացասական հետևանքների (տես եջ 68), նույնը կարելի յե ասել նաև կեղվատման մասին։

ճ) **Կտրոնների վոլորելը յեվ ջարդելը** — Յերբեմն կտրոնների հիմքերը ձեռքով վոլորում են, կամ փայտե թակիչների օգնությամբ թեթև կերպով ջարդում, այլ խոսքով ասած՝ կտրոնների հիմքերի վրա ըստ յերկարության բավականին խոր վերքեր առաջացնում։ Այդ վերքերի շնորհիվ, կտրոնները թեև դյուրությամբ են արմատակալում, բայց նորմալ զարգացում չեն ունենում և շատ հաճախ կարճ ժամանակից հետո փչանում են, վորովհետև առաջացած վերքերը, նախ՝ նպաստավոր պայմաններ են ստեղծում կտրոններն այս կամ այն հիվանդությունով վարակելու համար և, յերկրորդ՝ այդ նույն վերքերի միջոցով ջուրը կարողանում է թափանցել կտրոնների միջուկի մեջ և

վերջինս քայքայման յենթարկել։ Այս տեսակետից կտրոնների փորելը և ջարդելը միանգամայն անթույլատրելի պետք համարել։

Կտրոնները նախապատրաստելու վերև բերած ձևերից Խորհրդային Հայաստանի այգեգործական շրջաններում կիրառում են՝ խրձերի ստուգում, կտրոնների թարմացում, տեսակավորում և ջրի մեջ դնելը։

9. ԿՏՐՈՆՆԵՐ ՏՆԿԵԼՈՒ ՀԱՐՄԱՐ ԺԱՄԱՆԱԿԸ*)

Կտրոններ տնկելու ամենահարմար ժամանակը գարունն է, յերբ օրերը բավականաչափ տաքանում են։ Կտրոնների կպչելու պրոցեսն սկսվելու համար լավ պայմաններ են ստեղծվում այն ժամանակ, յերբ հողն այնքան է տաքանում, վոր նրա վերևի շերտի ջերմությունը հասնում է 15° և ավելի, ու յերբ տնկման խորության շերտում հողի ջերմության մինիմումը 10°-ից պակաս չի լինում։ Մեր պայմաններում այդ սկսում է հենց այն մոմենտից, յերբ վազերը հանգստի շրջանից ակտիվ աշխատանքի յեն անցնում և նրանց բողբոջները բացվելու նշաններ են ցույց տալիս։ Ահա այդ ժամանակաշրջանում տնկված կտրոններն իրենց կպչելու պրոցեսը նախապատրաստվելու համար անհրաժեշտ նպաստավոր ջերմություն են ունենում։ Մեր պայմաններում այգիներ տնկելու կամպանիան կարելի յե սկսել հենց կտրոնները վերցնելու ժամանակ, գարնանը՝ այգիներն եռելիս, միայն թե հիմնաշրջված հողն այնքան չորացած լինի, վոր հնարավորություն տա տնկելու աշխատանքներ կատարել։ Յերբ պետք վերջացնել կտրոններ տնկելու կամպանիան, այլ խոսքով ասած, վո՞րքան տևողություն նա պետք ունենա

*) Այստեղ հարցը վերաբերում է միայն չարմատակալած կտրոններին, արմատակալածները (ճիճակներ) մեծ հաջողությամբ կարելի յե տնկել թե գարնանը և թե աշնանը։ Տես Յե. Ասլանյան «Խաղողի այգու տնկելը և նոր արմատակալների խնամքը» եջ 54—56։

և վերջն է նրա վերջին ժամկետը, որից հետո տնկելը թույլատրելի չէ։ Ներկայիս, երբ այգեգործական յուրաքանչյուր շրջանում, սեզոնի ընթացքում շատ հաճախ կարիք է լինում մի քանի հարյուր հեկտար տարածությամբ նոր այգիներ հիմնադրել, հնարավոր չէ խիստ կերպով սահմանափակել տնկելու ժամանակամիջոցը, մանավանդ, որ առանց որևէ վնաս հասցնելու կտրոնների կպչելուն ու նրանց հետագա զարգացմանը, հնարավորություն կա տնկելու կամպանիայի տևողությունը շատ թե քիչ չափով երկարացնելու, միայն մեկ պայմանով, որ մինչև տնկելը, կտրոնները լավ պահվեն և իրենց թարմությունը չկորցնեն (տես էջ 50 և 58)։ Սակայն սա չի նշանակում, որ ողջ գարնան ընթացքում և ամառը կտրոններ կարելի է տնկել։ Պետք է նկատի ունենալ այն, որ չափից դուրս երկարացնելով տնկելու կամպանիան, կարճացնում ենք կտրոնների վեգետացիոն (աճեցողության) շրջանը, որի հետևանքով ուշ տնկած կտրոնների շվերը թույլ են զարգանում, կարճ են լինում, կանոնավոր չեն հասունանում, հաճախ չեն փայտանում և անգամ թաղելու դեպքում նրանք ձմրան սառնամանիքներին չեն դիմանում և հեշտությամբ փչանում են։ Տընկելու ժամկետները որոշելիս այգեգործական ամեն մի տնտեսություն հաշվի պիտի առնի իր կոնկրետ պայմանները և աշխատանքներն այնպես դասավորի, որ տնկելու կամպանիան հենց վերը նշած ժամկետին սկսի, որպեսզի թե այդ կարևոր կամպանիան ժամանակին վերջացնի և թե կտրոններ տնկելու պլանը լրիվ կատարած լինի։

Հարավային լանջերում, ինչպես և թեթև ու հեշտությամբ տաքացող հողերում, տնկելու կամպանիան համեմատաբար ավելի շուտ պիտի սկսել, քան հյուսիսային լանջերում և ծանր հողերում։ Առաջին հերթին պիտի տնկել այն կտրոնները, որոնք ստրատիֆիկացիայի չեն ենթարկվել, և որոնց վրա արհեստական եղանակով ար-

ծառեր չենք առաջարկել։ Ստրատիֆիկացիայի ենթարկված կտրոնները կարելի յե ուշ տնկել, վորպեսզի հողն էլ ավելի տաքանա և նրանց արմատները հողում չմրսեն։ Խորհրդային Հայաստանի այգեգործական շրջաններում կտրոնների տնկելու կամպանիան, նայած տարվա ոդերևութաբանական պայմաններին, կարելի յե սկսել ապրիլի սկզբներին, անգամ մարտ ամսի վերջերին և վերջացնել մոտավորապես ապրիլի վերջին. տնկելու կամպանիան մեզ մոտ տևում է մոտ մեկ ամիս, կամ քիչ ավելի։ Հարավային այգեգործական շրջաններում, բացառիկ դեպքերում, և աշնան տնկելը կարող է գործնական նշանակություն ունենալ, բայց դրա համար աշնան յեղանակները նպաստավոր պիտի լինեն, սառնամանիքները շատ չսկսվեն, վազերի մասերը շատ փայտանան, ձմեռը սաստիկ չլինի, հողը շատ խոնավություն չպարունակի և այլն. ներկայիս համարյա վոչ մի տեղ աշնանը կտրոններ չեն տնկում։ Մասնավորապես Խորհրդային Հայաստանի պայմանների համար, վորտեղ կտրոնները գարնանն են պատրաստում, աշնան տնկելը, գործնական նշանակություն չունի. գարնան տնկելու հետ համեմատած, նա առանձին առավելություն չունենալով հանդերձ, մի շարք ավելորդ աշխատանքներ է պահանջում, ինչպես, որինակ՝ տնկած կտրոնների թաղելը և բացելը, աշնանը կտրոններ պատրաստելը (վերցնելը), վոր անհամեմատ ավելի դժվար է (տերևները խանգարում են), քան գարնանը և այլն։

10. ԿՏՐՈՆՆԵՐ ՏՆԿԵԼՈՒ ՏԵՂԸ

Կտրոններ կարելի յե տնկել՝ կամ նոր գցվող այգիներում, հենց անմիջապես իրենց տեղերում, կամ տնկարանում։ Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր առաջին դեպքում կտրոնները տնկած տեղերից չեն շարժում, այլևս ուրիշ տեղ չեն փոխադրում։ Կտրոնները հենց նույն

այդ տեղերում աճելով, կանոնավոր վազեր են դառնում ու բերք տալիս. յերկրորդ դեպքում կտրոնները խիտ-խիտ տնկում են հատուկ տնկարաններում, վորտեղ նրանք արմատակալում են ու շվեր տալիս, և ապա միայն մեկ, հազվադյուտ դեպքում՝ 2 տարուց հետո այդ կտրոնները, վորպես արմատակալածներ (շիշակներ, ջխտաթայ, յերինջներ), հիմնական տեղը (նոր գցվող այգի) փոխադրում։ Այստեղից հարց է ծագում—նպատակահարմար չէ՞ արդյոք կտրոններն ուղակի հիմնական տեղում, նոր գցվող այգիներում տնկել, ավելորդ աշխատանքներ չե՞ն արդյոք տնկարաններ կազմակերպելը և այդ տնկարաններում կտրոններ տնկելը*)։

Անշուշտ, կտրոնները հիմնական տեղում տնկելու դեպքում մենք ազատվում ենք տնկարան կառուցելու, արմատակալած կտրոնները տնկարանից հանելու և նրանք հիմնական տեղում (նոր գցվող այգի) տնկելու աշխատանքներից։

Բացի դրանից, յեթե միևնույն հողային ու կլիմայական պայմաններում միատեսակ կտրոններ ենք տնկում հիմնական տեղում և տնկարանում ու նրանց վողջ վեգետացիոն ընթացքում միատեսակ խնամում, հիմնական տեղում կտրոնները, նոսր դասավորված լինելու շնորհիվ, համեմատաբար ուժեղ են աճում, քան տնկարանում խիտ տնկած կտրոնները. ավելին՝ միատեսակ աճեցողության

---

*) Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր այստեղ հարցը վերաբերում է վազերը կտրոնների միջոցով բազմացնելու յեղանակին միայն (այդ է սույն գրքույկի հիմնական նպատակը), այլ վոչ թե պատվաստմանը։ Ֆիլոքսերայով վարակված շրջաններում, վորտեղ վազի մշակությունը տարվում է ամերիկյան պատվաստակալների վրա, այգիները հիմնադրում են միայն տնկարանների միջոցով։ Պատվաստները նախորոք աճեցնում են տնկարաններում և ապա հիմնական տեղը փոխադրում։ Հենց այդպես են անում Խորհրդային Վրաստանում (Կախեթիա և այլն), վորտեղ այգիները ֆիլոքսերայով վարակված են։ Նմանապես այդպես են անում նաև Խորհրդային Հայաստանի՝ ֆիլոքսերայով վարակված շրջաններում (Ալլահվերդի, Շամշադին և Իջևան), վորտեղ, վորպես կանոն, այգիները հիմնադրում են միայն պատվաստների միջոցով։

դեպքում անգամ, տնկարանից հանած և հիմնական տեղը փոխադրած արմատակալածներն իրենց աճեցողության տեսակետից, միևնույն պայմաններում որոշ ժամանակով հետ են մնում այն արմատակալածներից, որոնք հենց սկզբից, որպես սովորական կտրոններ, տնկված են յեղել և մշակվել ուղղակի հիմնական տեղում: Ահա թե ինչ առավելություններ ունի հիմնական տեղում կտրոններ տնկելը:

Յեթե դրված հարցի լուծմանը մենք մոտենանք միայն հիմք ընդունելով այդ առավելությունները, ապա պետք է ընդունել, որ տնկարանները միանգամայն ավելորդ են: Հենց այդպես են հիմնավորում նրանք, ովքեր խորհուրդ են տալիս Ֆիլոքսերայից ազատ վայրերում (որտեղ վազերը կտրոնների միջոցով են բազմացնում), կտրոնները հիմնական տեղում միայն տնկել և այդ վայրերի համար տնկարաններ կազմակերպելն անօգուտ մի աշխատանք են համարում: Սակայն տվյալ հարցի լուծմանը նման ձևով մոտեցումը միկողմանի յե և նա միանգամայն անթույլատրելի պետք է համարել: Անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր առանձին դեպքում տվյալ շրջանի (անգամ առանձին տնտեսության) հողային ու կլիմայական կոնկրետ պայմանները, վարակման հնարավորությունները, ինչպես և ագրոտեխնիկական մի շարք կարևորագույն մոմենտներ և ապա միայն որոշել՝ ո՞րտեղ է նպատակահարմար և ձեռնտու կտրոններ տնկել — հիմնական տեղում, թե՞ տնկարանում:

Ճիշտ է՝ խաղողի վազը հողի նկատմամբ ընդհանրապես պահանջկոտ չէ (ամերիկյան տեսակները որոշ չափով բացառություն են կազմում), նա աճում է ամեն տեսակ հողում (բացի աղոտ և ճահճային հողերից). Նմանապես կտրոնները ես կարող են արմատակալել ու զարգանալ ամեն մի հողում: Սակայն միևնույնը չէ, թե կտրոնները կզարգանան փուխր, թե պինդ, հարուստ, թե աղքատ հողե-

քում: Կորճների արմատակալման և առաջին տարվա աճեցողության համար հողը վճռական դեր է խաղում: Հարուստ և փուխր հողերում կորճները*) մեծ հաջողությամբ են արմատակալում և հենց առաջին տարվա ընթացքում ուժեղ արմատներ ու շվեր են ունենում, մինչդեռ աղքատ և պինդ հողերում, նախ նրանց զգալի տոկոսը չի կպչում և, բացի դրանից, կպած (արմատակալած) կորճներն այնքան թույլ են աճում, որ հազիվ յերկրորդ տարին առաջինների առաջին տարվա աճեցողությանը հասնում: Հետևաբար անհրաժեշտ է ամեն կերպ աշխատել, որ կորճները լավ պայմաններում գտնվեն, որպեսզի հաջող արմատակալեն և հնարավորին չափ ուժեղ զարգանան, դրա համար, հենց առաջին հերթին, կորճներին հատկացվելիք հողը պարարտ և փուխր պիտի լինի: Այս տեսակետից, յեթե նոր ցցվող այգիների հողը պարարտ և փուխր է, ապա կորճները կարելի յե տնկել հենց հիմնական տեղում, իսկ յեթե այգիները հիմնադրվելու յեն պինդ, աղքատ, քարքարոտ հողերում, կորճները նպատակահարմար է տնկել տնկարանում, որի համար միշտ էլ հնարավոր է լավ հող հատկացնել, քանի որ նա փոքր տարածություն է ունենում, որպիսի տարածություն տնտեսության ամենալավ հողերից միշտ կարելի յե ապահովել: Խ. Հայաստանի այգեգործական գլխավոր շրջանների պայմաններում մեկ հեկտար տարածությամբ տնկարանն ապահովվում է արմատակալածներով մոտ 25 հեկտար տարածությամբ այգիներ տնկելու համար (մեկ հեկտար տնկարանից ստացվում է մոտ 75 հազար արմատակալած*), իսկ մեկ հեկտար այգի տնկելու հարար պահանջվում է մոտ 2700 արմատակալած): Շատ հաճախ այգիները հիմնադրվում են հենց չոր, քարքարոտ և աղքատ հողերում, որոնք կու-

*) Տես Ցե. Ասլանյան «Խաղողի այգու տնկելը և նոր տնկարկների խնամքը» եջ 60—62:

տուրական շատ բույսերի համար անպետք են. Նման հողերում, ժամանակին ոռոգվող պայմաններում, կտրոնները հիմնական տեղում տնկելը, ինչպես տեսցինք, նպատակահարմար չէ և տնկարանների հետ համեմատած՝ ոչ միայն առավելություններ չունի, այլև մի շարք ավելորդ աշխատանքներ է պահանջում։ Այդ հիմնավորելու համար կանգ առնենք հետևյալ կարևոր հանգամանքների վրա.

1. Կտրոնները նշած հողային պայմաններում հիմնական տեղում տնկելու դեպքում անհաջող են արմատակալում, նրանց զգալի մասը (մոտ 25%, անգամ ավելի) չի կպչում։ Դրա հետևանքով հաջորդ տարին, կամ նույն աշնանը, այգիների՝ նորոգման (ռեմոնտի) համար մեծ աշխատանք ու ծախսեր է պահանջվում։ Եթե ընդունենք, որ տնկած կտրոնների 75%-ն է կպած լինում, ապա դա նշանակի, որ յուրաքանչյուր 100 հեկտար տնկած տարածությունից 25 հեկտարը նորից պիտի տնկել (բաց տեղերը լրացնել), մի աշխատանք, որ առայժմ մեքենայացման չի ենթարկված և ձեռքով է կատարվում։ Մինչդեռ նույն այդ հողային պայմաններում արմատակալածները (շիշակներ) տնկելու դեպքում նորոգման աշխատանքներն զգալի չափով կրճատվում են, հազիվ թե տնկած տարածության 5—8%-ը նորոգելու լինենք։ Մեզ կարող են առարկել, որ մեկ անցքի (փոսի) մեջ զույգ կտրոններ տնկելով, նույնպես հնարավոր է այդ նորոգման աշխատանքները կրճատել։ Դա մասամբ ճիշտ է։ Բայց չէ՞ որ հաջորդ տարին արմատակալած այդ զույգերից մեկականները հանելու համար հսկայական աշխատանք է պահանջվում և, բացի դրանից, հանելու ընթացքում տեղում թողնվելիք արմատակալածի արմատները վիրավորվում են։ Այստեղ ևս կարող է առարկություն լինել այն իմաստով, որ արմատակալած զույգերից մեկականները փոխանակ հանելու, կարելի չէ նրանք (ավելորդները) հիմքից կտրել և փչացնել։ Դա արդեն միանգամայն անթույ-

լատրելի պետք համարել հենց այն տեսակետից, վոր ներկայիս ուժեղ տեմպերով զարգացող սոցիալիստական այգեգործությունը մեր առաջ հիմնադրվող նոր այգիները տնկանյութով ապահովելու լուրջ խնդիր է դնում. այդ նոր պահանջը բավարարելու համար մենք ամեն մի պիտանի կտրոն հաշվի պետք առնենք և տեղին ոգտագործենք:

2. Վոռոգվող շրջաններում, այդ նույն հողային, կլիմայական ու չոր պայմաններում, կտրոններն արմատակալելու ու զարգանալու համար, սեզոնի ընթացքում հաճախ 12—16 անգամ ջրելու կարիք է զգացվում (այդպես է նաև մեր ղռերի պայմաններում), հետևաբար կտրոնները տեղում տնկելու դեպքում մեծ քանակությամբ ջուր է պահանջվում, մինչդեռ նույն քանակությամբ կտրոնները տնկարանում տնկելու դեպքում պահանջվող ջրի քանակը մոտ 20—25 անգամ կրճատվում է: Արմատակալածները հիմնական տեղում տնկելու դեպքում 12—16 անգամ ջրելու փոխարեն բավական է լինում 7—10 անգամ միայն ջրել: Իսկ այդ հանգամանքը, մանավանդ վոռոգվող, բայց ջրասակավ շրջանների համար, կարևոր է այն տեսակետից, վոր տնտեսությունը միևնույն քանակությամբ ջուր ունենալու դեպքում հնարավորություն ունի մոտ 2 անգամ ավելի տարածություն ջրով ապահովելու, յեթե գցվելիք այգիների համար, վորպես տնկանյութ արմատակալածներ ոգտագործի, այլ վոչ թե սովորական կտրոններ:

3. Ջոր, քարքարոտ, աղքատ հողերում, ինչպես ասացինք, կտրոնները թույլ են աճում, նրանց շվերն առաջին տարին նվազ և կարճ են լինում, դրա հետևանքով վազերը հաջորդ տարին համեմատաբար նույնպես թույլ աճեցողություն են ունենում:

Այս բոլորը միաժամանակ պարզ ապացուցում են այն, վոր այգին աղքատ, քարքարոտ հողերում և չոր կլիմայական պայմաններում հիմնադրելու դեպքում կտրոնները տնկարանում տնկելն ունի խոշոր առավելություններ: Բացի

այդ առավելություններից, տնկարաններն ունեն նաև մի շարք այլ առավելություններ, որոնցից այստեղ կնշենք կարևորները.

1. Տնկարանների շնորհիվ մենք հնարավորություն ենք ունենում այգիներ տնկել նաև աշնանը, անգամ այն շրջաններում, որտեղ աշնանը կտրոններ տնկելը հաճախ հնարավոր չի լինում*): Դրա համար կտրոնները գարնանը տնկում են տնկարանում և ապա աշնանը նրանք, որպես արմատակալածներ, հիմնական տեղը փոխադրում.

2. Տնկարանները, փոքր տարածություններ բռնելով, միշտ էլ հնարավոր է լինում պարարտացնել և կտրոններն արմատակալման և աճեցողության լավ, նպաստավոր պայմանների մեջ դնել. մինչդեռ նույն քանակությամբ կտրոնները հիմնական տեղում աճեցողության և արմատակալման նույն պայմանների մեջ դնելու համար, անհամեմատ ավելի շատ պարարտանյութ ու աշխատանք է պահանջվում: Բացի դրանից, միևնույն քանակությամբ կտրոններ հիմնական տեղում խնամելու համար մոտ 20—25 անգամ ավելի աշխատանք ենք կատարում, քան տնկարանում, որ, ի հարկե, չի կարող ավելի չլինել կտրոնները տնկարանից հանելու և հիմնական այգում տնկելու աշխատանքներից, մանավանդ որ վերջիններս արդեն մեքենայացման են ենթարկվում.

3. Տնկարաններում օգտագործվում են նաև թույլ, կարճ և կասկածելի (որակի տեսակետից) կտրոններ, որպիսի կտրոններ հիմնական տեղում տնկելն անթույլատրելի է համարվում. Հետևաբար, կտրոնները տնկարանում խնայողաբար են օգտագործում, իսկ դա հնարավորություն է ստեղծում ցանկացած, մանավանդ թանկարժեք փոփոխակները (որոնց կտրոնների հաճախ խիստ պակասություն է զգացվում) կարճ ժամանակամիջոցում մեծ քանակությամբ

*) Տես Ցն. Ասլանյան. «Խաղողի այգու տնկելը և նոր տնկարկների խնամքը» էջ 54—56.

բազմացնել և պլանով նախատեսած տարածությունը անկանյութով լրիվ ապահովել.

4. տնկարանը լավ միջոց է նորատունկ այգիները ժամանակին նորոգելու համար.

5. տնկարաններում հեշտ է փոփոխակների պխտակավորում անցկացնել, վոչ ցանկալի փոփոխակները հիմնականներից զատելու նպատակով և այսպիսով իր ժամանակին շտկել մայր այգիներում վազերի պխտակավորման (տես էջ 41) ժամանակ բաց թողած սխալները և հիմնական տեղում մաքուր փոփոխակներ միայն տնկել:

Այս բոլորը գալիս են ապացուցելու, վոր կորդոններ տնկելու տեղը (տնկարան, թե հիմնական տեղ) ճիշտ կերպով վորոշելու հարցը նորատունկ այգիների հաջողության կարևորագույն և պատասխանատու նախադրյալներից մեկն է և պահանջում է գծվելիք այգիներին հատկացվելիք տեղի ու պայմանների բազմակողմանի ուսումնասիրություն: Անհրաժեշտ է վերև բերած դիտողությունները մեկ առ մեկ հաշվի առնել և ըստ այնմ պարզել՝ տնկարանում, թե հիմնական տեղում կորդոնները տնկել:

Խորհրդային Հայաստանում մինչև 1932 թիվը ներառյալ կորդոնները տնկում եյին բացառապես հիմնական տեղում, առանց տնկարաններ կառուցելու: Սակայն, ներկայիս, յերբ սոցիալիստական մեր այգեգործությունը զարգացման արագ վերելք և հուժկու թափ է ստացել ԽՍՀ Միության այգեգործական վողջ շրջաններում, այդ թվում նաև Խորհրդային Հայաստանում, յերբ Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1936 թ. նոյեմբերի 6-ի «Մրգաբուծությունը և խաղողաբուծությունը զարգանալու 1936 թ. աշնան և 1937 թ. պլանի մասին» վորոշման համաձայն, միայն 2270 հեկտար տարածությամբ նոր այգիներ պետք է հիմնադրել, վորոնց մեծ մասը տնկվելու յե գլխավորապես առապարային (դուեր) հողերում, վորտեղ այգիները գարնանը տնկելուց զատ, տնկում են նաև աշնանը, ապա այս դեպքում միանգամայն հասկանալի յե դառնում տնկարան կառուցելու անհրաժեշտությունը:

Նկատի ունենալով տնկարանի վերը հիշած առավելությունները, դաշտի հողերը, ոռոգման պայմանները և ագրոտեխնիկական մի շարք այլ հարցեր՝ Խորհրդային Հայաստանում հիմնադրվելիք այգիները, որպես կանոն, ներկայիս տնկում են տնկարանների միջոցով և, շատ բացառիկ դեպքում միայն՝ հիմնական տեղում, այն էլ խիստ սահմանափակ տարածությամբ։

Հիրավի, չեթե մինչև 1933 թիվը Խորհրդային Հայաստանում խաղողի տնկարան համարյա չի չեղել, ապա Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի վերը հիշած որոշման համաձայն, միայն 1937 թվականի գարնանը պետք է հիմնել 147,5 հեկտար տարածությամբ տնկարան, որը ըստ շրջանների և հատվածների բաշխվում է հետևյալ ձևով.

1937 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽԱՂՈՂԻ ՏՆԿԱՐԱՆՆԵՐ ՀԻՄՆԵԼՈՒ ՊԼԱՆԸ (ՀԵԿՏԱՐՆԵՐՈՎ)

№№ ըստ կարգի	Շրջաններ	Ընդամենը	Որից		Որից
			Խորհրդային տնտեսություններում	Կոլտնտեսություններում	Ամերիկյան մայրատներ
1	Ղամարլվի	29	5	24	—
2	Վեդու	30	10	20	—
3	Վաղարշապատի	23	15	8	—
4	Հոկտեմբերյանի	47	20	27	—
5	Յերևան քաղաք . . .	5	—	5	—
6	Մեղրու	1	—	1	—
7	Միկոյանի	1	—	1	—
8	Ազիզբեկովի	1	—	1	—
9	Կոտայքի	1	—	1	—
10	Ալլահվերդու	3	—	3	—
11	Շամշադնի	2	—	2	2
12	Իջևանի	2	—	2	2
13	Թալինի	2	—	2	—
14	Գորիսի	0,5	—	0,5	—
	Ընդամենը . .	147,5	50	97,5	4

III. ԽԱՂՈՂԻ ՏՆԿԱՐԱՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԽՆԱՄՔԸ

1. ՏԵՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Տնկարան կազմակերպելու սկզբնական կարևոր աշխատանքներից մեկը տեղի և հողի ընտրությունն է։ Տեղի հաջող ընտրությունը բացառիկ դրական նշանակություն ունի ապագայում մշակվող կտրոնների զարգացման համար. հաջող ընտրած տեղը կտրոնների արմատակալման ու կանոնավոր աճեցողության ամենալավ գրավականն է հանդիսանում։ Այս տեսակետից տեղի ընտրության վրա առանձին լուրջ ուշադրություն պիտի դարձնել։ Այդ ընտրությունը պիտի կատարվի հողի և միջավայրի նախնական ամենամանրամասն ու բազմակողմանի ուսումնասիրությունների հիման վրա, վորոնք պիտի պարզեն՝ ընտրվելիք տեղի դիրքը, եքսպոզիցիան, միկրոկլիմայական առանձնահատուկ պայմանները, վոռոգման հնարավորությունները, ջերմության ու լույսի պայմանները, տվյալ տեղում տիրապետող քամիների ուժը և ուղղությունը, հողի ֆիզիկական և քիմիական հատկությունները, ստորերկրյա ջրերի բարձրությունը, տնկարան կազմակերպելու նախնական անհրաժեշտ աշխատանքների չափն ու ծավալը և ագրոտեխնիկական մի շարք կարևոր պայմանները։ Այս բոլոր կարևոր խնդիրները նպատակահարմար է պարզել հատուկ կոմիսիայի միջոցով, մանավանդ յեթե տնկարանը մեծ տարածություն է բռնելու և վերջինս արմատակալածներով այգեգործական միքանի տնտեսություններ է սպասարկելու։

Տնկարանի համար պետք է ընտրել հնարավորին չափ հարթ, բարձր դիրք ունեցող, ստորերկրյա ջրերից ազատ տեղ։ Ցանկալի յե, վոր ընտրած հողամասը քիչ թեքություն ունենա դեպի հարավ, համենայն դեպս նա պետք է պաշտպանված լինի հյուսիսային և հյուսիս-արևելյան ցուրտ քամիներից, վորպեսզի այդ քամիներից մատղաշ տնկիները չտուժեն և կանոնավոր աճեն։ Վոռոգվող շրջաններում ընտրած հողամասը ջրով ապահովված պիտի լինի այն հաշվով, վոր վողջ վեգետացիայի ընթացքում, հարկ յեղած դեպքում, տնկարանին բավարար չափով ջուր տրվի։ Տնկարանի հողը փուխր, պարարտ և հեշտ տաքացվող պիտի լինի, հնարավորին չափ հեշտությամբ մշակվի։ Այդ պայմաններին համապատասխանում են հումուս պարունակող թեթև ավազային, կամ կավա-ավազային հողերը, վորտեղ կորոնները դյուրությամբ են արմատակալում և կանոնավոր զարգանում։ Տնկարանների համար ծանր, խոնավ և սառը կավահողերը, ինչպես և կրային ու քարքարոտ հողերը հարմար չեն, վորովհետև նրանք վոչ միայն դժվարությամբ են մշակվում, այլև հետաձգում են կորոնների կպչելու պրոցեսը, նման հողերում կորոնները թույլ են աճում, իսկ ծանր կավահողերում շվերը հաճախ լավ չեն փայտանում. հիմնական տեղը փոխադրելիս այդ արմատակալածներից շատերը չեն կպչում և փչանում են։

2. ՏՆԿԱՐԱՆԻ ՏԵՐԻՏՈՐԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Տնկարանի տերիտորիայի չափը պայմանավորված է տնկանյութի (արմատակալածների) այն քանակով, վորը պետք է արտադրի տվյալ տնտեսությունը, յելնելով պետության կողմից նրան տրված պլանային առաջադրանքից։ Տնկարանի տերիտորիայի կազմակերպումը պետք է ապահովի.

1. տնկարանում կատարվելիք ագրոտեխնիկական աշխատանքների մաքսիմալ դյուրացում.

2. արտադրական աշխատանքների մաքսիմալ մեքենայացում.

3. աշխատանքի բարձր արտադրողականություն.

4. արտադրվող պրոդուկցիայի (տվյալ դեպքում արմատակալածների) մինիմալ ինքնարժեք.

5. հաշվառքի մաքսիմալ պարզեցում։

Ցանկալի յե, վոր տնկարանի վողջ տերիտորիան տնտեսության մեկ համատարած մասսիվ կազմի և միքանի տեղ ցրված չլինի։ Տնկարանին հատկացվելիք վողջ տարածությունը բաժանում են արտադրական մի շարք վանդակների (клетки), վորոնք իրարից բաժանված են լինում 5 մետրանոց լայնությամբ ճանապարհներով։ Տնկարանի արտադրական վանդակների մեծությունը կախված է տեղի ռելյեֆից, տնկարանի մեծությունից, վոռոգման պայմաններից և ագրոտեխնիկական այլ խնդիրներից։ Ներկայումս արտադրական վանդակի ամենանպատակահարմար տարածությունը խոշոր տնկարանների համար ընդունված է 5 հեկտար, ընդ վորում յուրաքանչյուր վանդակ ունենում է 100 մետր լայնություն և 500 մետր յերկարություն։

Արտադրական վանդակներում տնկարանի շարքերը գցում են ըստ վանդակի լայնության այնպես, վոր այդ շարքերը 100 մետր յերկարություն են ունենում, և պետք աշխատել, վոր նրանք (շարքերը) հարևան վանդակի շարքերի շարունակությունը կազմեն։ Շարքերի նման դասավորությունն ունի այն առավելությունը, վոր հնարավորություն է տալիս ավելի նպատակահարմար ձևով ոգտագործել մեքենաներն ու անհրաժեշտ գործիքները։ Շարքերը տեղում վերջնականապես նշանակում են հողը նախապատրաստելուց հետո՝ տնկելուց առաջ, կամ տնկելու ժամանակ։ Յեթե տնկարանն այնքան մեծ է, վոր մոտ 50 հեկտար և ավելի տարածություն է բռնում, ապա նպատակահարմար է մի քանի (5—10) արտադրական հողաբաժիններ (производственные участки) կազմակերպել, վո-

րոնք իրարից բաժանվելու յեն 7 մետրանոց լայնությամբ ճանապարհներով։ Այս բոլոր աշխատանքները տեղում կատարելու համար պետք ե նախորոք հանել տնկարանի հատակագիծը (պլանը)։ Ինքնըստինքյան հասկանալի յե, որ արտադրական թե վանդակների և թե հողաբաժինների նշած չափերը, ինչպես և վանդակներում շարքերի յերկարությունն ու նրանց ուղղությունը՝ նայած տեղի հարմարության, ոռոգման հնարավորությանը և այլն, կարող են որոշ փոփոխությունների յենթարկվել։ Մասնավորապես ոռոգվող պայմաններում և տեղի թեքության դեպքում շարքերի թե յերկարությունը և թե ուղղությունը պետք ե հարմարեցրած լինի հողը կանոնավոր կերպով ջրելու պայմաններին։ Համենայն դեպս շարքերն այնպես պետք ե գցել, որ տնկարանի կանոնավոր ոռոգումը միանգամայն ապահովված լինի։ Ասել ե թե՝ շարքերն այնպես պիտի գցված լինեն, որ ջուրը շարքերի մեջ հեշտությամբ, բայց հանդարտ ու համաչափ հոսի, հողը չողողի և դյուրությամբ հողի մեջ թափանցի և, բացի դրանից, ջուրը նվազագույն չափով ծախսվի։ Ջուրը շարքերի մեջ արագ հոսելու դեպքում լավ չի ծծվում հողի մեջ, հողն անհրաժեշտ չափով չի խոնավանում և, մանավանդ, թեթև ավազահողերում հեշտությամբ ողողվում ե։ Ընդհակառակը՝ ջուրը շատ դանդաղ հոսելու դեպքում հողը չափից ավելի յե խոնավանում, մանավանդ շարքերի ակունքային մասերում. Ջուրը հեշտությամբ լճանում ե և, բացի դրանից, նա խնայողաբար չի ծախսվում։ Ջրի թե արագ և թե շատ դանդաղ հոսելու հետևանքն այն ե լինում, որ կորոնները լավ չեն արմատակալում, նրանց չնչին տոկոսն ե կպչում, կպածներն ել համեմատաբար թույլ աճ են ունենում։ Հետևաբար, շարքերին պետք ե տալ այնպիսի ուղղություն, որ ջուրը նրանց մեջ որոշ արագությամբ հոսի։ Բայց քանի որ ջրի հոսելու արագությունը մեծապես կախված

ե շարքերի թեքությունից, ուստի տնկարանի շարքերը վորոշ թեքություն պիտի ունենան։ Այդ թեքության սահմանումը, մի շարք այլ պայմաններից զատ, կախված ե նաև տնկարանի հողի հատկություններից։ Պինդ և ծանր կավային հողերը ջուրը դժվարությամբ են ծծում, հետեվաբար նման հողային պայմաններում շարքերին պետք ե տալ համեմատաբար փոքր թեքություն, վորպեսզի ջուրը դանդաղ հոսի և հողի մեջ լավ ծծվի։ Թեթև ավազահողերում ջուրը թեև դյուրությամբ ե ծծվում, բայց արագ հոսելու դեպքում ավազը հեշտությամբ վողողվում ե, ուստի այս դեպքում ևս շարքերին պետք ե չնչին թեքություն տալ, վոր ջրելուց ավազը չողողվի։ Քարքարոտ տեղերում ջուրը հեշտությամբ ե ծծվում հողի մեջ, և հողը համեմատաբար դժվարությամբ ե վողողվում, ուստի նման դեպքերում շարքերին կարելի յե տալ ավելի մեծ թեքություն, քան ծանր կավահողերում։

Շարքերի թեքությունը պինդ, ծանր կավահողերի համար կարելի յե ընդունել 0,001—0,003, քարքարոտ հողերի համար՝ մինչև 0,005—0,006. խիստ խայտաբղետ ռելյեֆի դեպքում, վորպես բացառություն՝ մինչև 0,008։ Այս նշանակում ե, վոր յեթե շարքի յերկարությունը 100 մետր ե, ապա նրա ակունքային մասը կարող ե բարձր լինել շարքի մյուս (ցածի) մասից,

0,001	թեքության	դեպքում	0,1	մետր	կամ	10 սմ.
0,003	»	»	0,3	»	»	30 »
0,005	»	»	0,5	»	»	50 »
0,006	»	»	0,6	»	»	60 »
0,008	»	»	0,8	»	»	80 »
0,01	»	»	1	»	»	100 »

Տնկարանի շարքերի թեքության վերև նշած սահմանումը (0,001—0,006) շատ կարևոր ե, մանավանդ Խորհըրդային Հայաստանի պայմաններում, վորտեղ այգեգործական գլխավոր շրջանները վոռոգվող են։

Անհրաժեշտ է հիշել, վոր նշած թեքության չափերը պետք է պահպանել տնկարանի շարքերի վողջ յերկարության յեվ վոչ թե միայն ծայրերի մասերի նկատմամբ։

Յեթե տնկարանի տեղը բավականին թեք է, ապա շարքերի ուղղության վորոշելը և նրանք տեղում նշանակելը պետք է հողաշինարարին հանձնել։ Յեթե տնկարանը համեմատաբար հարթ տեղում ենք կազմակերպելու, ապա շարքերի ուղղությունը հեշտ է վորոշել։

Փոքր տնկարանների (մի քանի հեկտար) տարածությունը պիտի բաժանել ուղղակի մեկ հեկտարանոց վանդակների, ապահովելով վերջինս անհրաժեշտ ճանապարհներով։ Վոռոգվող շրջաններում տնկարանի տերիտորիայի կազմակերպման ժամանակ առանձնապես հատուկ ուշադրություն պիտի դարձնել թե վոռոգիչ գլխավոր և թե յերկրորդական ցանցի կազմակերպման ու նրանց կառուցման վրա, ստեղծելով յուրաքանչյուր վանդակի համար կանոնավոր վոռոգման պայմաններ։ Այս բոլորից հետո պետք է անցնել տնկարանին հատկացրած հողի նախապատրաստման աշխատանքներին։

3. ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Մենք արդեն ասացինք, թե ինչպիսի տեղ և ինչպիսի հող պետք է ընտրել տնկարանի համար։ Սակայն ինչպիսի տեղում էլ վոր տնկարան կազմակերպենք և ինչպիսի հող էլ վոր նրա համար ընտրած լինենք, պետք է, նախ քան կտրոններ տնկելը, մի շարք կարևոր աշխատանքներ կատարենք ընտրած հողամասի վրա։

1. Յեթե վերջինիս վրա մացառներ, թփուտներ, կամ հին վազեր կան, ապա առաջին հերթին անհրաժեշտ է նրանք հիմնովին արմատախիլ անել հողից, դրանց արմատները հավաքել և հողն այդ բույսերից բոլորովին ազատել։ Այդ կարևոր է, մի կողմից՝ այն տեսակետից, վոր հնարա-

վորություն ենք ստանում հողը հետագայում կանոնավոր մշակելու և, մյուս կողմից՝ կորոններն ազատում ենք արմատային փտախտից, յեթե վերջիններս վարակված են յեղել հիշյալ բույսերը։

2. Պատահում է, վոր ընտրած հողամասի մեջ քարեր են լինում, վորոնք արգելք կարող են հանդիսանալ հետագա հողային աշխատանքների նորմալ ընթացքին, կոտրել հողամասում օգտագործվող մեքենաներն ու գործիքները, կամ գցել վերջիններիս աշխատանքի արտադրողականությունը։ Նման քարերը պետք է հավաքել ու հողամասից դուրս հանել։ Նույնը պետք է անել նաև հողը հիմնաշրջելու ժամանակ։

3. Այս աշխատանքները կատարելուց հետո հողամասը պետք է հարթել։ Անգամ հարթ հողամասերում տեղ-տեղ դար ու փոսեր են պատահում․ պետք է այդ դար տեղերը քանդել, փոսերը լցնել ու հարթել։ Դա, մի կողմից՝ կնպաստի հողի հետագա կանոնավոր վոռոգմանը և, մյուս կողմից՝ կհեշտացնի հողամասում կատարվելիք աշխատանքները։

4. Այնուհետև պետք է տնկարանի ամբողջ հողը հիմնաշրջել, այսինքն՝ վորոշ խորությամբ հողը պետք է շուռ տալ այնպես, վոր հողի յերեսի հարուստ մասն ընկնի տակը, իսկ տակի աղքատ մասը՝ վերև։ Բացառություն կարող են կազմել այն հողերը, վորոնք շատ փուխր են (ավազահողեր), և վորոնց ստորին ու վերին շերտերը կորոնները կպչելու և աճելու համար միատեսակ արժեք են ներկայացնում․ նման դեպքում շրջելու փոխարեն հողը կարելի յե ցանկացած խորությամբ միայն փխրեցնել (խորը փխրեցում) առանց շուռ տալու նրա շերտերը։ Հիմնաշրջման նպատակն է նպաստավոր պայմաններ ստեղծել կորոնների հաջող արմատակալման և զարգացման համար։ Հիմնաշրջման խորությունը կախված է տեղի կլիմայական և հողային պայմաններից։ Հարավային

չոր շրջաններում, վորտեղ թե օդի և թե հողի խոնավությունը պակաս է լինում, իսկ ջերմությունը բարձր, հիմնաշրջումն ավելի խոր պիտի կատարել, միջին հաշվով՝ 40—50 սմ։ Հուսիսային խոնավ և ցածր ջերմության շրջաններում հիմնաշրջումը համեմատաբար պակաս խորությամբ են անում (տես եջ 31), սակայն 30 սմ-ից վոչ պակաս։ Մեր պայմաններում անկարանի հողը պետք է հիմնաշրջել մոտ 40—50 սմ խորությամբ։ Հիմնաշրջումը կատարում են աշնան և ամառվա ամիսներին, իսկ վորտեղ հնարավոր է՝ նաև ձմեռը։ Ծայրահեղ դեպքում հիմնաշրջում են նաև գարնանը, հենց կորոնները տնկելու ժամանակ. դա, իհարկե, լավ չէ։ Պիտի աշխատել հիմնաշրջման աշխատանքները գոնե 1,5—2 ամիս նախքան տնկելն ավարտել, վորպեսզի հիմնաշրջված հողն այդ ժամանակամիջոցում բավականաչափ նստի և պատրաստ լինի կորոնները տնկելու համար։

Հիմնաշրջումը կարելի յե կատարել.

ա) հատուկ գութանների միջոցով (մեքենայական հիմնաշրջում).

բ) ձեռքով—բահերի, քլունգների, յերկաթե նգլների (լոմերի) միջոցով.

գ) պայթեցման միջոցով։

Այս ձևերից առավելապես ուցխոնալ, հեշտ և եժան ձևն է հանդիսանում մեքենայական հիմնաշրջումը, վոր, համեմատած հիմնաշրջման վերջին յերկու ձևերի հետ, ունի մի շարք առավելություններ, վորպիսի առավելությունների շնորհիվ, առաջին հերթին մեծ չափերով կրճատվում է հիմնաշրջման աշխատանքները կատարելու համար թե պահանջվող բանվորական ձեռքերի թիվը և թե անհրաժեշտ ծախսերի չափը։ Բացի դրանից, այդ ձևով գործածության մեջ դրված այդ ամենածանր աշխատանքն անհամեմատ ավելի արագ ընթացք է ստանում։ Մեքենայական հիմնաշրջման համար շարժիչ ույժ են ծառայում զանազան տիպի տրակ-

տորներ, շոգեքարշեր, էլեկտրոներգիան և այլն։ Ներկայումս ՍՍՀՄ-ում կիրառվում է գլխավորապես մեքենայական հիմնաշրջում. բացառիկ դեպքերում, այն էլ խիստ քարքարոտ տեղերում և լանջերում, հիմնաշրջման աշխատանքները կատարում են ձեռքով կամ պայթեցման միջոցով։ Սովետական Հայաստանում հիմնաշրջման աշխատանքները կատարում են էլեկտրականության միջոցով տրակտորների միջոցով և մասամբ ձեռքով։ Հիմնաշրջման աշխատանքներն էլեկտրականության միջոցով մեզ մոտ՝ Սովետ. Հայաստանում սկսվել են 1932 թվից, խորհրդ. III և IV տնտեսություններում, վորտեղ ներկայիս լայն ծավալ են ստացել և դրական խոշոր արդյունք են տալիս։

5. Յեթե հողն աղքատ է, ապա պետք պարարտացնելով է՝ օրգանական պարարտանյութ (գոմաղբ) տալ։

6. Հողի նախապատրաստական աշխատանքներից մեկն էլ հիմնաշրջված հողի մակերեսի հարթեցումն է։ Հիմնաշրջման հետևանքով հողի մակերեսը խորդուբորդ է լինում. այդ խորդուբորդությունները վերացնելու նպատակով անհրաժեշտ է հատուկ թիերի միջոցով հողի մակերեսը կանոնավոր հարթել։

Նախապատրաստական այս բոլոր աշխատանքները վերջացնելուց հետո հողը միանգամայն պատրաստ է կորոնները տնկելու համար։ Սակայն, նախքան տնկելու տեխնիկայի մասին խոսելը, անհրաժեշտ ենք համարում մի փոքր կանգ առնել, թե ինչ խորությամբ և ինչ խտությամբ պետք է կորոնները տնկարանում տնկել։

4. ՏՆԿԵԼՈՒ ԽՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Միևնույն պայմաններում կորոնները տնկարանում ընդհանրապես պակաս խորությամբ են տնկում, քան հիմնական տեղում, հետևյալ նկատառումներով.

1. Հնարավորություն է ստեղծվում արմատակալած-

ները տնկարանից հեշտությամբ և առանց նրանց ստորերկրյա հանգույցները կտրելու և կարճացնելու հանել ու հիմնական տեղը փոխադրել, մինչդեռ, յեթե կորոնները տնկարանում շատ խոր են (50 սմ և ավելի) տնկում, արմատակալածների հանելը շատ է դժվարանում և շատ հաճախ հանելու ընթացքում նրանց թե արմատները և թե ստորերկրյա հանգույցները կտրվում են, կամ շատ խոր վերքեր են ստանում, հետևաբար շատ խոր տնկելն անօգուտ մի աշխատանք է հանդիսանում.

2. տնկելու համար համեմատաբար կարճ կորոններ են պահանջվում, և այսպիսով տնկանյութը խնայողաբար է օգտագործվում.

3. կորոնների տնկելը, հանելը և մի շարք այլ աշխատանքներ զգալի չափով հեշտանում են ու համեմատաբար քիչ ծախսեր են պահանջում:

Հյուսիսային խոնավ և համեմատաբար ցածր ջերմության պայմաններում, վորտեղ անգամ հիմնական տեղում կորոնները (նաև արմատակալածները) ընդհանրապես ծանծաղ են տնկում, տնկարանում տնկելու խորությունը համարյա հավասար է լինում հիմնական տեղում տնկելու խորությանը:

Սակայն վերև նշած փաստարկումները չպետք է ի չարը գործադրել և աշխատել կորոնները տնկարանում չափից դուրս ծանծաղ տնկել: Հաջող արմատակալածներ ստանալու համար հարկավոր է տնկելու վորոշ խորություն պաշտպանել: Այդ խորությունը վորոշելու համար պետք է հաշվի առնել տեղի կլիմայական և հողային պայմանները: Հարավային չոր և տաք շրջաններում կորոնները համեմատաբար խոր պետք է տնկել (մոտ 35—45 սմ), նրանց արմատակալման համար խոնավության նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով: Նույն այդ պայմաններում չոր, քարքարոտ և անջրդի հողերում կորոններն ավելի

խոր պետք տնկել, քան համեմատաբար խոնավ կամ ջրարբի և պարարտ հողերում։ Ընդհակառակը, հյուսիսային խոնավ և ցածր ջերմության պայմաններում կորմներն ավելի ծանծաղ են տնկում (մոտ 25—30 սմ), վորպեսզի վերջիններիս արմատները հողի վերևի շերտում լինեն և իրենց զարգացման համար բավարար ջերմություն ստանան։ Խորության վորոշիչ է նաև այն հանգամանքը, թե ինչ յերկարությամբ կորմներ ունենք, մի կողմից, և, մյուս կողմից՝ թե ինչ հնարավորություն ունենք փոփոխակները ցանկացած քանակությամբ բազմացնելու։ Յեթե փոփոխակն ընդհանրապես թույլ աճեցողություն ունի և նրա մասերը շատ կարճ են, ապա տնկելու խորությունը պետք հարմարեցնել այդ փոփոխակի կորմների յերկարությանը (տես եջ 31)։ Թանգարժեք վորևե փոփոխակ կարճ ժամանակամիջոցում մեծ քանակությամբ բազմացնելու համար կարճ կորմներ են պատրաստում, հետևաբար, վերջիններս պակաս խորությամբ են տնկում։

Հարցը կոնկրետացնելով Խորհ. Հայաստանի պայմաններին՝ կորմները տնկարանում պետք տնկել մոտ 35—40 սմ խորությամբ։

Ինքնին հասկանալի յե, վոր հիմնաշրջման խորությունը չի կարող տնկելու խորությունից պակաս լինել, ընդհակառակը, նա միշտ էլ պետք ավելի լինի (առնվազն 5—10 սմ)։

5. ՏՆԿԵԼՈՒ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ

Տնկելու խտություն ասելով պետք հասկանալ, թե կորմների շարքերը, ինչպես և այդ շարքերում կորմներն իրարից ինչ հեռավորության վրա յեն գտնվում, կամ, այլ խոսքով ասած, հողի մեկ միավոր տարածության (որինակ՝ հեկտար) վրա վորքան կորմներ են տնկվում։ Կորմները տնկարանում տնկելու խտությունը կախված լինե-

լով մի շարք պայմաններից, տատանվում է բավականին լայն սահմաններում։

Շարքերի մեջ յեղած հեռավորությունը (միջշարքային տարածությունը) առաջին հերթին կախված է տնկարանի հետագա մշակության ձևերից։ Տնկարանի աշխատանքները մեքենայացման յենթարկելու համար, շարքերն իրարից համեմատաբար պիտի հեռու դասավորել՝ մոտ 1 մետր. այդ հեռավորությունը կախված է մեքենաների և գործիքների տեսակից ու նրանց մեծությունից, համենայն դեպս 80 սմ վոչ պակաս։

Ձեռքով մշակության դեպքում շարքերը կարելի յե ավելի մոտ գցել, այն է՝ մոտ 40—50 սմ։ Բացի դրանից, այս խնդրի լուծումը սերտ կախված է և նրանից, թե տվյալ շրջանում այգիները թաղում են, թե վոչ։ Այնտեղ, վորտեղ այգիները ձմրան սառնամանիքներից պաշտպանելու համար թաղում են, և վորտեղ արմատակալածներն աշնանը տնկարանից չեն հանում և, բնական է, վոր պիտի թաղեն, տնկարանի շարքերն ավելի հեռու պիտի դասավորված լինեն՝ մոտ 1 մետր, վորպեսզի արմատակալածները տեղում թաղելու համար հնարավոր լինի շարքերի միջից բավարար չափով հող վերցնել։ Միջշարքային տարածությունը վորոշելուց հետո, տնկելուց առաջ, կամ հենց տնկելու ժամանակ, վանդակները բաժանում են շարքերի և վերջիններիս ծայրերում փոքր ցցեր են խփում։ Այդ ցցերը ցույց են տալիս շարքերի յերկարությունը և նրանց ուղղությունը։

Շարքերում կտրոններն իրարից մոտ կամ հեռու տնկելը կախված է.

1. Հողի պայմաններից. փուխր, պարարտ, սննդանյութերով հարուստ հողերում կտրոններն իրարից ավելի հեռու պիտի տնկել, քան աղքատ և պինդ հողերում, վորտեղ կտրոնների աճեցողության համար պակաս նպաստավոր պայ-

մաններ կան. Ջրաբըի հողերում ավելի նոսր, քան չոր հողերում։

2. Փոփոխակի աճեցողությունից. միևնույն պայմաններում փարթամ աճող, փոփոխականների կորյաններն ավելի նոսր պիտի տնկել, քան թույլ, աճեցողներինը։

3. Կորյանների վիճակից. լավ և կանոնավոր աճած կորյաններն ավելի նոսր պիտի տնկել, քան թույլ ու բարակ կորյանները։ Այն կորյանները, վորոնք լավ չեն պահվել, կամ հեռու տեղից են յեկել ու ճանապարհին վորոշ չափով տուժել են, կամ նրանց կպչելու մասին կասկած է առաջանում, սովորականից ավելի խիտ պիտի տնկել (տես եջ 60)։ Դժվարությամբ արմատակալող կորյանները նմանապես խիտ պիտի տնկել։

Համենայն դեպս շարքերում կորյանների միջև թողնվելիք տարածությունը 5 սանտիմետրից պակաս և 15 սանտիմետրից ավելի չպիտի լինի. միջին թվով այդ տարածությունը 8—10 սմ է կազմում։ Խորհ. Հայաստանի Արարատյան դաշտավայրի պայմաններում տնկարանի շարքերը պիտի գցել իրարից 1 մետր (յերբեմն 1,25 մետր) հեռավորության վրա, վորպեսզի հնարավոր լինի աշխատանքները մեքենայացման յենթարկել և արմատակալածները կանոնավոր թաղել. շարքերում կորյանները կարելի յե տնկել իրարից մոտ 10 սմ հեռավորության վրա։

Վորպեսզի պարզենք, թե մեկ հեկտար տնկարան տնկելու համար վորքան կորյան է հարկավոր, պիտի շարքերում կորյանների մեջ թողնվելիք հեռավորությունը և միջշարքային տարածությունն արտահայտել մետրերով. ստացված թվերն իրար հետ բազմապատկել և ապա 10,000-ը (1 հեկտար հավասար է 10,000 քառակուսի մետրի) բաժանել ստացված արտադրյալի (բազմապատկումից ստացված թիվը) վրա. քանորդը (բաժանումից ստացված թիվը) ցույց կտա, թե տնկելու ավյալ խտության դեպքում վորքան կորյան է պահանջվում մեկ հեկտար անկարան

տնկելու համար։ Այսպես, օրինակ՝ յեթե շարքերը՝ պետք է դրվեն իրարից 80 սմ հեռավորության վրա, իսկ կորոնները շարքերում պետք է տնկել 10 սմ իրարից հեռու, ապա մեկ հեկտար տարածության վրա պետք է տնկել՝ 0,8×0,1=0,08. 10000:0,08=125000 կորոն։ Այդ հաշիվները հեշտացնելու նպատակով, անհրաժեշտ ենք համարում բերել հետևյալ տախտակը, վորտեղ ցույց է տրված, թե տարբեր խտության դեպքում վորքան կորոն է պահանջվում մեկ հեկտար տնկարան տնկելու համար։

Կորոնների միջև թողնված հեռավորությունը սանտիմետրերով	Միջշարքային տարածությունը սանտիմետրերով						
	40	50	60	70	80	90	100
	Պահանջվող կորոնների քանակը մեկ հեկտար տնկարանի համար						
5	500,000	400,000	333,333	285,714	250,000	222,222	200,000
8	312,500	250,000	208,333	178,571	156,250	138,889	125,000
10	250,000	200,000	166,667	142,857	125,000	111,111	100,000
12	208,333	166,667	138,889	119,047	104,167	92,593	83,333
15	166,667	133,333	111,111	95,238	83,333	74,074	66,667
20	125,000	100,000	83,333	71,428	62,500	55,555	50,000

6. ՏՆԿԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՆ

Կորոնները տնկարանում տնկում են կամ առուներով, կամ յերկաթե նիգերի (լոմերի), զանազան ձևի ցցերի միջոցով, կամ հատուկ շամփուրներով։

ա). Առուներով տնկելը.—Տնկելու համար նախապատրաստած հողամասի վրա, ծրագրած շարքերի տեղերում լարի կամ թոկի օգնությամբ, բահերով բացում են 25—30 սմ լայնությամբ և տնկելու խորությամբ առուներ։ Կորոնները առուների մեջ դասավորում են միմյանցից սահմանված հեռավորության վրա (տես եջ 92), ուղղահայաց կամ քիչ թեք դրությամբ, սակայն այնպես, որ

նրանք հենված լինեն առվի մեկ պատին, և առվից դուրս յուրաքանչյուր կտրոն առնվազն յերկու աչք ունենա: Կտրոնները դասավորելու հետ միաժամանակ, առուները հողով լցնում են, վոտքով լավ կոխկռտում (սա կարևոր է, մանավանդ անջրդի պայմաններում) և հողից դուրս յերկու աչք պահելով, կտրոնների ավելորդ մասը սեկատորով կտրում ու հեռացնում են (տես նկ. 20): Տնկելու աշխատանքները հեշտացնելու և արագացնելու նպատակով, պետք է առաջին շարքը տնկելու հետ միաժամանակ բացել յերկրորդ առուն, վորից հանած հողով լցնել առաջին առուն. յերկրորդ առուն տնկելիս, բացել յերրորդ առուն, վորից հանած հողը լցնել յերկրորդ առուն և այդպես շարունակ. հողամասի վերջին առուն կարելի յե լցնել այդ առվին



Նկ. 20. Կտրոնների առուներով տնկելը

մոտ ու հարմար տեղից վերցված հողով: Վերջին ժամանակներս առուների փոխարեն հատուկ գութանների միջոցով խոր ակոսներ են բացում, վորոնց մեջ կտրոնները նույն ձևով տնկում են և ապա գութանով տնկած ակոսը հողով լցնում: Այս ձևով տնկելու աշխատանքներն անհամեմատ ավելի արագ են ընթանում և քիչ աշխատավոր ձեռք է պահանջվում, քան բահերով (ձեռքով) տնկելու դեպքում:

բ) Տնկելը յերկաթե ձողերի, ցցերի միջոցով.—Յերկաթե ձողի կամ սուր ցցի հարվածով նշանած տեղերում

նեղ ու ցանկացած խորությամբ (նայած տնկելու խորությունը) անցքեր են բացում և յուրաքանչյուր անցքի մեջ մեկ կտրոն տեղավորում։ Այնուհետև նույն յերկաթե նիգը կամ ցիցը խրում են հողի մեջ տնկած կտրոնից 5—10 սմ հեռավորությամբ և թեք ուղղությամբ այն ձևով, վոր յերկաթե նիգի կամ ցցի ծայրը մոտենա կտրոնի հիմքին. ապա յերկաթե նիգը կամ ցիցը սեղմում են դեպի կտրոնը, փակելով առաջին անցքը (վորի մեջ գտնվում է կտրոնը) այնպես, ինչպես ցույց է տված Նկ. 21-ում։ Հողից դուրս յերկու աչք պահելով՝ կտրոնի ավելորդ մասը հեռացնում են։ Տնկելու այս ձևն ընդհանրապես տարածված չէ, նախ՝ վոր շատ աշխատանք է պահանջում և, բացի դրանից, յերկաթե նիգը կամ ցիցն անցքից հանելուն պես անցքը հողով լցվում է, վորով և տնկելու պրոցեսն զգալի չափով դժվարանում է։

գ) Շամփուրներով տնկելը.—Տնկելու այս ձևը կայանում է նրանում, վոր յերկաթե հատուկ շամփուրի յեղանաձև ճյուղավորված մասով բռնում են կտրոնի հիմքը և նշած տեղում ցանկացած խորությամբ նույն այդ շամփուրով կտրոնը խրում են հողի մեջ, հողից դուրս թողնելով առնվազն 1—2 աչք. այնուհետև մեկ ձեռքով կտրոնի ծայրը բռնելով, մյուս ձեռքով հողից շամփուրն զգուշությամբ հանում են այնպես, վոր կտրոնը տեղահան չլինի և պահպանված խորության վրա գտնվի, վորից հետո նույն շամփուրով հողը տալիս են կտրոնին (Նկ. 21)։ Տնկելու այս ձևը կիրառում են գլխավորապես փուխր ավազահողերում. պինդ ինչպես և քարքարոտ հողերում շամփուրով տնկելը նախ՝ բավականին դժվար է և յերկրորդ՝ կտրոնները տնկելու ժամանակ հեշտությամբ ջարդվում են կամ վիրավորվում։ Այս ձևը կիրառվում է նաև մեզ մոտ Խորհ. Հայաստանում կտրոնները հիմնական տեղում և թե տնկարանում տնկելու ժամանակ (խորհ. III—IV և I-ին տնտե-

սուլթյուններում և այլն)։ Կոռոգվող պայմաններում կտրոնները տնկելուց հետո պետք է ջրել։

Ինչ ձևով էլ կտրոնները տնկելու լինենք, միևնույնն է, անջրդի պայմաններում ընդհանրապես տնկած կտրոնները



Նկ. 21. Կտրոնների տնկելը շամփուրի միջոցով



Նկ. 22. Կտրոնների բուկ տալը տնկարանում

վերևից մի 3—4 սմ հողով ծածկում են կամ, ինչպես ասում են, բուկ են տալիս, վորպեսզի կտրոնի՝ հողից դուրս գտնված մասն ավելորդ ջուր չգոլորշիացնի և դրանից

կտրոնը չչորանա (տես նկ. 22)։ Վոռոգվող շրջաններում տնկարանը ջրելու համար անհրաժեշտ է շարքերին մոտ և նրանց զուգահեռ փոքր թմբեր պատրաստել, բուկ տալն այս դեպքում ավելորդ է։ Բուկ տալու և թմբեր պատրաստելու աշխատանքները հեշտությամբ ու արագ կերպով կարելի յե կատարել հատուկ տրակտորներով (որինակ՝ Վիդալի), վորոնց պիտի կցել բուկլից խոփերով կուլտիվատորներ։

Փոփոխակներն առանձին պետք է տնկել և վոչ մի դեպքում տարբեր փոփոխակների կտրոններ իրար չխառնել։

7. ՏՆԿԱՐԱՆԻ ԽՆԱՄՔԸ

Կտրոնների կպչելու և հաջող զարգանալու համար անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել տնկարանի խնամքի վրա, վորովհետև կանոնավոր յեվ ճիշտ ժամանակին կատարած խնամքը տնկարանի հաջողության ամենալավ գրավականն է։ Հիրավի, թերի կամ ժամանակին չկատարված խնամքը հեշտությամբ կարող է կտրոնների չորանալու պատճառ դառնալ։ Ահա թե ինչու անհրաժեշտ է մշտական հսկողություն ունենալ տնկարանում կտրոնների ամբողջ վեգետացիոն շրջանում։

Տնկարանի խնամքը կայանում է հետևյալում.

1. վոռոգվող պայմաններում տնկարանը պետք է ժամանակին և կանոնավոր ջրել, խույս տալով ջրելն ի չարը գործադրելուց, մանավանդ ամառվա վերջում և աշնան ամիսներին, յերբ շատ ջրելու հետևանքով տնկիները լավ չեն փայտանում, շվերը կանաչ են մնում. բացի դրանից, կտրոններն անգամ կարող են նեխել։ Սակայն և ջրի պակասության հետևանքով կտրոնները հեշտությամբ չորանում են և չեն արմատակալում. այս տեսակետից տնկարանը պիտի ջրել կարիք յեղած դեպքում։ Վեգետացիոն ընթաց-

քում ջրելու քանակը կախված է հողային և կլիմայական պայմաններից։ Կան տեղեր, վորտեղ 1—2 անգամ են ջրում, կան և տեղեր, վորտեղ 10—15 անգամ։ Խորհրդային Հայաստանի Արարատյան դաշտի պայմաններում տնկարանը ջրում են միջին թվով 8—10, բացառիկ դեպքում՝ 10—15 անգամ։

2. տնկարանի հողը պետք է փխրուն վիճակում պահել, վորպեսզի, նախ՝ հողից շատ ջուր չգոլորշիանա և յերկրորդ՝ օդը հողի մեջ հեշտությամբ թափանցի։ Թե ջրելուց և թե անձրևներից հետո հողի յերեսը պնդանում է և հեշտությամբ կեղևակալում։ Անհրաժեշտ է կուլտիվատորներով, միջշարքային տարածությունները հարկ յեղած դեպքում կանոնավոր փխրեցնել (սեզոնի ընթացքում 4—6 անգամ). պետք է ձեռքով զգուշությամբ փխրեցնել և կորոնների միջև յեղած տարածությունը. պետք է զգույշ լինել, վորպեսզի փխրեցման ժամանակ կորոնների շվերը չվնասվեն, չպոկվեն.

3. տնկարանում յեղած մոլախոտերը պետք է վոչնչացնել և հողը միշտ մաքուր վիճակում պահել.

4. ժամանակին պայքար մղել տնկարանը սնկային հիվանդություններից և վնասատու միջատներից զերծ պահելու համար։ Հաճախ կորոնների մատղաշ տերևներն ու շվերը վարակվում են միլդյու (չոռ) կոչված սնկային հիվանդությունով. անհրաժեշտ է այդ հիվանդության դեմ սեզոնի ընթացքում տնկարանը մեկ տոկոսանոց բորդոյան հեղուկով մեկ-յերկու անգամ սրսկել։ Այն շրջաններում, վորտեղ օիդիում (սև) հիվանդությունը հաճախ է պատահում, տնկարանը 1—2 անգամ (յերբեմն ավելի շատ) ծծմբով պետք փոշոտել։ Թե սրսկելը և թե փոշոտումը կարելի յե կատարել մոտորավոր մեքենաներով, վորոնք ձեռքի ապարատների և ծծմբահար փուքսերի հետ համեմատած, անհամեմատ ավելի արագ են աշխատում, քիչ ծախս ու աշխատավոր ձեռքեր են պահանջում.

5. բուն տված տնկարաններում ամռան յերկրորդ կեսին անհրաժեշտ է հետ տալ կորոնները ծածկող հողը, վորպեսզի շվերի հիմքերը կանոնավոր փայտանան.

6. ամառվա յերկրորդ կեսին կամ աշնանը (նախ քան տերևաթափը) անհրաժեշտ է պիտակավորել այն տնկիները, վորոնք տվյալ հողամասում կամ շարքում խառնուրդ են կազմում, վորպեսզի տնկիները հանելու ժամանակ դրանք զատվեն և հիմնական տեղում ցանկացած փոփոխականների տնկիները միայն տնկվեն։

7. այնտեղ, վորտեղ այգիները թաղում են, կամ յեթե չեն թաղում, բայց ձմռան սառնամանիքները համեմատաբար խիստ են լինում, և յեթե տնկարանից տնկիներն աշնանը չեն հանում և նրանք տնկարանում պիտի ձմեռեն, տնկարանը տերևաթափի ժամանակ, մոտավորապես հոկտեմբերի վերջերին, կամ նոյեմբեր ամսի առաջին կեսին պիտի կանոնավոր թաղել՝ ձմռան սառնամանիքներից ազատելու նպատակով։

Կանոնավոր խնամքի և բարենպաստ պայմանների (հող, կլիմա, կորոններ և այլն) դեպքում տնկած կորոնների մոտ 90%-ը (անգամ ավելի) կպչում է, ու հաջող կերպով զարգանում. նրանց շվերը մոտ 0,8—1 մետր, անգամ ավելի յերկարություն են հասնում (տես նկ. 13)։ Մեր սոցիալիստական այգեգործության բնագավառում ծավալված և ավելի ևս ծավալվող սոցմրցման և ստախանովական շարժման առկայության պայմաններում ավելի մեծ հնարավորություն է ստեղծվում բարձրացնել կորոնների կպչելու տոկոսն ու շվերի ավելի ուժեղ աճեցողությունը, վորոնք այնքան ազդում են հետագա բերքատվության բարձրացման վրա։

8. ՏՆԿԻՆԵՐ ՀԱՆԵԼԸ, ՏԵՍԱԿԱՎՈՐԵԼՆ ՈՒ ՊԱՀԵԼԸ

Տնկարանից տնկիները հանում են նույն աշնանը, կամ հաջորդ գարնանը, հազվագույն դեպքում միայն, այն էլ,

երբ տնկիները շատ թույլ են զարգացած լինում, վերջիններս թողնում են տնկարանում ևս մեկ վեգետացիոն շրջան։

Աշնան հանելն ունի մի շարք առավելություններ. նախ՝ տնկարանը շուտ է ազատվում, որով հնարավորություն ենք ստանում հենց աշնանից տնկարանում հաջորդ տարվա համար նախապատրաստական աշխատանքներ տանել, երկրորդ՝ թեթևանում են գարնան տնկման կամպանիայի աշխատանքները, երրորդ՝ հնարավորություն ենք ունենում տնկիները հարկ եղած դեպքում ժամանակին հեռավոր վայրեր ուղարկել։ Իհարկե հասկանալի է, որ եթե տնտեսությունն այգիներ պիտի տնկի նաև աշնանը, ապա անկախ թված առավելություններից, տնկիները հանում են աշնանը։ Տնկիների աշնան հանելը պետք է սկսել այն ժամանակ, երբ նրանց տերևների մեծ մասը թափվել է, և վերջացնել ձմռան սառնամանիքներն սկսելուց առաջ։ Գարնանը տնկիները հանում են, երբ արդեն օրերը բավականաչափ տաքացել են և տնկարանի հողն այնքան է չորացել, որ հնարավորություն է տալիս այդտեղ աշխատանք կատարել. համենայն դեպս տնկիները հանված պիտի լինեն աչքերի բացումից առաջ։

Նկ. 23. Տնկիների խուրձ

Տնկիները հանում են ձեռքով (բահերով), կամ հատուկ գութաններով. վերջին դեպքում աշխատանքներն անհամեմատ արագ են կատարվում և քիչ աշխատավոր ձեռք է պահանջվում։ Հանած արմատակալածները դարսում են բաց փոսիկների, տնկիները մեկ առ մեկ ուշա-

դրությամբ նայում և նրանցից հիվանդները, վնասվածները, շատ թույլ շվեր ու արմատական սիստեմ ունեցողները խոտանում են։ Ուժեղ տնկիները, որոնց շվերը կանոնավոր փայտացած են (հիմքից առնվազն 10 սմ երկարությամբ), ինչպես արմատները լավ զարգացած, դասում են առանձին և նրանք օգտագործում հիմնական տեղում տնկելու համար։ Համեմատաբար թույլ տնկիները նպատակահարմար է նորից տնկարանում տնկել և մեկ վեգետացիոն շրջան այդտեղ մշակելուց հետո միայն հիմնական տեղը փոխադրել։ Տեսակավորման ժամանակ տնկիների շվերն ու արմատները ծայրերից մի փոքր կտրում են։ Տեսակավորված տնկիներից խրձեր են կազմում (յուրաքանչյուրի մեջ 100 հատ) այնպես, ինչպես ցույց է տրված նկ. 23-ում։ Այս խրձերը մինչև հիմնական տեղում տնկելը*) կամ մի այլ վայր ուղարկելն անհրաժեշտ է կանոնավոր պահել, որն արվում է նույն ձևով. ինչպես կտրոնների պահելը և ուղարկելը։

---

*) Տես Ե. Ասլանյան «Խաղողի այգու տնկելը և նոր տնկարկների խնամքը»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I ԳԱՂԱՓԱՐ ՎԱԶԻ ԲԱԶՄԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ 3

1. Սեռական բազմացում 3
2. Անսեռ կամ վեգետատիվ բազմացում 4
ա) Բազմացումն անդալխի միջոցով 5
բ) Բազմացումը պատվաստի միջոցով 9

II ՎԱԶԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ 24

1. Կտրոնների տեսակները 24
2. » արմատակալման պայմանները 28
3. » յերկարությունը 31
4. » պատրաստման (վերցնելու ժամանակը) . . . 33
5. » ընտրությունը 34
ա) Փոփոխակների ընտրությունը 35
բ) Վազերի ընտրությունն ու պիտակավորումը 41
գ) Մատերի ընտրությունը և կտրոններ պատրաստելը . 46
6. Կտրոնների պահելն ու փոխադրելը 50
7. » պիտանիությունը ջոկելու յեղանակը . . . 58
8. » նախապատրաստումը տնկելուց առաջ 60
9. Կտրոններ տնկելու հարմար ժամանակը 71
10. Կտրոնները տնկելու տեղը 73

III ԽԱՂՈՂԻ ՏՆԿԱՐԱՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԽՆԱՄՔԸ 82

1. Տեղի ընտրությունը 82
2. Տնկարանի տերիտորիայի կազմակերպումը 83
3. Հողի նախապատրաստումը 87
4. Տնկելու խորությունը 90
5. » խտությունը 92
6. » Տեխնիկան 95
7. Տնկարանի խնամքը 99
8. Տնկիները հանելը, տեսակավորելն ու պահելը 101

Տեխ. խմբագիր՝ Հ. Մուրադյան
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան
Գլավլիտի լիազոր № 1169
Հրատ. 409, տիրաժ 2000, պատվեր 245
Հանձնվել է արտադրության 1937 թ. մարտի 4-ին
Ստորագրված է տպագրելու 1937 թ. ապրիլի 19-ին

Գյուղհրատի տպարան, Յերևան, Նալբանդյան № 11

19401

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0008397

ԳԻՆԸ 1 Ռ. 80 ԿՈՊ.

219

А II / 18600

Е. АСЛАНЯН

Размножение виноградных лоз посредством отрезков

Сельхозгиз 1937 Ереван